

ԱՐՄԱՆՅԱՆ

ԲԼՈԳԻ
ՊԱՍՏՈՐԸ



ՀԱՅԱՍՏԱՆ

087 · 1

Մ - 28



23 JUN 2009



ԴՊՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

087.1
J-28

Պ. Ա. ՄԱՆՏԵՎԻՔԻ

Ա. Հ.

ԲՆԱԳԵՏԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԸ

Թարգմ. Ս. ՍՈՒՐԵՆ. ԱԶՅԱՆԻ
Նկարները Ա. Ն. ԿՈՄՈՐՈՎԻՔԻ

ՀԱՅՊԵՏՏՐԱՍ

ԹԵՐԵՎԱՆ


1940

Թարգմանված ե Համեմատ կկ կից «Դետիզուատի»-ի 1937 թ.
հրատարակությունից:



П. А. МАНТЕЙФЕЛЬ
РАССКАЗЫ НАТУРАЛИСТА

Гиз АРМ. ССР, Ереван, 1940



ՀԵՏԱՔՐԹԻ ԿՅԱՆՔ

(Առաջարանի փոխարեն)

Մի անգամ Մոսկվայի կենդանաբանական այգու պատուի բիոլոգների հետ Սիբիրում զբունելիս յետուրժ յեկան կան գետի ափերը: Այս գետը թափվում է Յենիսեյի մեջ: Նա նշանակալից կերպով հարստացրեց մեր գիտությունը կենդանիների կյանքի նկատմամբ:

Նովակ նստած մենք լողացինք գետի յերկայնքով և ապա քայլեցինք մարգագետինների անձայրածիր ազատ տարածությունների վրա և վերջապես կանգնած ելինք լեռնային ապառաժների հանդեպ, վորոնց միջով կատաղի հոսանքով ոլտնում եյին առաջ այնպես հանդարտ հոսող կան գետի ջրերը: Լեռներում մեզ հետաքրքրեց մի վոչ մեծ կրծող գազանիկ—ծղրտան կամ խոտաղիր կոչված: Այդ գազանիկը առնետից մեծ չե, իսկ աղգակցությամբ նա ավել-

Ա մոտ ե նապաստակին: Նույնպիսի թափամազ թաթիկներ ունի և վերևի յերկարք կտրիչ ատամներ առջևում է Միայն ականջները փոքր են և բնավ պոչ չունի:

Լեռներում՝ կան գետի մոտ՝ մենք յերեան հանեցինք խոտաղիրների մի ամբողջ գաղութ: Մի քանի գաղանիկներ ապրում եյին իրարից վոչ հեռու: Յերբ մենք լեկանք այդ տեղերը, խոտաղիրները ձմռան համար խոտի պաշար եյին պատրաստում: Նրանք ատամներով կտրում եյին դալարախոտի ցողունները կամ մացառուտների շյուղերը և խնամքով դարսուում եյին իրենց ստորերկրյա բների առաջ, քարերի մեջ, դրանք չորացնելով արեի տակ: Պատրաստի խոտը նրանք կրում եյին մեծ քարերի պատվարիտակ և այնտեղ բարդում եյին փոքրիկ դեղերի:

Մենք ուշադիր զննեցինք այդ կերապաշար դալարախոտերը, վոր ծղրտանը պատրաստել եր ձմռան համար: Զարմանալի յե, թե ըստ սննդարարության վորքան արժեքափոր եյին այդ խոտերը: Քարերի տակ գարսված դեղիկների մեջ կարելի յեր դտնել և սպիտակուցներով հարուստ բակլայաբույսեր և շատ ուրիշ բույսեր, վորոնք ապահովում եյին բազմաշան գագանիկների համար բավականաշափ վիտամիններ, ճարպային նյութեր, ածխաջրեր և բուժիչ միջներ:

Հետաքրքիր եր դիտել, թե ինչպես այդ խոտագիրները իրար եյին անցնում, յեթե հանկարծ ամպերը ծածկում եյին յերկնքի յերեսը և սկսում եր կաթկաթել անձրեւ: Փոքրիկ գաղանները շտապով բերաններն եյին առնում կիսով չափ չորացած ցողունները և թագցնում եյին վորեւ ծածկված տեղում: Թվում եր, թե այդ փոքրիկ մշակները կարողանում են մտածել: Բայց դա, ինարկե, այդպես չե: բանը արտաքին զրգումն հետևանքով առաջացած ոեֆլեքսի մեջ ե: Անձրեւ, վորը փշացրել ե ձմռան համար պատրաստած պաշարը, զոյտության դաժան կովի շատ հաղարամյակների ընթացքում խոտագիրների մեջ առաջացրել

Ե վորոշակի մի ոեֆլեքս. յերբ ջրի կաթիլներն սկսում են գետին ընկնել, պետք ե կերը թագցնել ապահով տեղում: Իսկ նրանք, վորոնք արդ չեն արել ձմեռը կոտորվել են սովից:

Տայգայում մեղ հանդիպեց ծեր ձկնորս Մատվեյ Գրիգորիչը - նշանավոր մի վորսորդ և խոհուն բնագետ: Նա շատ հետաքրքիր բաներ պատմեց մեզ: Զկնորսը դիտում և ուսումնասիրում եր բնությունը, գնելով պարզ, սակայն հետաքրքիր փորձեր: Մի անգամ նա տեսնում ե բըզուվունանի բվեճ, թփի վրա: Մատվեյ Գրիգորիչը զգուշությամբ պատվում ե թփի շուրջը և այդպիսով հարկադրում ե իրեն հետևող բվեճին գլուխը շրջել ավելի քան մի լրիվ պտույտ: Այդպես վարվելիս ծեր ձկնորսը հետաքրքրվել եր, թե թոշնի վիզը ունի՞ վոսկորիկ, թե նրա գլուխը պարտվում ե սոսկ մորթու վրա:

Յես ջանասիրությամբ բացատրեցի Մատվեյ Գրիգորիչի չին, վոր թոշունների վիզը ընդհանուր առմամբ շատ դյուրաշարժ ե, հատկապես բուերինը: Յես մեկնաբանեցի իմ հետաքրքրասեր խոսակցին, վոր թոշունների գլուխը վզի հետ միացած ե մեկ ուսուցիկ հողով և վոչ թե յերկու-



առվ, ինչպես մարդունը և ալլ կաթնասուններինը: Բացի այդ,
թոշնի վզի յուրաքանչյուր առանձին վող կարող ե շատ
ազտա փոխել իր տեղը: Այս բոլորը նոր եր Մատվեյ Գրի-
գորեիչի համար, անինչ, նա, վորպես իսկական բնագետ,
իր փորձն եր արել բրդու-վոտնանի բվեճի հետ և այդ-
պիսով պարզել եր, վոր արդ թուշունը կարող ե իր գլուխը
պատել մոտավարապես մի ամբողջ շրջան և մի քառորդ:

Ծեր ձեխորսը մեզ ցույց տվեց այն քարափը, վորի
վրա մեր գալուց քիչ տուած մարտնչել եյին յերկու վիթ-
խարի արջեր: Եգ արջը, վորի պատճառով առաջացել եր
այդ տուր ու դմիոցը, հանգիստ նստել եր և դիտում եր
կոկվը, կարծես բնով չնկատելով լերկու հսկաների վոռ-
նոցը և ահավար ույժի հարվածները, վոր միմյանց հասցնում
եյին Փրչոտ ախոյանները: Կոկվը տեղի ուներ ուղղաձիգ
իջնող քարտփի շրթին: Մի՛ առանձնապես ծանրակշիռ
թաթալուշի հարվածից հետո ավելի թույլ հակառակորդը
Ալրվեց քարտփի շրթից: Յերկար նա թափալգլոր յեկավ
զառիթափի յերեսով, իր հետ ցած տանելով քարերի կույ-
տը: Վոտքի կանգնելով, հաղթված ախոյանը ախուր նայեց
վերև, վորտեղից՝ քարտփի շրթից վայր հակված՝ նրան ու-
շովիր հետեւում եր հաղթողը: Տեղում փոքր ինչ կանգնե-
լուց հետո հաջողագութիւնը շարդված քայլվածքով քարշ
գոլով հեռացել եր կոկի վայրից:

Ափից վոչ հեռու, գառիվայր լանջի կատարին կանգ-
նել եր Մատվեյ Գրիգորեիչի վրանը: Հենց այստեղ եր
տեղի ունեցել անսպասելի հանդիպումը, վորի մասին նա,
հավանորեն, շուտ չի մոռանա: Ինչպես ե լինում, գիշերով
ծերունին դաւրս ե գոլիս վրանից, վորպեսզի կարգի բե-
րի մուտքի մոտ վառվող խարույկը: Խորիվը վերջանալու
վրա յերև Մատվեյ Գրիգորեիչը ուղղվում ե դեպի՝ անտառ
գառտփայտեր բերելու: Մի մեծ գիրկ խորիվ հավաքելով,
նա դանդաղ յետ ե դառնում, մեկ ել՝ ցած յեղեգնուտի այն



Գագանը սեղմեց ծերուկին առջևի քարերով:

կողմից նրա դեմ դուրս ե գալիս մի մութ ֆիզուրա: Ահա-
գին ուրվագծերը ձուլվում եյին խավարի մեջ: «Ճերեի թե-
իշաւծյամ ե», — մտածեց Մատվեյ Գրիգորեիչը և բարե-
սրտորեն ձայն տվեց անկոչ հլուրին: Բայց նա սխալվեց: Այդ
իսկ բոպեյին մի ինչ վոր գաղան փաթաթվեց ծերունուն
և սեղմեց առջեի թաթերով: Դա մի վիթխարի արջ երբ
Յեզ չիներ նրա դրկի խոիվը, ծերունու բանը պրծած եր:

Առաջին իսկ հատու շարժման հետ թե գաղանը և թե
մարդը կորցրին իրենց հավասարակշությունը — նրանք
լերկուն ել ցած գլորվեցին զարիվայր լան ջով դեպի զետը
և մի բոպեյից անհետացան նրա արագընթաց ջրերում: Մի-
այն ջրի տակ արջը բաց թողեց իր զոհին, իսկ հոսանքը
մի ակնթարթում նրան քշեց մի կողմ: Մատվեյ Գրիգորե-
վիչը զետի հատակում շոշափում է մի մեծ ծուռ կոճղ,
ձեռքերով կառչում դրան և զգուշությամբ ջրից դուրս հա-
նում քթի ծայրը: Յերեք — չորս մետր հեռու, հոսանքով
ցած մի քարի յե կառչում և գաղանը: Զրի մակերեսից
դուրս յերեռում եր նրա գլուխը: Արջը ուշի ուշով նախում ե-
ր շուրջը — արդյոք ջրի յերես դուրս չի գա մարդը: Հետո
նա դանդաղ ափ ե բարձրանում. նրա մորթուց ջրի առատ
շիթեր են իջնում: Կանդնելով յետի վոտների վրա, դա-
ղանն սկսում ե աղմուկրվ ոդ քաշել քիթը, բայց և այն-
պես չի կարողանում վորոտ մարդկային հոտը: Վերե-
գում, թմբի վրա նարոնում ե ծերունու հետքը. դա Մատվեյ
Գրիգորեիչի թողած հետքն եր, յերբ նա անտառ գնաց
խոիվ բերելու:

Սպասելով ելի մեկ — յերկու բոպե, մինչև վոր արջը
անհետացագ թփերում, վորսորդն զգուշությամբ մոտեցավ
վրանին և այնտեղից դուրս բերեց հրացանը: Նա իր շուր-
ջը դիտեց, հարմար դիրք բռնեց և սկսեց արջին մար-
տահրավեր սար, ամենաթունդ հայհուանքներ հասցնելով
նրան:

— Համա, վորքան խորամանկ ե անիծյալ գաղանը,—
ասաց իր պատմության վերջում Մատվեյ Գրիգորեիչը: —
Ինչ արի, դուրս չեկավ իմ դեմ ծուռթաթը: Իսկ մթու-
թյան մեջ, թփի յետեկց վրա պրծնել — միթե դա շնորհք ե-
Այս պատմությունը սաստիկ հետաքրքրեց իմ պա-
տանի ուղեկիցներին: Յես պատմեցի նրանց, վոր վոչ
բոլոր արջերն են հետապնդում մարդկանց և վոր ալզպի-
միներն ընդհանուր առմամբ շատ հազվադեպ են պատահում:
Սակայն կան գետի մոտերքում ապրող արջերը առանձնա-
հատուկ գաղաններ են: Հենց այդ վայրում զաժան կոփշ-
ներ են տեղի ունեցել կարմիր զորքերի և Կոլչակի նահան-
ջող հրոսակախմբերի միջև: Թե մեկ և թե մյուս կողմից
շատ զոհեր են յեղել: Յեկ ահա այդ ժամանականից Կանի
արջերը առել եյին մարդկային մսի համբ: Սովորաբար ար-
ջը զգույշ ե և մարդու հանդիպելիս աշխատում ե շուտով.
Կորչել նրա աչքից:

Գետափով առաջ գնալով, մենք հաճախ գտնում եյինք
ստերլետ ձկան զլուխներ: Դրանք ջրասամույթի ճաշկե-
րույթի մնացորդներն եյին — մի գաղանի, վորն առանձնա-
պես հետաքրքրում եր մեզ. չե վոր մեր Խորհրդավին Մի-
ության շատ և շատ մասերում հիմա շատ հազվադեպ ե-
պատահում ջրասամույթը: Ձկնորսը մեծ հարգանքով եր վե-
րաբերվում ջրասամույթին, ինչպես իր հավատարիմ դաշ-
նակցին: Բանն այն ե, վոր ձմեռելու համար ստերլետ ձու-
կը խոր փոսեր և դտնում գետի հատակին և այնտեղ պառ-
կում ե մեծ կուլտերով: Ջրասամույթը հեշտությամբ յերե-
վան ե հանում ստերլետի այս ձմեռանոցները և մոտեր-
քում, գետափին ժամանակավոր բուն և փորում իր համար:
Հետեւ զավանին, Մատվեյ Գրիգորեիչը առանց սխալ-
վելու վորոշում ե այն տեղը, ուր պետք ե սասույցը կոտ-
րել, վորպեսզի ավելի մեծ քանակությամբ ստերլետ վոր-
ած: Իսկ յերբ ձկի պաշարը ձմեռոցի փոսում սկսում ե

վերջանալ, ջրասամույրը նոր տեղ ե անցնում: Զինորսը վերստին գտնում ե նրան՝ նոր հետքով—սահրետի մի այլ ձմեռոցի կողքին:


Բավական ե մի անդամ գիշերել ավագուստներում, վորպեսզի հառկանալի լինի, թե վորքան սխալ ե այն կարծիքը, թե կյանքը անապատում և տմայի տափաստաներում իբրև թե աղքատիկ ե և անհետաքրքիր: Մի գիշերվա ընթացքում, մանավանդ լուսադեմին, յեթե չկաքամի, բազմաթիվ այլկայլ կենդանի եակներ—կրիաներ, ոձեր, մողեսներ, միջատներ—սողում են ավազի վրայով, նրա լոյնքն ու յերկայնքը նկարազարդելով ամենատարորինուկ հետքերով:

Ամուշաբարյա գետի ստորին հոսանքի անապատներում մեզ ամենից շատ հետաքրքրեցին շնաձանները— հողվածոտանի այս պարագիտները սարդանմանների դասից, Ուղտի կամ շան վոտներից վեր բարձրանալով, նրանք կպչում եյին կենդանու փորին, ծծում նրա արյունը և առաջ կերպով տողում: Անապատներում հազվագետ են հանդիպում կաթնառունները և այստեղի շնաձանները ընդունակ են սովել մի քանի ամիս միանվագ, մոշավայրու հատու կենտ թփիկների շվաքում նստած: Ըստվորում շնաձաններն այսպես սաստիկ են չորանում, վոր քամին հեշտությամբ տանում ե մեծ տարածություններ մանր ավազի հետ միասին: Այս ճանապարհով նրանք ընկնում են այնպիսի տեղեր, ուր գետինը ծածկված ե կանաչով: Իսկ այնտեղ, ուր խոտե բուսնում, անկասկած կաև ջուր: Հենց այդ ուղղությամբ եր ուր ջուր ու խոտ կա, միշտ ձգտում են նապատակները, ջերանները և այլ կաթնառուն գեղադանիներ, վարոնց արյունով մնանալ են շնաձանները: Մի քանի չորացած—ցամաքած շնաձաններ, նման ծառի կե-

ղեի թիթեղիկ, քամին ավազի հետ զցեց իմ մորուքի վրա: պարազիտներն իսկույն եեթ ուղղեցին իրենց ծալած թաթիկները և փութացին մազերով վերև բարձրանալը ձգտելով հասնել մարթուն և կոչել ու ծծել արյունու:

Զարմանալի համառաւթյամբ շնաձաններն անապատում հետապնդում են կենդանիներին, փութալով նրանց յետեւ վից գրեթե կընկալու: Այսպիսի համառաւթյունը յես հարկադրված յեղա փորձել և ինձ վրա: Մի անգամ մոշավայրու թփի մոտավ անցնելիս յես նկատեցի, վոր նրանից անջատվեցին լերեք շնաձաններ և արագ-արագ վազեցին իմ յետեւից, տաք ավազի վրա թողած հետքերով: Վորպեսզի հնարավորություն ունենամ դիտելու, յես գանդաղեցրի քայլերս: Վորոշ ժամանակ հետո դրանց միացան ելի մի քանի փոքրիկ պարազիտներ և նրանք բոլորն առանց շեղվելու վազում եյին իմ թաղած մի հետքից մլաւը: Հերիք եր, վոր յես կանգ առնեյի մի քանի ըոսի—և պարազիտներն արգեն սողում ելին վոտներիս վրայով: Յեթե վորեւ մեկը ինձ մոտ՝ վրան եր զալիս առանց հատուկ նախազգուշությունների, քիչ միջոց հետո նրանց հետքերով գալիս եյին և շնաձանները, և այն ժամանակ նրանցից չկար վոչ մի փրկություն:

Ինչպես տեսնում եք, կյանքը հետաքրքիր ե մինչեւ խոկ անապատում:



ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԽԵԼԱՄՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեզնից ով չի հիշում գորշ գայլի, խորամանկ աղվես-քուրիկի և թափամազ ու ծանրաշարժ արջի մասին։ Այդ հեքիաթների ազգեցության տակ շատերը հաճախ գերազնահատում են կենդանիների ընդունակությունները և նրանց այնպիսի մարդկային հատկություններ են վերագրում, ինչպես՝ խելք և ըմբռնողություն։ «Կենդանիները խելք-ունեն», — յերբեմն հարցնում են մեզ։ Ի՞նչ կարելի յե պատասխանել այդ հարցին։ Իհարկե, նրանք չունեն մարդկային խելքը, շատ քիչ ե կենդանիների նախաձեռնությունը։ Սովորաբար նրանց բոլոր գործողությունները առաջնում են ոեֆլեքսներից, վորոնք արդյունք են գոյության կովի բարդ ձևերի։

Մի անգամ, սառւզելու համար, թե վորքան մեծ ե կենդանիների խելամտությունը, Մոսկվայի կենդանաբանական այգում մենք այսպիսի հետաքրքիր մի փորձ արինք։

Մեղ մոտ հենց նոր բերված մի խումբ քարայծերին մենք տեղափորեցինք մեծ արգելանոցը, վորը ցանկապատված եր յերկաթյա վանդակով։ Զորքոտանի գերիները յերկար ապ-ըցին այնտեղ։ Սկզբում նրանք համարորեն փորձում ելին պատռել — անցնել ցանկապատի միջով։ Այդ փորձերը, իհարկե, վոչ մի հետևանքի չհասցըրին. յերկաթե ցանկա-պատը բավական հուսալի յեր։ Աստիճանաբար քարայծերը սովորեցին, վոր ցանկապատից դենը չեն անցնի։ Յեկ ահա այդ ժամանակ եր, վոր մենք հանեցինք ցանկապատը։ Մեզնից վոմանք սպառում եյին, վոր քարայծերը կփախ-չեն։ Բնավ այդ չեղավ։ Կենդանիներից վոչ մեկը չանցավ այս գիծը, վորով առաջ ձգված եր ցանկապատը. այդ քայլն անելու համար նրանք չունեցան անհրաժեշտ խելամտու-թյունը։ Քարայծերը մոտ եյին վազում հանած ցանկապա-տի գծին, և մեխվածի պես կանգ առնում։ Ամեն տեսակ ցանկապատից առավել հուսալի՝ տեղում նրանց պահում եր նախընթաց ամիսներին հաստատ լուրացրած ոեֆլեքսը. չե վոր ինչը ան ել նրանք այս ժամանակ փորձեցին անց-նել յերկաթյա ցանցով շրջապատված արգելանոցը — միե-նույն ե, վոչ մի հետևանքի չհասան։

Ճիշտ նույնպիսի փորձեր արգելեցին Ուկրայնայում՝ Ասկանիա-Նովա կոչված արգելանտառում յեղջերուների, ջայլամների, լամաների հետ։ Այստեղ ևս, այդ կենդանի-ներից վոչ մեկը գլուխ չընկավ անցնել հանված ցանկա-պատի գծով։

Կենդանիների ընդունակությունները հաճախ գերա-գնահատվում են մինչև իսկ մեր կենդանաբուծարաններում։ Սամույլների և կզաքիսների համար բներ շինելիս այնտեղ շատ հաճախ մետաղե ցանցով են ծածկում ամբողջ հա-տակը։ Դա անում են նրա համար, վորպեսի գազանները չկարողանան ստորերկրյա անցը փորել և փախչել վան-դակից։ Ավելորդ զգուշություն։ Մոսկվայի կենդանաբա-

նական ալգում բոլոր մանր մուշտակամորթ դադանները ապրում են հոգե հաստակ ունեցող բներում և զեռ յերբեք նրանցից վոչ մեկը գլխի չի ընկել ական փորել։ Իհարկե, այդ գազանիկներից յուրաքանչյուրը փորձ արել եղեալ ազատություն դուրս գալ, սակայն նրանց ձեռնարկության հաջողության համար պակասում եր խելամուռությունը։ Ճիգ ու ջանք թափելով մի կերպ ծլկվել վանդակից, նրանք ընդհուպ մոտենում ելին ցանցավոր ցանկապատին, զեմ ելին առնում արգելքին և հենց այդտեղ ցանկապատի տակ սկսում ելին փորել գետինը։ Այդ նախատեսելով, մենք բնի պատերի լերկարությամբ ներսից դրինք մի քանի վոչ այնքան լայն տախտակներ տափակ դրությամբ, վարոնք ծածկեցինք հողի թեթև շերտերով։ Փորելով մինչ այդպիսի տախտակը, մեր սաժույրները և կղաքիները կարող ելին սոսկ ապարդյուն չանգուել այն։ Մինչդեռ, յեթե նրանք գլմի ընկնելին ցանկապատի գծից մի 20 սանտիմետր ներսով փորել, — վոչինչ չեր խանդարի նրանց գլուխ բերել ստորերկրյա մի կարձ անցք։

Մեծ չի նաև առյօնների ու վազրերի խելամտությունը։ Գաղանանոցներում նրանց հաճախ միմյանցից զատում են թեթև կիսաֆաներույին քառակուտի բարակ տախտակներով, վորոնք, իհարկե, ջարդ ու փշուր կցային զորեղ թաթի առաջին իսկ հարվածից հետո։ Սակայն խռոր գիշատիչները, վորոնք մեծացել են ամուր պատեր ունեցող բաժանմունքներում, սովորաբար գլխի չեն ընկնում խորտակել այդպիսի չնչին միջնորմը։ Գտազանին սովորեցներով վանդակում նստել, մենք նրա մեջ արմատացնում ենք մի նոր սովորություն, վորը չի թույլարում վոչ մի փորձ անել իր մշտական բնակատեղը թաղնելու։ Այդ ոեֆլեքսները այնքան հաստատ են բըռնում, վոր յերբեմն մինչեւկ ուժով չի հաջողվում գա-

դանին դուրս քշել բաց դռնակով, յեթե նա առաջ յերբեք դուրս չի յեկել այդտեղից։

Հայոնի յե, վոր բծավոր յեղնիկը հոյակապ ցատկող եւ Սակայն դեռևս չի յեղել դեպք, վոր մեր յեղնիկները գըլի ընկնելին դուրս գալ ազատություն, ցատկելով որգելանոցի համեմատաբար ցած ցանկապատի վրայով։ Մինուունը կասենք նաև կոպե-դաղյան վոչխարի մասին։ Իրեն հատկացված տեղամասումնա խաղաղ ու համեստ ապրեց մի քանի տարի։ Բայց, ինչպես յեղավ, մի անգամ գիշեր ժամնակ վազելով կենդանաբանական այգի մտավ մի շուն։ Սա հարձակվեց կոպե-դաղյան տնակյացի վրա և նոր միայն վոչխարը հեշտությամբ ցատկեց ցանցավոր ցանկապատի վրայով, վոր բաժանում եր իր արգելանոցը այգաւմացած տերիտորիայից։

Տեթե մենք հաշվի չառնենք կապիկներին, ապա մատցած կենդանիներից անհամեմատ ձեռներեց են մուգ-դարչնակույն արջերը։ Վոչ առյուծը, վոչ վազը, վոչ ել ընձայուծը յերբեք գլխի չեն ընկնում տղատություն դուրս գալ վանդակի դռնակից, վոր բացվում եւ վերև բարձրանալով, թեպետ դա շատ եւ Սակայն հերիք ե, վոր արջը տեսնի, թե կենդանաբանական այգու ծառայողը ինչպես ե բարձրացնում այդ դռնակը, — և ծուռթաթը նույնը կանի։

Մեր ահագին արջը «Բորեց» անունով, գարնանը, ձընհալքին հանկարծ սկսեց իր հոգոր գրկի մեջ սեղմել ձյան կույտը և պնդացրած մեծ ձնագնդերը կրել փոսի մեջ։ Հետո նա բարձրացավ յետի թաթերի վրա և առջեի թաթերը յերկարացը փոսի շրթին, կտրծես թե չափելով իր համակը. արդյոք ժամանակը չե՞ արդեն ազատություն դուրս գալու։ Դրությունը սպառնալից դարձավ։ Յես կարգապեցի։

— Բումբէր . . .




Կենդանաբանական այգու ծառայողները պահեստ վագեցին և մեկ-յերկու ըոպեցից վերադարձան ուռմբերով բեռնավորված։ Դրանք հատուկ պատրաստված արկեր են, մարդկանց և գաղանի կյանքի համար անվտանգ, սակայն պայթում են խլաչուցիչ դղբջունով։

Մենք սկսեցինք դրանք պայթեցնել այնտեղ, ուր «Բորեց»-ն իր ձնե բլրակն եր սարքել։ Պալթյունները վախեցրին փրչոտ հսկային։ Նա շտապով թողեց փոսը և հետո յերկար ժամանակ չեր մոտենում դրան։

Իրոք, «Բորեց»-ն այլևս փորձեր չարեց ազատություն դուրս գալու։ Սակայն շուտով նա նորից զարմացըեց կենդանաբանական այգու աշխատակիցներին։ Զգիտես ինչու, արջին դուր յեկավ ծառի կանաչ փոքրիկ ճյուղը, վորը մյոււներից ավելի ցած եր կախված ծառից և մեղմ ուրորդում եր քամու շնչից։ «Բորեց»-ը յերկար ժամանակ փորձեց համել շյուղին գետնի վրայից, սակայն նրա բոլոր փորձերն ապարդյուն անցան։ Այն ժամանակ ծուռթաթ խորամանկը ծառի տակ բերեց ու շեղջակուտեց միքանի շատ մեծ քարեր։ Ավարտիլով իր «շինարարությունը», արջը տնքալով ու փնչալով բարձրացավ նրա վրա և առջնի թաթերով շյուղը բռնելով, հեշտությամբ կոտրեց ահազին ճյուղը, վորի վրա աճել եր գաղանին զբաղեցնող կանաչ վոստիկը։

Ավելի հետաքրքրական է յեղել հետեւյալ դեպքը Թբիլիսիի կենդանաբանական այգում։ Ծառաբողը, վորը պարտավոր եր հոգ տանել մի խումբ ձեռնասուն արջերի համար, մի անգամ մոռացավ արգելանոցի բանալիները։ Ծուլանալով զնալ զրասենյակ՝ դրանք բերելու, այդ տեղամասին կից բարձր պատով նա իջավ արջերին հատկացված փոքրիկ հրապարակը։ Պատի յերեսին տեղ-տեղ քարերը սաստիկ դուրս եյին ցցված և բավական հեշտ եր կատարել այդ ուղին։ Արջուկներն ուշադրությամբ դիտում

եյին ծառայողի շարժումները և հանգիստ նստած եյին իրենց տեղերում, քանի նա ավլում-մաքրում եր իրենց հրապարակը։ Իսկ յերբ ծառայողը պատով բարձրացավ գեպի այգի, արջերը նույն այդ ճամբով դուրս յեկան գեպ ազատություն։ Համա թե գլխացավանք յեղավ հետո—արջուկներին նորից իրենց տեղը քշելու։



ՄԻ ԱՐՁ-ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԸ

Արու արջերը չեն հանդուրժում նորածին ձագերին ներկայությունը։ Բավական ե, վոր փրչոտ մայրիկը քիչ անուշադիր լինի — և դաժան հայրը անգիտաբար պատառում ե իր սեփական սերունդը։ Դեռևս աշնանից մուգդարչնագույն եղ արջը հեռանում ե արուի մոտից, անտառի թափուտի խորքն ե քաշվում և այնտեղ, վոր ջում պահում-պահպանում ե իր նորածիններին։

Մի քանի տարի առաջ մենք այնուամենախիվ վճռեցինք փորձել արու արջին սովորեցնել իր ձագերին։ Մասկվալի կենդանաբանական ալգու ահագին մի արու-արջ՝ «Բորեց» անունով մտցրինք արգելանոց, ուր նա պիտի ապրեր «Պլաքսա» կոչված եղ արջի հետ։ Ալդ արգելանոցում եր, վոր «Պլաքսա»ն ձմեռը սերունդ ունեցավ՝ յերեք արջուներ։ «Բորեց»-ը շատ խեթ-խեթ եր նայում նրանց և քանից փորձեց գաղատազողի մոտենալ նրանց։ Սակայն մայրը միշտ արթուն եր։ Բավական ե, վոր հայրը քիչ մոտենար նրանց, իսկույն ևեթ Պլաքսան տուած եր գալիս, իր սեփական մարմնով պաշտպաննելով իր դեռևս կույր փոքրիկներին։ Բորեցը յերկու անգամ մեծ եր և անհամեմատ ուժեղ Պլաքսայից։ Սակայն մայր-արջը

առսկալի լե իր զայրույթի ժամանակ։ Կատաղությամբ նա հարձակվում եր արջի վրա և այնպիսի հարվածներ եր տեղում, վոր նա իսկույն նահանջում եր։ Խուափելով իր ամուսնու թաթալոշներից, արջը սովորաբար ընկրկում եր յետի վոտոների վրա, իսկ առջեի վոտներով ջանագիր ծածկում եր գլուխը։ Մեջքով ընկրկելիս՝ առաջացող եղարջի հանդեպ՝ նա մի անգամ ինչպես յեղավ գլորվեց ջրափակի մեջ։

«Ընտանեկան տեսարանները» կրկնվում եյին որեցոր, մինչև վոր Բորեցը չհաշտվեց իր մոտ հանդուրժել մեծացող քոթոթներին։ Իր անգերջ ծեծերով Պլաքսան այն գրության հասցրեց նըան, վոր արջը ձեռք բերեց մինչև իսկ հատուկ մի ոեֆլերս. յերբ քոթոթները դուրս եյին գալիս վորջից և սոտենում ելին հորը, նա փութով հեռու յեր փախչումնրանցից և յերկլուզովնայելով անսաստ մայրիկին, առաջուց գլուխը ծածկում եր թաթերով։

Մեզ որդեն թվում եր, վոր Բորեցը զերջնականապես հաշտվել ե իր համար նոր ընտանեկան վիճակի հետ, սակայն դա ալդպես չեր։

Արջ-ընտանիքի արգելանոցի մեջտեղում գետնից դուրս եր ցցված մի քոթուկ։ Դա ահագին ծառի կոճղակտոր եր, վոր յերկու մարդ հազիվ գրկեր։ Մի անգամ դրա վրա բորձրացավ քոթոթը և նստեց այնտեղ, արեկ տակ տաքանալով։ Պլաքսան նիրհում եր։ Բորեցը հուշիկ մոտեցավ կոճղակտորին և թաթով այնպիսի մի հարված հասցրեց փայտին, վոր քոթոթը աղաղակելով մի քանի մետք նետվեց ողի մեջ։ Եղարջը վայրկենապես արթնացավ։ Նա իր ամուսնուն հրամցրեց մի զուլգ ուժգին ապտակներ և գաղանը իսկույն խաղաղվելով, հանցանքի մեջ բռնվածի գես քաշվեց մի անկուն քնելու։


Մի քանի որ ընտանիքում խաղաղություն եր տիրում։ Պլաքսան արդեն սկսել եր կորցնել իր սովորական զգու-

շությունը։ Մի անդորր արև առավատ նա վերստին,
 ինչպես առաջ, քաղցր նիրհեց։ Այդ միջոցին քոթոթներից
 մեկը իջավ դեպի ջրափուլ և սկսեց ջրում չփշփացներ
 իր թաթերը։ Բորեցը ուշագրությամբ դիտում եր նրան,
 հետո գաղտագողի մտավ ջրափուլ մյուս ծայրից և կամաց
 քայլելով ավազանի միջով, մոտեցավ քոթոթին։ Չնկատելով
 վտանգավոր հարեանությունը, փոքրիկը առաջվա պետ
 ուրախ ճղփում եր ջուրը։ Բորեցը ատամներով բռնեց նրա
 վղից և արագ ընկոմեց ջրի խորքը։ Առաջին իսկ անհա-
 ջող փորձի միջոցին աղաղակել՝ քոթոթն սկսեց խեղդվել։
 Սակայն Բորեցը նույնպես շնչասպառ յեղավ—նա հարկա-
 գրված եր ող քաշել թոքերը և մի ըոպե գլուխը դուրս հա-
 նեց ջրի յերեսը այդ բանն անելու համար, առանց իր զո-
 հին ատամների արանքից բաց թաղնելու։ Գաղանների կղզում
 լսվեց քոթոթի հուսահատ աղաղակը։ Մոր նիրհը ասես չեր
 յեղել։ Յերկու ցատկումով Պլաքսան կտրեց—անցավ մեծ
 բացատը և մի ակնթարթում հասավ ուխտագրուժ հորը։
 Այ թե տեսարան եր։ Եղ արջը մոլեգնությամբ հարձակ-
 վեց Բորեցի վրա, մի վայրկան իսկ նրան դադար չտալով։
 Սոսկալի հարվածների կարկտին արժանանալով, արջը սոսկ
 անզոր կերպով ծածկում եր իր մարմինը և ցայտերի
 ամպի մեջ նահանջեց տվագանի հեռավոր անկյունը։ Իս-
 պառ ահաբեկված, նա ջրի մեջ նստեց ավելի քան մի ժամ։

Այդ որից կարգը վերջնականապես հաստատվեց
 արջերի ընտանիքում։ Զբաղված լինելով ծագերին կերակ-
 րելով և գաստիարակելով, Պլաքսան վոչ մի ուշագրու-
 թյուն չեր զարձնում արջի վրա։

Բորեցը մագերը թափեց և այլևս բնավ չեր հետա-
 քըքրվում իր սերնդով։ Հիմա նա շատ հաճախ քնում եր,
 մեջքին փուլած և թաթերը դեռ ու դեռ պարզած։

Աննկատելի մոտեցավ ձմեռը։ Արջերն իրենց հա-
 մար խոր հոբեր փորեցին և ժամանակի մեծ մասն այն-



Եզ արջը հարձակվեց Բորեցի վրա։

առեղ եյին անցկացնում՝ նիրհելով։ Պլաքսան քնում եր իր յերեք ձադուկների հետ, իսկ Բորեցը՝ առանձին վորջում, արգելանոցի հակադիր ծայրում։ Տաք որերին քոթոթները դուրս ելին գալիս հորից— ձյան վրա փոքր ինչ խաղալու Յերբեմն նրանք համարձակ մոտենում եյին իրենց հորը և Բորեցն այդպիսի դեպքերում փարձում եր կտրել նրանց նահանջի ճանապարհը դեպի մոր վորջը։ ձմեռը Պլաքսայի մայրական բնազդները թուլացան և նա միայն այն ժամանակ եր պաշտպանում իր փոքրիկներին, յերբ նրանք վորջում եյին։ Սակայն մեծացած քոթոթներն արդեն ինքնուրույնություն եյին ձեռք բերել և անհամեմատ դժվար եր նրանց ձեռք ձգելը։ Այնուամենայնիվ Բորեցը մի անգամ, ինչդեռ յեղավ, կարողացավ բռնել քոթոթներից մերկին։ Հայրիկը այնպես հարվածեց իր յերկփթանի ձագին, վոր սա մի քանի մետր թռավ մի կողմ։

Գարնանը լուրջ թյուրիմացություններ չեղան արջերի ընտանիքում։ Քոթոթները շատ լավ մեծացել ելին և հիմա առավել համարձակ եյին վարփում իրենց հոր հետ։

Մի անգամ կենդանաբանական այգով անցնելիս յես նկատեցի, վոր արջերի ընտանիքի մոտ հավաքված հասարակությունը մեծ աղմուկով և արտահայտում իր հրճվանքը։ Պարզվեց, վոր արգելանոցում այդ ժամանակ իրոք վոր հետաքրքիր տեսարան ե տեղի ունենում։ Արջը փորձում եր պատի վրայով մազլցելով դուրս գալ ջրափոսից։ Նա բարձրացել եր յետի վոտների վրա, բռնել եր քարեցվածքը և ջանում եր վեր քաշել մարմինը։ Հենց այդ ըուպելին նրան մոտ գնաց քոթոթներից մեկը։ Նա որագորագ յերեք տպտակ հասցըց իր հորը և փութով նետվեց դեպի մոր պաշտպանության տակ։



ԱՐՁԸ, ՈՐԼԱՆԸ ՅԵՎ ՄՐՋՅՈՒՆՆԵՐԸ

Թվաց, թե թփերի մեջ մեկը հառաչեց։ Վորսորդը ակամա կանգ առավ և սկսեց լսել։ Նրա շունը նետվեց դեպի մացառուտը։ Մի ըոպեյից նա բարձրածան հաջեց, սակայն իսկուն և սկսեց և շատպով լետ ոլացավ։

Լայքա*) շան յետեց ընկել եր գազազած եղ արջը։ Նկատելով մարդուն, նա կանգ առավ, իր չար հայցքը դարձելով մերթ վորսորդին, մերթ շանը։ Մի ըոպեյից նորից շրջվեց դեպի թփերը և դանդաղ կորավ տեսարջը շուռից դաշտից։ Շունը նետվեց նրա յետեից, սակայն սողության դաշտից։ Շունը նետվեց նրա յետեից, սակայն կորցը իր վորսորդական յեռանդը պոչն իրեն քաշելով, լայքան աղաստաբան գտավ տիրոջ թիկունքում։

Այս տեսաբանը հետաքրքրեց վորսորդին։ Արդյոք ինչ եր տեղի ունենում այնտեղ, մացառուտի այն կողմում,

*) Ռուսաստանի հյուսիսային շների մի տեսակը։ Ծ. թ.



Կոլա թերակղու վայրի այդ
անկյան կուսական անտառում:

Բանից դուրս յեկավ, վոր եգ
արջն ուտում եր մի ինչ վոր
խոշոր թոշուն: Թափթփված փե-
տուրներից դժվար չեր վորոշել
ճերմակապոչ որլանը: Թփերի
մոտ մի սոճի յեր բարձրացած,
վորի կատարին գտնվում եր որ-
շանի ահազին բունը:

Ուշադրությամբ դիտելով
շուրջը ամեն ինչ, վորսորդը
համոզվեց, վոր հանդիպել ե սիմ-
բիոզի, այսինքն մի քանի տե-
սակ կենդանիների համակեցու-
թյան հետաքրքիր մի դեպքի:

Տարեց տարի ճերմակապոչ
որլանները ձագեր են հանում
միևնույն բնում: Այս բները

նրանք ամեն տարի նորոգում են, միշտ նորանոր ճյուղեր
ու վոստեր ավելացնելով:


Զորեղ թևագոր գիշատիչները իրենց ձագերին կերակ-
րում են մեծ-մեծ ձկներով, ըստվորում հոգատար որլան-
ները այնքան շատ ձուկ են բերում, վոր ձագերն ի վիճա-
կի չեն բոլորն ուտելու և մնացորդները գետին են գցում:
Ահա այս ձկները պատահաբար գըավում են մայրարջի-
ուշադրությունը և այդ որից նա ամեն որ գնում ե այն-
տեղ, իր քոթոթների հետ: Ալպես և արջերը սնվում են
իրենց չափը չճանաչող որլանների հաշվին: Սակայն վոչ
միայն արջի ընտանիքն ե սնվում թոշունների սեղանի
մնացորդներով — սունդու տակ անտառային մըջունները մէ-
մեծ մըջնաբուն եյին կառուցել:

Նրանք հավաքում եյին այն ամենը, վոր մնում եր
արջերի ուտելուց հետո, մինչ սպիտակություն մաքրելով
ձկան յուրաքանչյուր վոսկրիկ:

Իսկ արջերը, սնվելով ջահել որլանների հաշվին, վերջ
ի վերջո ուտում եյին և այդ թոշուններին: Բանն այն
է, վոր որլանների ձագերը միանգամից չեն թոշում:
Ակզեռմ նրանք վարժվում են գետնի վրա: Իսկ յերբ ջա-
հել ճերմակապոչը բնից իջնում ե գետին, վրա չեն հաս-
նում արջերը:

Ակներն ե, վոր ամեն աշուն արջերը վոչնչացնում
եյին մեծացած թոշուններին և սակայն, չնայած դրան,
ծնողները նորից վերադառնում են դեպի իրենց բունը:

Յեվ բարձրերում վերսախին սկսվում եյին նրանց գե-
ղեցիկ գարնանալին խաղերը:



ԱՌԱՅ ՄԱՐԶԱՆՔԻ

Մոսկվայի կենդանաբանական այգու մի քանի սաներ—ցախաքլորները, նապաստակի ձագերը և մի քանի ցերպեցիկ թռչուններ—իրենց ջահելությունն անցկացրել եյին, նստած փոքրիկ վանդակներում։ Մենք մշտակես հետեւում եյինք, թե նքանք ինչպես են մեծանում և այնպես եր թվում, վոր վոչ մի բան նրանց զարգացման մեջ ցերկուղ չի ներշնչում։ Ջահելները նորմալ մեծանում եյին, շատ լավ սնվում և միայն նրանց շարժումները սահմանափակ եյին վանդակների մեծությամբ։

Աստիճանաբար ջահելները մեծացան և մենք կարողացանք մինչև վերջը տանել մեր նշած փորձը։ Իսկ փորձը կայանում եր նրանում, վորպեսզի ստուգենք, թե վանդակի մեծությունն ինչպես և անդրադառնում ջահել կենդանու զարգացման վրա։

Սկսեցինք նապաստակից։ Փոքրիկ, նեղ վանդակից, ուր նա մեծացել եր, նրան բաց թողինք մեծ մարգագետնի վրա։ Նապաստակը նստեց, շուրջը նայելով։ Ծլացուցիչ

վայլում եր արեր։ Այստեղ ու այնտեղ գունագեղ յերեվում ելին ծաղկիները, պայծառ գորգի պես ծածկելով հարթությունը։ Շուրջը անսովոր ազատ տարածություն եր փուլած։ Փոքրիկ նապաստակը հստու մի ցատկում գործեց, հետո՝ նորից և նորից։ Թվում եր, թե վայրկյան վայրկյանի վրա նա ավելի յե աշխուժանում։ Ահա նա վերստին զսպանակեց իր յետի վատները, ողը նետվեց և վայր ընկավ անշարժ։ Մենք ավելի մոտեցանք։ Փոքրիկ նապաստակը մեռած եր։ Նա մահացել եր սրտի հանկարծահաս կաթվածից։ Այդպես ցույց տվեց դիահատումը։


Փոքրիկ վանդակում եր մեծացել նաև ցտխաքլորը։ Իր ամբողջ կյանքում նա յերբեք չեր թռել։ Հափեց դուրս նեղ եր նրա վանդակը։

Զվից դուրս գալու իննունմեկերորդ որը ցախաքլորն արգեն ուներ հասուն թռչնի արդուզարդի բոլոր սև փետուրիկները։ Այդ ժամանակ բաց վանդակը տարան դրին ընդարձակ զետեղարանը, ուր գտնվում ելին անտառահանական վերը։ Դա ցախաքլորի առաջին և վերջին որն եր ընդարձակուղը։ (Ազատված գերին պոչը փոելով յերպեց, ձակ վոլյերում*)։ Ազատված գերին պոչը փոելով յերպեց, նա պտույտներ «զունդունաց» իր հարսանեկան յերգը։ Նա պտույտներ գործեց, ինչպես կաղուցի ժամանակ, ստկայն հանկարծ գործեց, ջղաձգությունների մեջ թպրտաց և շուտով անընկավ, ջղաձգությունների մեջ թպրտաց և շուտով անընկավ, ջղաձգությունների մեջ թպրտաց և շուտով անընկավ, մայր-շնչերակի մեծ փողի տրաքվելուց։

Մահացավ նաև ստխակը, վոր մեծացել եր միանգամայն պտույտիկ վանդակում։ Առաջին խակ ուժգին դայլայլիկի ժամանակ ստխակը մեռած զլորվեց թառի վրայից։ Տեղի յեր ունեցել ներքին սաստիկ արյունհոսություն։ Ի՞նչ են ասում այս փորձերը։

Այն, վոր առանց թոփչքների, ցատկումների և ազատության մեծ սովորական վարժությունների, կենդա

*) Ցերկաթացանցով շրջապատված հրապարակ։



Նիների ներքին որգանները բավարար չափով մարզված չեն եղել: Սրտի և զարկերակների պատերը անհրաժեշտ ամրություն ձեռք չեն բերում, նրանցում սաստիկ քիչ ելինում ձգականությունը և նրանք չեն կարող տանել արյան՝ սովորականից բարձր՝ ճնշումը:


Շարժվելու անհնարությունից առանձնապես տուժում են նապաստակները: Նրանց հետեւի վոտների մկանները շատ զորեղ են լինում համեմատած արյունատար ապարատի աշխատանքության հետ, իսկ վատ ձեւավորված վոսկորները՝ հաճախ մինչև իսկ կոտրվում են, յեթե խլըշտանը հնարավորություն և ստանում արագ վազելու ազատ մարզագետնի վրա:

Ճիշտ նույն կերպ, ինչպես ցախաքլորը, սոխակը և նապաստակը, մեր կենդանաբանական այգում սատկեցին յերկու մուգ-դարչնագույն արջեր: Նեղ զետեղարաններից, ուր այդ գաղաններն իրենց կյանքն եյին անցկացրել զուով նրանց քաշեցին — տարան նոր, շատ մեծ վանդակների մեջ: Շարժումների անսովոր կտրուկությունից արտակարդ բարձրացավ արյան ճնշումը և արջերը սատկեցին:

Յեղավ մի դեպք, յերբ վոլյերից փախավ դրանից քիչ ժամանակ առաջ վորսուղի բերած ճերմակ նապաստակը: Նա ցատկեց ջրափոսի վրայով և ընկավ մուգ դարչնագույն արջի՝ Բորեց անունով՝ արգելանոցը: Արջը քառասորով ընկավ նապաստակի յետեւից: Բայց սա զարմանա-

մե ճարպկությամբ պրծնում եր նրա ձեռից և Բորեցը գոչ մի կերպ չեր կարողանում բռնել նրան: Հալածողի թաթերից դուրս պրծնելով, արագավազ լեռնային նապաստակը յերկմետրիան ցատկում գործեց, թռավ հարևան պատի դուրս ցցված քարի վրա և այստեղ՝ վորմնախորշում թագնվեց, քարերին կպչելով: Արջի աշքից նապաստակը կորավ: Նա ուշիւուշով նայեց բոլոր ծակ ու ճեղերը, հետո բարձրացավ յետի թաթերի վրա և սկսեց ողբ հոտոտել: Շուտ-շուտ քիթը դես ու գեն պտտելով, նա ուշադրությամբ ուսումնասիրեց պատի անհարթությունները և վերջապես յերեան հանեց նապաստակին: Փրչու հալածողն զգուշությամբ մոտեցավ պատին, լայն պարզելով առջևի թաթերը, սակայն անսպասելի կերպով նապաստակը թռավ արջի գլխին: Փորձելով նրան բռնել, Բորեցը կորցրեց իր հավասարակշռությունը և ընկավ մեջքի վրա, ծոծրակով քարին դիպչելով: Սակայն հետապնդումը շարունակվեց և զբանից հետո: Նորից յերկու ժամ արջը դես ու գեն եր արշավում արգելանոցի ամբողջ տարածության վրա և թաթի պատահական հարվածով միայն վերջապես սպանեց ճեղքի մեջ սսկված նապաստակին:

Այս հետապնդումը թանգ նստեց ահագին գաղանին, անսպասությունից նա այնպես հոգնեց, վոր յերկու որ երաժարվում եր կերից, պառկում եր մեջքի վրա և հառաչում եր ամենաչնչին շարժումն անելիս: Հավանորեն սաստիկ ցավում եր նրա մկանունքը, վոր կենդանաբանական այգում անցկացրած տարիների ընթացքում անսովոր եր դարձել մեծ լարման:



ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՅԵՎ ԿԱՇԿԱՆԴՎԱԾ

1934 թվի անմոռանալի որերին, յերբ Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի սառցաղաշտի վրա ստեղծվեց չեմուսկինցիների ավարիական ճամբարը, նավավթարի մենթարկվածների վրաններին քանիցս մոտենում եյին սպիտակ արջերը։ Դեպի բնակատեղ նրանց քաշում եր խոհանոցի բուրմունքը, իսկ արջերին ի բնե հատուկ հետաքրքրասիրությունը հարկադրում եր մոռանալ զգուշությունը։ Շմիդտի ճամբարի բնակիչները շտա գոհ եյին այդպիսի այցելություններից։ սպիտակ արջերի յերեալը հնարավորության տվեց թորմ մսից ճաշեր պատրաստել։

Արկտիկյան նախկին եքսպեդիցիանների ժամանակ ևս արջերը քանի-քանի անգամ իրեկել են անվեհներ բենապահացներին, յեթե դեպք եր լինում աղետի մեջ ընկնել։ Հյուսիսի չորքուանի բնակիչների միսը մարդկանց կերակուր եր տալիս, իսկ մորթիներից նրանք վրաններ եյին շինում։

Հիմա տարի տարվա վրա աճում ե Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ջրերում լողացող նավերի քանակը նկատված ե, վոր Անդրբեռային շատ վայրերում սպիտակ արջերը նկատելի կերպով անհետանում են։ Դա հետեանք



Արջերն աշխատում եյին համեկ մարդկանց։

Թիագիռի պատմածներ—3

ե այն բանի, վոր նրանց հանդիպելիս անխնա վոչնչաց-
նում են և մինչև իսկ զվարճության համար նավի տախ-
տակամածից հրացանով սպանում։ Մինչդեռ սպիտակ ար-
ջերին վոչնչացնելը մեծ սխալ ե. չե՛ վոր աղետի գեղքում
նրանք և կերակուր են մատակարարում բեեռագնացներին,
և թե տաք մորթիներ։

Կենդանաբանական ալգու այցելուները սովորաբար
հետաքրքրությամբ են դիտում, թե ինչպես սպիտակ ար-
ջերը լողում և սուզվում են լախարձակ ավազանների թա-
փանցիկ ջրում։ Յեզ հաճախ կարելի յե լսել այսպիսի բա-
ցականչություններ։

— Այսր արջերը ջրում փրկություն են գտնում շոգից
Հլուսիսում սովորել են ցրտին, բոլորովին չեն դիմա-
նում տաք յեղանակին։


Մինչդեռ դա ճիշտ չե։ Մինչև իսկ հարավում սպի-
տակ արջը կարող ե տուժել ցրտից, յեթե միայն նրա
մորթու տակ չկա բավարար չափով ճարպային շերտ։ Մոր-
թու տակի ճարպն ապահովաբար գաղանին պաշտպանում
ե ջրի մեջ իր տաքությունը կորցնելուց։ Սակայն պատա-
հում ե, վոր արջի սննդի մեջ քիչ են լինում ճարպային
նյութեր, — այդ ժաժանակ նա սկսում ե մըսել և մինչեւ
իսկ շոգ որերին չի մտնում ջուրը։ Լզար արջը դողում ե
և հարավում։ Լզար արջը չի մտնի ավազանի մեջ, այլ
տաքանում ե արեկ կիզիչ ճառագայթների տակ։

Յերբ մենք վորոշեցինք սպիտակ արջերին տեղավորել
Մոսկվայի կենդանաբանական այգու նոր տերիտորիային
վրա, այնտեղ նրանց համար հատուկ արգելանոցներ սար-
քեցին։ Այս արգելանոցները հասարակությունից անջատ-
ված եյին ջրով լի խոր փոսով։ Վերջապես յեկավ արջե-
րին նոր բնակարան տեղափոխելու որը։ Սպիտակ հսկա-
ները արագ «հետազոտեցին» իրենց տեղամասը և ուղղվե-
ցին դեպի ջուրը։ Ահավասիկ այդ ժամանակ եր, վոր

ակովեց խառնաշփոթությունը։ Սուզվելով ջրի խորքը,
արջերը հատակի վրայով հուշիկ մոտենում եյին ցեմենտե
արգելապատին, վորի այն կողմից նրանց նայում ելին կեն-
դանաբանական այգու բազմաթիվ այցելուները։ Հետո, դադ-
տագողի մոտենալով, զորեղ գաղանները մեծ ույժով հետ
մղվելով հատակից, ողն եյին թռչում, աշխատելով թաթով
ճանկել արգելապատի մոտ կանգնած մարդկանց։ Ճիշտ
նույնպիսի յեղանակով են գործում սպիտակ արջերը ազա-
տության մեջ, յերբ նրանք Սառուցյալ ովկիանոսի ծանծա-
գուտներում վորսում են սառցաշերտերի վրա հանգստացող
փոկերին։

Խոստովանած, շատերը գլուխները կորցրին։ Ասենք
դրան հիմք կար։ Ավազան կառուցողները աչքաթող եյին ա-
քել մի շատ կարեոր հանգամանք։ Փոսի պատերի բարձ-
րությունը վորոշելիս նրանք նկատի չեյին առել ջրի մա-
կերեսույթը և Արխիմեդի որենքը։

Անհայտ ե, թե ինչով կվերջանալին սպիտակ հսկաներէ
այս «վարժությունները», յեթե մենք ՀՀտապելինք բարձ-
րացնել ավազանի պատերը։



ՔԱԶԵՐԸ ՅԵՎ ՎԱԽԿՈՏՆԵՐԸ

Մեզնից շատերը՝ դաստիարակված առածներով, հեքիաթներով և առակներով՝ սովոր են այնպես կարծելու, վոր առյօւճները և վագրերը շատ քաջ են, վոր ավանտկները հիմար են, խողերը — անմաքուր, իսկ նապաստակները — վախկոտ։ Սակայն կենդանիների մասին մեր ունեցած այս պատկերացումը միշտ ել ճիշտ չե։

Մոսկալի կենդանաբանական արգունոր տերիտորիայի վրա գեռես բոլորովին փոքրիկ մի ուլ ինչպես յեղավ ընկել եր ուսուրիական վագրերի արգելանոցը։ Այս վիթխարի գազանները առաջ յերբեք չեյին հանդիպել ուլիկների հետ և այդ պատճառով անվնասակար կենդանին նրանց յերկյուղ եր ներշնչում։ Ուլիկին տեսնելուն պես վագրերը պաշտպանողական դիրք բռնեցին։ Ուլիկը, իր մորը վնասուելով, վստահ շարժումներով սկսեց մոտենալ զորեղ զիշատիչներին։ Մինչդեռ սրանք, մռնչալով և ատամները բացելով, վախից յետ-յետ գնացին։ Ուլիկը համոտեցավ, իսկ վագրերը խուճապի մատնված շարունակեցին նահանջելք վերջապես նրանք սեղմվեցին պատին, ծառու յելան և աչքերը ծածկելով, մոնչյունով



վագրերը վախավ հետ ընկրկեցին։

սկսեցին պաշտպանվել ուլիկից, ողի մեջ շարժելով առջևո
թաթերը:

Վագրի պատահական մի հարվածն սպանեց ուլիկին:

Սակայն դրանից հետո ել վագրերը չկարողացան ի-
րենց վախը հաղթահարել—յերկար ժամանակ նրանք յեր-
կյուղով պտտվում եին շուրջը, չհամարձակվելով մոտե-
նալ փոքրիկ անշունչ մարմնին: Ահա թե յերբեմն ինչպիսին
ել լինում վագրերի գովական քաջությունը:

Կենդանաբանական այգու այցելուներին քանիցս զար-
մանք եր պատճառում այն, վոր ակվարիումի մեջ անկըշ-
տում գայլաձուկի հետ այնպես սրտոտ լողում ե վոսկե
ձկնիկը: Սակայն բանը փոքրիկ ձկի քաջության մեջ չեւ
այլ նրանում, վոր ազատ վիճակում, ատամնաշատ գայլա-
ձուկը սովորաբար անվում ե արծաթազոծ վահանիկներ
ունեցող ձկներով, դրա համար ել նա ձեռ չի տալիս վոսկե
ձկնիկին: Գետաբնակ գայլաձուկը շատ հաղվադեպ ե ու-
տելու փորձ անում նաև լճակային ծածանին, վորի հետ
սովորաբար չի հանդիպում ազատության մեջ: Յեփ չնա-
յած առածին, այդպիսի ծածանը կարող է հանգիստ նիրհել
գայլաձական կողքին:

Մուկվայի կենդանաբանական այգում ապրող հսկա-
յական պիտոնը սովորաբար կերակրվում ե սպիտակ խո-
զաճտերով, վորոնց մարմնի գուլնին նա վազուց սովորել
ե: Այդպիսի խոզաճուտին նա իսկույն ևեթ խեղդում
ե, իր մարմնի զորեղ ողակներով փաթթաթվելով նրան, իսկ
հետո ամբողջությամբ կլանում ե: Սակայն, յեթե այդ
հսկայական ոձի վանդակը գնենք բծավոր մի խոզաճուտ,
վորի գունավորումը անձանոթ ե պիտոնին, ապա նա վոչ
միայն չի դիպչի նրան, այլ մինչև իսկ ողակ-ողակ կգա-
լարվի, պաշտպանողական դիրք ընդունելով:

Մի անգամ լավլանդական արգելանտառի խիտ թա-
վուառում հրացանածիգ Շուբինի վրա հարձակվեց թփե-

րից դուրս թռած մուգ-գարչնագույն մի արջ: Գազանը
նրա համար հարձակվեց, վորովհետև պաշտպանում եր իր
ավարը—հենց նոր սպանած իշայծամին: Ծութաթը գե-
տին գլորեց դահուկավոր հրացանածիգին, տրորեց նրան
և ատամներով պինդ բռնեց վոտից: Զյան վրա փոփած մար-
դը այնուամենայնիվ կարողացավ բարձրացնել հրացա-
նի շնիկը և փորձեց կրակել դեպի գազանը: Սակայն
հրացանը չբացվեց: Չնայած դրան, արջն իսկույն ևեթ մի
կողմ թռավ: Նրան վախեցրեց իջեցրած շնիկի անծանոթ
մետաղազին ձայնը:

Աֆրիկյան կինոեքսպեդիցիայի մասնակիցները պատ-
մում են առյօւների հետ ունեցած իրենց հանդիպումների
մասին: Յեթե քամին փշում եր բացատի վրա տեղափոր-
ված առյօւների կողմից գեպի եքսպեդիցիայի ավտոմո-
բիլը, գազանները մարդկանց թույլ եյին տալիս մոտենալ
շատ մոտ տարածություն: Սակայն բավական եր, վոր սոսկ
փոխվեր քամին—և առյօւները, առնելով մարդկանց հո-
տը, իսկույն ևեթ թողնում փախչում եյին: Այս դեպքը
հաստատում ե, վոր առյօւները, ինչպես և ուրիշ այլ
կենդանիներ, ավելի շուտ իրենց հոտառությանն են վրա-
տահում քան տեսողությանը:


Հիմա՝ ավանակի մասին, վորի հիմարությունը առած
և դարձել:

Սակայն, միթե նա իրոք այդպես հիմար ե: Դեպքը,
վորի մասին հիմա կտամմենք, մեզ ստիպում ե յերկմտել:

Ինչպես ընտանի կենդանիներից շատերը, ավանակնե-
րը թափահարում են իրենց պոչը և ամբողջ մարմնով ցընց-
վում, յեթենրանց վրա մոծակներ են իջնում, բոռեխներ և այլ
արյուն ծծող պարագիտներ: Մի անգամ Միջին Ասիայում
ինձ վիճակվեց դիտել այդպիսի մի տեսարան: Չարաձնիու-
թյան չափը կորցրած մի տղա շոն վրայից հանեց այսպես
կոչված շնամանձ—արյուն ծծող պարագիտը և նրան դրեց

ավանակի վրա: Իր մազերի վրա զգալով այս անհանդքատացնող միջատի ներկայությունը, ավանակն սկսեց թափալել գետնի վրա, կարծես փորձելով ճգմել իր հոգին հանող պինդ ու տափակ ձանձը: Տղան չփառաբեց իր արարքից, նա մի այլ ալգախոր ձանձ գտավ և սկսեց հուշիկ մոտենալ ավանակին, վորպեսզի նորից այն դնի կենդանու մեջքին: Ավանակը տեսավ տղայի ձեռքին ձանձը, արագ մոտ ցատկեց և լետի վոտքերի քացիով նրան գըցեց առվի մեջ: Մեծ հիմարության տեր կենդանին այսպիսի խաղ չի խաղա:

«Վախկոտ ե, ինչպես նապաստակը», — ասում ե առածը Սակայն ավելի շուտ նապաստակը քաջ ե: Նապաստակի վախկոտության մասին հյուսած հերյուրանքների հեղինակները չեն հասկանում մի բան, վոր վոտները շրե-



կին փրկում են գոյության կռվի համար մղվող պայքարում: Յեթե նապաստակները չկարողանային այդպես արագ վազել, նրանց վաղուց վոչնչացրած կլինեյին զանազան գիշատիչներ՝ նապաստակի վազքի արագությունը — դա նրա ինքնապաշտպանության գլխավոր միջոցն ե: Բայց նապաստակը յերեք չի վախչում, ինչպես ասում են, գլուխը կորցրած: Ուեկորդային արագություններ նա ցույց է տալիս սոսկ ծայրահեղ դեպքերում. սովորաբար նապաստակը խնայում է իր ուժերը: Վոչ արագավաղ վորսկան շան հալածումից նապաստակը վախչում է առանց շտապելու, մի կողքի շրջվելով և շանը նայելով: Միանգամայն ուրիշ ե պատկերը, ինը նրան հալածում ե բարակը-քերծեն, վորի վազքի արագությունը հագասար ե նապաստակի վազքի արագությանը: Այդպիսի դեպքերում շլդիկը ծայրահեղ արագությամբ ե ոլանում և շնից կորչելիս անգամ շարունակում է իր սրարշավը, նորից յերկու-յերեք կիլո-մետր:

Սակայն, դա, այսուամենայնիվ, վախկոտություն չե—պարզապես նապաստակը այլ հնար չունի վորսորդական չնից փրկվելու: Ասկանիա-Նովա կոչված արգելանտառում մի անգամ յես տեսա, թե ինչպես մատղաշ մի ծիուկ, գլուխը կախ դանդաղ գնում եր տափաստանով: Զիու մոռւթի հենց մոտ անսպասելի կերպով վեր թռավ մի գորշ նապաստակ և մի լավ չանգուտեց զամբիկին իր առջիի թաթերի ձանկերով: Զին մի կողմ նետվեց, իսկ նապաստակը շատ հնագիստ կերպով նստեց իր նախկին տեղը: Մի այլ շատ հնագիստ կերպով նստեց իր նախկին տեղը: Մի այլ հնագամ յես հնարավորություն ունեցա դիտելու, թե ինչպես, շներից հալածական յերեք նապաստակներ ցատկեցին գոչխարի հոտի մեջ: Վոչխարները չեն հետապնդում նապաստակներին, ինչու և այդ գորշ-շլդիկները առանց յերկուղի իրենց նետեցին հոտի մեջտեղ, փրկվելով շներից: Բայց նապաստակը միշտ չի վախչում շան առջելց:

Զմեռային լուսնյակ գիշերներին յերբեմն կարելի յէ տեսնել, թե նա ինչպես հանգիստ կը ծում ե կաղամբացողունը բանջարանոցում, շնարնի կողքին, ուր կապված ե հենց այն շունը, վոր այնպես համառորեն հալածում եր նրան ցերեկ ժամանակ։ Հիմա սակալն շունը կարող ե հաջել վորքան քեփը կտա, — նապաստակը մինչեւ իսկ չի բարձրացնի իր յերկար ականջները։

Քանի՞քանի վորսորդներ իրենց մարմնի վրա փորձել են նապաստակի թաթերի ուժը, յերբ անգուշաբար բըռնել ու բարձրացրել են վիրավոր գաղանիկին իր ականջներից. հաճախ յետի թաթերի սուր ճանկերով նապաստակը վորսորդներին լուրջ պատռվածք-վերքեր ե հասցըրել։

Շատ գիշատիչ թոշուններ զոհ են գնում նապաստակներին, յերբ նրանք իրենց կյանքն են պաշտպանում։ Վոմանք վորսորդներից տեսել են, թե ինչպես նապաստակը արծվի ճանկերից փրկվելու համար ընկնում ե մեջքի վրա և իր ուժեղ լետի թաթերի ճանկերով թափում ե ահազին թեավոր գիշատիչի փորը, իսկ յերբեմն կոտրում նաև նրա կողերը։

Հավանորեն շատերն են տեսել, թե ինչպես վորոշներ մեծ զգուշությամբ են անցնում՝ այն ել շուրջանակի՝ հավերի մոտով։ Դա նշանակում ե, վոր յերեսե իր փոքր հասակում այդ շունը կտուցի հարվածներ ե ստացել իր ճտերին պաշտպանող թխսից։ Թեպես և ոտարտիյե, սակայն հավն անգամ կարող ե ընդմիշտ վախ ներշնչել իրենից անհամեմատ ուժեղ կենդանուն։


Ավելի հետաքրքիր որինակ կարելի յէ բերել մի փոքրիկ, զվարթ թոշնիկի կյանքից, վոր ապրում ե մեր հարավային տափաստաններում։ Դա «ՎԵԿԱՆ-ՊԼԱՅՍԻ» կոչված թոշնիկն ե, վոր բուն, ե դնում գետնասկյուռների լքածդատարկ բներում։ Այդ բները հաճախ փորձում են խլել ջահել գետնասկյուռների, վորոնք թողարանների, ալլ ցեխով ու տըղմով լի փոսերի։

Ների բները, նոր բնակտրան են փնտուում իրենց համար։ Սհա հենց այդ միջոցին ե, վոր տեղի յեն ունենում բաղխումները։ Փոքրիկ թոշնիկը խիզախաբար հարձակվում ե իր թշնամու վրա, յէթե նա իր բունն ե ուզում մտնել և իշնում ե դեպի տափաստան փախչող գաղանիկի մեջ-քին, կտուցով չարությամբ կսմթելով նրա ծոծրակը։ Միքանի այսպիսի «Ճիարշավներից» հետո ջահել գետնասկյուռը դադարում ե մոտենալ այն բներին, վորոնց մոտ նա տեսնում ե «ՎԵԿԱՆ-ՆԵՐԻՆ»։

Արժե հիշատակել նաև աֆրիկական ջալլամին, վորի մասին պատմվող առակներում ասում են, թե նա վախից գլուխը թագցնում ե ավաղի մեջ։ Այս ահազին թոշունը շատ սոսկալի յե, յերբ հարձակվում ե թշնամու վրա։ Զայլամի թաթի հարվածն ավելի ուժեղ ե, քան ձիու սմբակի հարվածը։ Սակայն ջայլամն խկույն նահանջում ե, յեթե զուք ձեր գլխարկը հազցնեք ձեռնափայտի ծայրին և բարձրացնեք. նա հարձակվում ե միայն նրանց վրա, ովքեր հասակով ցած են իրենից։

Վորոշ կենդանիների վոչ արժանավակել այս համարումի մասին մեր պատմածը լրիվ չեր լինի, յեթե մենք վոչինչ չասեյինք «կեղտոտ» խոզի մասին։

Լիովին հիմք ունենալով, մենք կարող ենք պնդել վոր խոզը ամենամաքրասեր կենդանիներից մեկն ե։ Այն սովորողներում և կոլխոզներում, ուր խոզերին լավ են խնամում, այդ կենդանիները իրենց հատկացված բաժանմունքները պահում են բացառիկ մաքրության մեջ և անպայման հատուկ տեղ են ընտրում՝ արտաթորությունների համար՝ ամենահեռափոր, մեկուսի մի անկյունում։ Շող ժամանակ խոզերը լողանալու տեղ են փնտում և բնավ նրանց մեղքը չե, վոր իրենց ճանապարհին նրանք հանգիպում են վոչ թե լողարանների, ալլ ցեխով ու տըղմով լի փոսերի։



ԳԱԶԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայի կենդանաբանական այգում, ընդարձակ բացատներից մեկի վրա ապրում եր գազանների մի մեծ խումբ։ Բավական արտասովոր մի խումբ. յերկու գայլ, մուգ-գարչնագույն մի արջ, յերեք դորշուկ, վեց ուստուրիական ջրարջեր և նույնքան աղվեսներ։

Դրանց իրար հետ միացրել եյին գազանների վաղ մանկավայր որերին։

— Ի՞նչ եք անում, — ասում եյին այցելուներից վոմանք։ — Ձեր գազանիկները կմեծանան և անպայման կաեղդեն միմյանց։ Բնությունը անխախտելի բան եւ։

Անցավ յերկու տարի, գազանները մեծացան և բնավ «բնությունը անխախտելի» չեղափ։ Յեզ այդ խմբի մեջ գազաններից վոչ մեկը մյուսից չեր վախենում, բացի ֆերգանական շեկ գայլից, վորը բոլորի առջև քծնում եր։ Չնայած իր խոշոր հասակին և ամուր կազմվածքին, այդ գայլը միշտ վեհերոտ նայում եր իր շուրջը և կանխատեսորեն ճանապարհ եր տալիս մինչև իսկ փոքրիկ աղվեսներին։ Յեզ գազաններն այնքան ել չեյին սիրում այդ ստորաքարշին։

Մի ինչ վոր լուռ համաձայնությամբ գազանների ամ-



Գազանների բարեկամությունը։


Քողջխումը յենթարկվում եր խիստ և հկարգապահ» եղ-դայլ
Դիկտեյին: Սակայն նա քիչ հոգսեր ուներ, հաղլադեպ
եր խախտվում համերաշխությունը: Ամբողջ խումբը ընդ-
հանուր կեր եր ստանում և անպայման միաժամանակ բոյց
մինչև իսկ ճաշկերութիւ միջոցին ամեն ինչ բարեհաջող
եր անցնում: Յերբեմն միայն Դիկտե եղ-դայլը ուտելիքի
մոտ ցույց եր գալիս մեծ, ճերմակ ժանիքները և արդպի-
սի դեպքերում «Մաշկա-կրօշկա» կոչված համառ արջը
յետ-յետ եր գնում: Պատահում եր, վոր ագահ աղվեսները
աղահաբար խլում եյին ամենամեծ կտորները, — այն
ժամանակ գայլերը նրանց բերնից խլում եյին կերը:

Ամենից ինքնուրույն իրենց պահում եյին գորշուկ-
ները: Մինչև իսկ արջի հետ նրանք մոտիկ բարեկամներ
եյին:

Վեճերը միշտ ել շատ շուտ ելին վերջան ւմ, վորով-
հետեւ Դիկտեն անպայման վեր եր կենում տեղից և կըռ-
վարարներին գես ու դեն խոփիկ տալիս:

Իզուր ուժգին զգացողությունների սիրահարները ժա-
մեր շարունակ կանգնում եյին բացատի մոտ, սպասելով,
թե արդյոք չի սկսվի ընդհանուր ծեծկատոցը: Բացատի
բազմացեղ բնակիչները վոչ մի անգամ չեյին անցնում
ուղմական գրության: Այս արտասովոր համ սխմբակցու-
թիան մեջ կարդը նրանով եր բացատրվում, վոր գաղանսները
վաղ հասակից սովորել եյին միմյանց և նրանցից լուրա-
քանչյուրի մեջ առաջացել եր ուժիւքս, վորը չեր թույ-
լատրում թշնամական գործողություններ սկսել:

Մեր փորձը ակնհայտնի կերպով ցույց ե տալիս, թե վոր-
քան պայմանական և գաղանների բնութիւ մասին յեղած
պատկերացումը և թե ինչպես, աղղելով բնության վրա,
մարդը կարող ե այն փոխել հոգուտ իրեն:



ՈՐԱՑՈՒՅՑ ՅԵՎ ՈՏԱՐԵՐԿՐԱՑԻՆ

Հիանալի չոր յեղանակ եր: Շլացուցիչ փալլում եր
արել և շոգ եր մինչև իսկ հովասուն կանաչ ծառուղինե-
րում: Սակայն կենդանաբանական այգու ահագին պիտոն
ոձը, վորին Հնդկաստանից եյին բերել Մոսկվա, այնպես եր
պահում իրեն, վոր կարծես հիմա ձմեռ լիներ: Մեր պիտոնը
ըոլորովին կորցրել եր շարժունությունը. մինչև իսկ նրա
մոտ թողած խոզի ձուտը մնացել եր ապահով. պիտոնը ուշը
չեր դարձնում նրա վրա և նախկինի պես անշարժ պառկած
եր գուրս ցցված քարի տակ, այստեղ նա կարծես թե թագնը-
վում եր ցուրտ անձրեներից, վոր այդ ժամանակ սովորաբար
տեղում եյին նրա հայրենիքում Հնդկաստանում:

Իսկ ձմեռը, յերբ ցած են իջնում գորշ ամպերը և
թավ փաթիլներով թափվում ե ձյունը, մեզանում՝
կենդանաբանական այգում սկսում են բազմանալ ավտրա-
միական ջայլամեները: Ցավ չե, վոր այգին ամբողջ ծածկված
ե ձնակույտերով, — այդ ժամանակ Ավստրալիայում գար-
նան ամենալավ շրջանն եւ:


Հոկտեմբերին-նոյեմբերին սկսում են բազմանալ նաև սև կարապները, վորոնց հայրենիքը նույնպես Ավատրացիան եւ Սյդ ամբոներին մեր կենդանաբանական այգին յեկող այցելուն կարող եւ տեսնել, թե ինչպես պրտուցից խնամքով հյուսված բնում նստած եւ ձյունով փոշեպատ սև գեղեցիկ թռչունը —արուն: Կարապների բնում հինգ ձռւ կա: Դրանց հերթով տաքացնում են արուն ու եղբ:

Թվում ե, թե այսպիսի անսպասելի տարրինակություն համառ կերպով անցնում է սերնդից սերունդ և հատուկ ե կենդանիների շատ տեսակների:

Իսկ յերբ մեր կենդանաբանական այգու ոտարերկյա սաները տարեցտարի շարունակում են ապրել ըստ իրենց հայրենիքի «որացուցի», մենք ասում ենք. այդ բնախոսական ոիթմերն են գործում— այսինքն կրկնվում են տվյալ կենդանիների կենսառանձնահատկությունները վորոշ ժամկետներում:

Բավական ե ուշի ուշով հետևել, թե յերբ են չվում թռչունները, վորպեսզի համոզվենք մի բանում. վոչ թե ցուրտն ու սովն են նրանց հարկադրում աշնանը դեպի հարսավ թռչել: Վոսպնաթռչնիկները (չեչևից), սերինունները, կանաչաթռչնիկները և այլ հատիկակեր թեփավորներ մեզնից չվում են լավ չաղացած դրությամբ: Նրանք այն պահին են թռչում հարավ, իերբ հասունանում են մեծ քանակությամբ հունգեր, իսկ դրսում դեռ ևս տաք, չոր յեղանակ եւ:

Ի՞նչն ե պատճառը այս շտապողականության: Դա Փիզիոգիական պրոցեսների ժառանգական սեզոնականության մեջ ե, վորպիսի պրոցեսներ մշակվել և ամրապնդվել են գոյության կովի համար մղվող դաժան պայքարում:



ԲԱԶՄԱՑԵԼ ԸՆՏԱՆԻՔ

Մի անգամ ինչպես յեղավ կենդանաբանական ալգի բերին չորս շատ փոքրիկ կույր ժանտաքիսներ: Սկսեցինք վորոշել, թե դրանց ում տանք, վոր մեծացնի: Մեր ընտրությունն ընկավ ընտանի կատվի վրա, վոր հենց դրանից քիչ առաջ ձագեր եր բերել:

Մեր պատանի բիոլոգները, լավ իմանալով, վոր գառզաները ավելի հավատում են իրենց հոտառությանը, քան թե տեսողությանը, վճռեցին խորամանկությամբ խարել կատվին և նրա հարկադրել վորդեգրելու փոքրիկ ժանտաքիսներին: Վերցըին մի թաս ջրով լի և այստեղ լողացըին կատվի բոլոր ձագերին. հետո նույն այդ ջրի մեջ լողացըին ժանտաքիմներին: Հետո՝ բոլորին միասին—և կատվածագերին, և ժանտաքիսներին դրին կատվի տակ: Վերջինս սկզբում զգուշությամբ վերաբերվեց, սակայն քանի վոր միենույն ջրում լողացնելու հետևանքով ժանտաքիսներից կտավածագի հոտ եր գալիս, նա ալդ ընկեցիկներին ընդունեց

վորպես իր սեփական սերունդը և նրանց լիզեց վոչ
պահաս խնամքով, քան կատվածագերին:

Որեր անցան: Ընկեցիկները շատ լավ եյին զգում, լու-
րենց: Կատվածագերի հետ նրանք մեծանում և խաղում
եյին հոգատար խորթ մոր մշտական հսկողության տակ:

Այսպես մեղանում՝ կենդանաբանական այգում յերեան
յեկան միանդամայն ձեռնասուն: Ժանտաքիսներ: Նրանք
յերբեք հեռու չելին գնում իրենց բնից, թեպետ ոտար
մարդկանց տեսնելիս միշտ ել ֆշացնում եյին և աշխա-
տում վորեն անկյունում թագնվել: Այսինչ ժանտաքիսները
անմիջապես մոտ ելին վազում մեր պատանի բնագետներից
շատ-շատերին, յերբ կանչում եյին նրանց, և շոյվում
ելին, ասես կատվի ձագեր լինելին: Յեթե կատուն մուկ եր-
բերում և մեղմ մլավոցով իր սերնդին «Ճաշի» յեր կան-
չում, ժանտաքիսները առաջին եյին մոտ վազում և տի-
րանում վորսին:

Մի անգամ այնպես պատահեց, վոր իր ազատ արգե-
լարանից դուրս սողոսկեց աղվեսը: Զգուշությամբ, գողու-
նի, նա սկսեց մոտենալ գետնի վրա խաղացող ձեռնասուն
ժանտաքիսներին: Անհայտ ե, թե ինչով կվերջանար այս
վորսորդությունը, յեթե կատուն ժամանակին վրա չհաս-
ներ ի պաշտպանություն իր հոգեգավակների: Մեջքը
ձկելով նա կատաղությամբ հարձակվեց աղվեսի վրա և
հարկադրեց նրան նահանջել:

Այդ դեպքից քիչ հետո մեզ առիթ ներկայացավ մի
այլ հետաքրքիր փորձ անցկացնելու:

Առնետի բունը քանդելիս յես այնտեղ գտա իննը
փոքրիկ կույր ձագեր: Մենք կարիք ունեինք ձեռնասուն
առնետների:

Վերցրինք այդ ձագերից մեկին և այն տարանք կատ-
վի մոտ, վորը վերջերս ձագեր եր քերել: Կատուն իսկույն
ևեթ զգուշություն յերեան բերեց և պատրաստվեց փոք-

րիկ առնետին բոնել ատամներով: Ստիպված յեղանք իս-
կույն ևեթ նրան յետ վերցնել:

Այն ժամանակ մենք վճռեցինք այլ կերպ վարվել:
Ճիշտ նույն յեղանակով, ինչպես նախընթաց դեպքում,
մենք միւսնույն ջրում լողացրինք թե կատվի ձագերին և
թե առնետաձագերին: Հետո բոլորին միասին դրինք կատվի
տակ: Թաց կատվածագերը հուսակտուր ծվծվում եյին,
հուզելով կատվի մայրական զգացմունքները: Կատուն հո-
գատարությամբ լիզեց-չորացրեց վոչ միայն իր ձագուկնե-
րին, այլև առնետաձագերին, վորոնք լողանալուց հետո
կատվածագերի հոտն ունեյին:

Կատուն ընդունեց ընկեցիկներին, չնայած այն բանի,
վոր նրանք յերեք անգամ փոքր եյին, քան իր ձագերը:
Դագանը միշտ ավելի իր հոտառության և հավատում,
քան իր աչքերին, —մինչդեռ մենք լողացնելու խորաման-
կությամբ զանց առանք նաև հոտառությունը:

Կենդանաբանական այգու այցելուները մշտապես
խոնվում եյին այն վանդակի առջև, ուր ապրում եր այն-
քան արտասովոր այս փոքրիկ լնտանիքը և շատերն ասում
եյին, թե կատուն շուտով «միտքը կփոխի» ու կուտի,
վերջապես, իր սաներին: Իսկ մի պառակ կին մոտեցավ,
նայեց ու թքեց.

— Թու, մեղա քեզ, աստված, եսպես ել կատվին
մուռատառել կլինի...

Մենք համաձայն չեյինք պառակի կարծիքի հետ, և
շատ ուրախացանք փորձի հաջողությանը: Առնետաձագերը
քիչ մեծացան, նրանք բնավ չեյին նեղվում խորթ մոր և
նրա ձագուկների հետ միասին ապրելուց: Ճիշտ ե, կենդա-
նի մնացին վոչ բոլորը, այլ միայն հինգը, սակայն դրա
փոխարեն այդ հինգը ամենառուժեղներն եյին, ամենատո-
կունները և ամենից շատ եյին հարմարվել կյանքին: Իսկ
պատկեցին նրանք, ովքեր ավելի թույլ եյին և վորոնց բե-

բանները բավականաշափ մեծ չեյին, վորպեսդի կարողա-
նան վերցնել կատվի պառկները:

Իր ձագերի և հողեղավակների միջև կատուն վոչ մի-
խտություն չեր դնումնա նույն չափով խնամք եր-
տանում և սրանց և մյուսների նկատմամբ: Իրենից հեռու
գնացած առնետներին կատուն զգուշությամբ բռնում եր-
ատամներով և նորից տանում յետ, դեպի զամբյուղը:

Ժամանակին առնետները դարձան մեծ մկներ. նրանք
առաջվա պես խաղաղ ապրում եյին իրենց խորթ-մայր
կատվի հետ կողք-կողքի և սա հաճախ ուրախ խաղում եր-
նրանց հետ:

Սակայն կատվի մալրական զգացմունքները չեն սահ-
մանափակվում բերված որինակներով: Մի անգամ յես նա-
մակ ստացա Սավինո կայարանից. գրել եր յերկաթուղա-
յին վանելեվի կինը: Իր նամակումնա պատմում եր այն
մասին, թե ինչպես կատուն մեծացրել է հավի ճտերին:
Մի դժբախտ պատահականությամբ այդ ճտերը վորբանում
են լույս աշխարհ գալուց անմիջապես հետո: Իսկ այդ հա-
սակում նրանց, բացի կերից, անհրաժեշտ են նաև շերմու-
թյուն: Ահա հենց այդ շերմությունը նրանք ստացան
կատվի մարմնից ամեն անգամ, յերբ սկսում եյին մըսել:

Չվից նոր դուրս յեկած հինգ ճտերին վանելեվան
դնում ե այն արկղը, ուր նստած եր կատուն իր ձագերի
հետ: Հակառակ սպասածին, կատուն հուզիչ հոգատարու-
թյամբ ե վերաբերվում ճտերին և քնքությամբ լիզում ե
նրանց, յերբ նրանք ծվծվում են:

Բոլոր ճտերից կենդանի յե մնում միայն աքլորիկը:
Սա կատվի ձագերի հետ խսկական բարեկամություն ու-
ներ և կատուն, վոր հաճախ ճնճղուկ կամ այլ վորքիկ
ժտեր եր բերում իր ձագերին, յերբեք վորձ չարեց խեղ-
դել իր հոգեղավակին:

Մի այլ նամակում ուղարկան սավառնորդ Ս. Սու-

լեվը՝ Հյուսիսային յերկը Գառի կոչված գյուղից՝ պատ-
մում ե ավելի մի հետաքրքիր դեպքի մասին:

Վառարանի վրա, գլխարկի մեջ, ինչպես ինկուբատո-
րում, աղաները դնում են հավի յերեք ձու, վորոնցից դուրս
են գալիս ճտերը: Փոքրերից մեկը միտք ե հղանում—
ճտերին տալ Դիմկա անունով կատվին, վոր սա մե-
ծացնի նրանց: Դրանից քիչ առաջ կատուն մի քանի
ձագ եր բերել: Յերեկով, կատվի ներկայությամբ ճտերին
դնում են ձագերի մոտ: Դիմկան արագ կերպով հոտոտում
ե վողբաձայն ծվծվացող դեղին գնդիկները և փորձում ե
ճտերից մեկին բռնել ատամներով: Սակայն տղաները մի
լավ ծեծում են կատվին և սա հաշտվում ե արտասովոր
հարևանության հետ:


Առաջին որը ճտերը կատվի մոտ մնում են տղաների
հսկողությամբ յերկու ժամ, յերկրորդ որը՝ ավելի: Յեր-
բորդ որը վճռում են ճտերին կատվի մոտ թողնել նաև գի-
շերը: Գիշերումն անցնում ե միանգամայն բարեհաջող:

Այսպես անցնում ե յերեք շաբաթ: Ճտերը հանգիստ
քնում են կատվի ձագերի միջև, իսկ կատուն խնամքով
լիզում ե նրանց, ինչպես իր հարազատ սերունդը: Սակայն
չորրորդ շաբաթին ճտերից յերկուսը սատկում են. Դիմկան
անզգուշությամբ պառկում ե նրանց վրա: Գիշերը զբո-
սանքից վերադառնալուց հետո նա չափից դուրս անզգուշ
փոփում ե զամբյուղիկի մեջ:

Առավոտյան մեռած ճտերին տեսնելով, յերեխաները
նրանց դուրս են զցում ամբարի այն կողմը, սակայն կա-
տուն շուտով փնտում-գտնում ե իր մեռած սաներին,
ոկտամ ե հոտոտել նրանց, մի կողքից մյուսը շրջում, մեկ
հեռանում, մեկ նորից վերաբառնում: Յերեռեմ եր, վոր իր
սաների անշարժությունը սաստիկ անհանգստացնում եր
նրան: Կատվի հուզմունքը դադարեցնելու համար հարկ ե
լինում Դիմկայի մեռած վորդեղիրներին թաղել գետնի մեջ

Ակապիսով մնում ե մի ճուտ, կատվի հետ կողք-կողքի
նա ապրեց յերկու ամիս, մինչև վոր կատվաձագերը սրան
ու նրան նվիրվեցին։ Սակայն հետո ել այս բարեկամու-
թյունը չդադարեց։

Կատվի մայրական զգացմունքները անսահման են-
նա հեշտությամբ ընդունում և աճեցնում ե բոլոր անոդ-
նական փոքրիկներին, մանավանդ յերբ նրանք ընկնում
են նրա բունը։



ԿԱՍԿԻՐԸ ՅԵՎ ԿԱՍԿԻՐՈՒՇԻՆ

Մոսկվայի կենդանաբանական այգին եյին բերվել
յերկու յերիտասարդ գայլեր։ Նրանք քույր և յեղբայր
եյին և անունները դրել եյին կասկիր և կասկիրուհի,
վոր զազախերեն նշանակում ե արու և եղ գայլ, նրանց
բերին Բարսուկի կոչված անապատից, վոր ընկած ե Արա-
լան ծովից հյուսիս։

Մեր կենդանաբանական այգում շատ գայլեր յեղան
և նրանք բոլորն ել սաստիկ տարբերվում եյին մեկը մյուռ-
սից, մի քանիսը հեշտությամբ եյին ընտելանում, թեպետ
և նրանց բոնել եյին վոչ փոքր հասակում. մյուսները ման-
կությունից ցուց եյին տալիս գիշատիչի վայրենությու-
նը։ Իսկ կասկիրը և կասկիրուհին հենց առաջին որերից
անչափ խաղաղ եյին պահում իրենց և շատ արագ դարձան
միանգամայն ձեռնասուն։

Շուտով մենք նրանց մեզ հետ տանում եյինք դասա-
խոսությունների—բանվորական ակումբները, կարմիր-բա-
նակայինների զորամասերը և դպրոցները։ Կարճ միջոցում
յերկու զազանն ել սովորեցին կենդանի եքսպոնատներ լի-
նելու դերին, հաճույքով թռչում-նստում եյին ավտոմոբի-
լի վրա և հլու-հնազանդ նստում եյին սեղանին՝ դասախո-
սի առջե, ուշադրությամբ հետևելով նրան և լսարանին։

կենդանաբանական այգու մեծ լսարանում բազմա-
մարդ դասախոսության ժամանակ յես խոսում ելի՛ ընտա-
նի շների ծագման մասին, իսկ կասկիրուհին սպա-
սում եր, վոր ամբիոն դուրս գա, բեմի յետևում կա-
պած նստած: Յերբ լեկավ ժամանակը՝ եղ դայլը ցույց
տալու, նա իր տեղում չկար: Զանձրանալով նստել մենա-
կության մեջ, նա հանել եր վզակապը և թողել փախել:

Մենք յերկյուղ ունեցանք անախորժություններից. չե՞ վոր կենդանաբանական այգին լիքն եր ժողովրդի բազ-
մությամբ: Սակայն կասկիրուհին շատ խաղաղ եր տրա-
մադրված: Նա այգու միջով հանգիստ վազում եր ուղիղ
դեպի իր վանդակը: Հենց այդտեղ ել մենք դտանք փա-
խըստականին: Նա նստած եր դուան քիալ մոտ և խնդրում
եր ներս թողնել իրեն:

Մի ուրիշ անգամ կասկիրուհին մեզ վախեցրեց ել
ավելի, փախչելով Զամոսկվորեչյեյում տեղի ունեցող դա-
սախոսությունից: Բայց այդ անգամին ել մեր յերկյուղ-
ներն անհիմն եյին: Սլանալով Մոսկվայի փողոցներով, եղ
դայլը գտել եր տան ճամբան և վերստին յեկել եր վան-
դակը, վոչ վաքի. չվասելով:

Հստ յերեւութին, փողոցում վոչ վոք ուշագրություն
չի դարձնում եգ-դայլի վրա, իսկ ով ել վոր տեսնում ե,
նրան ընդունում ե վոչխարապահ մեծ շան տեղ:

Այն մարդկանց, վորոնց իրենք լավ գիտեն, կասկիրը
և կասկիրուհին արտասովոր փաղաքշանքով են վերաբեր-
վում: Մենք փորձեցինք այսպիսի մի խաղ+ իբր թե հար-
ձակում տեղի ունեցավ այն մարդկանց վրա, վորոնց կտս-
կիրը և կասկիրուհին սաստիկ սովորել ելին, — դայլերը մի
ակնթարթում չարացան և սարսափելի դարձան:


Առանց նախնական վորեւ սպառնալիքի նրանք ամեն
կերպ աշխատում ելին իսկույնևթ բռնել վիրավորողի կո-
կորդից: Այդ «թշնամիներին» գաղանները յերկար ժամանակ
չելին մոռանում և բավական ե, վոր «հարձակի վողները» հետո

յերեւային վանդակի մոտ, գալիերն իսկույն ևեթ սկսում եյին
պակոտել յերկաթյա ձողերը, ջանալով ազատություն դուրս
դալ և իրենց ուղածին պես հաշվեհարդար տեսնել սիրած
մարդկանց «վիրավորողների» հետ:

Հիմա կասկիրը և կասկիրուհին մեծ, հաղթանդամ գայ-
լեր են գարձել: Նրանց հետ առանց շղթայի ազատ կարելի յե
զբունել քաղաքից դուրս գտնված վայրերում: Հակառակ
առածի, նրանք «գեպի անտառ չեն նայում», թեպետ նրանց
արագավագությունն այնպիսին ե, վոր նրանք հեշտ կա-
լող են համար մինչև իսկ ամենաարագավագ նապաստակին:

Գայլերին ուսումնասիրելը իրոք մեզ համոզում ե, վոր
այդ կենդանիները՝ մոտավորապես տաս հազար տարի
առաջ՝ պետք ե լինելին այն հիմնական վայրի նյութը,
վորից և կազմվել են այդպիսի մեծ քանակությամբ ընտանի
հների զանազան ցեղերը:

Նա, ով կենդանաբանական այգում հաճախ ե տեսնում
գայլերին, կարող ե նկատել, վոր նրանք բոլորն ել սոսկ
ընդհանուր արտաքին նշաններ ունեն և շատ հատկություն-
ներով (վորակումներով) սաստիկ տարրերգում են միմյան-
ցից: Հենց այս տարբերություններն են, վոր հնարավոր են
դարձրել լայնորեն անցկացնել արհեստական ընտրությունը
զանազանակերպ ջնատեսակներ ստանալու համար: Յեկ
աակայն, ամենասովորական գայլին անգամ կարելի յե սո-
վորեցնել, նրան լծասարքավորման ոգնությամբ ոգտագոր-
ծելու համար: Հեռու հյուսիսում տարգող աշխատանքների
մեջ գայլերի հետ չի կարող համեմատվել և վոչ մի շուն
իր մկանների ույժով և գիմացկունությամբ:



ՍԱՐԴԱԿԵՐ ԵԳ ԳԱՅԼԸ

Ողոստոսյան մի պայծառ տուավոտ, յերբ ոլաքավարկանակը իր աշխատավայրում եր, նրա ութ տարեկան աղջկը զբունում եր դաշտում անտառի հենց յեղին, կոչետովկա գյուղի մոտ, անսպասելի կերպով մացառուտներից դուրս ցատկեց մի մեծ եղ գայլ, նա հարձակվեց աղջկավրա, բռնեց ատամներով և քաշ տվեց անտառի թափուտի լուրքը, Յերեկոյան միայն ծնողները գտան իրենց աղջկառշոտված մարմինը:

Անցավ յերկու որ: Յեկ նույն եղ գայլը վերստին հարձակվեց յերեխայի վրա կամենկա գյուղի Սաֆոնով ազգանունով կոլտնտեսականի տաս տարեկան տղայի վրա: Այս տղան ևս մահացավ ճիշտ նույն կերպ, ինչպես մահացել եր ոլաքավարի աղջիկը:

Յերկու դեպքն ել տեղի ունեցան 1935 թվի աշնանը, Կույրիշեյան յերկրամասի Տագայսկի շրջանում: Նրանց մասին իր նամակում պատմում եր վորսորդ Դոբրոխոտովը:

Չափազանց քիչ են այսպիսի դեպքերը: Մինչեւսկ մահացու վիրավորված գայլը յերբեք չի փորձում հարձակ-

վել մարդու վրա: Մեզ առիթներ են յեղել տեսնել թակարդ լնկած գայլեր, —նրանք միշտ ել «պոչերն իրենց եյինքաշում» և սոսկ ատամները շրխկացնում, վոչ մի դիմադրություն ցուց չտալով վորսորդին: Ծնող-գայլերը նույնպես սովորաբար հեռու լեն մնում մարդուց, յեթե մինչեւսկ նա քանդում ե նրանց բունը և սպանում ձագերին: Մինչդեռ շատ ուժեղ են լինում գայլերի ծնողական զգացունքները:

Հապա ինչով ե բացատրվում եղ գայլի այդ արարմունքները Տագալսկի ուայրնում: Պետք ե լինթաղբեր վորայդ գայլը մի ժամանակ ձեռնասուն ե յեղել, սակայն վախչելով, վայրենացել ե: Այսպիսի մի դեպք տեղի ունեցավ նաև մեզանում՝ կենդանաբանական այգում ուր յերկար ժամանակ ապրում եր ժենկա անունով եղ գայլը: Նա այն սասին ձեռնասուն եր, վոր մեր պատանի բնագետներից շատերը առանց յերկուողի մտնում եյին նրա վանդակը: Հետագայում ժենկային ուղարկեցին շնաբուծարաններից մեկը. ճանապարհին նա կտրում ե շղթան ու վախչում, իրեն աղատ զգալով, այս գայլը գեպի յետ՝ քաղաք ե սլանում, սակայն մոլորդում ե և չի կարողանում գտնել կենդանաբանական այգին: Այն ժամանակ նա բնակություն ե հաստատում կոսինուտրովովսկում, Մուկվայից շատ մոտ:

Շուտով տեղական բնակչությունը անհանգստանում ե, անտառով անցնող յերեխաների վրա մի քանի անգամ հարձակվում ե եղ գայլը: Յերջանիկ պատահականությամբ միայն գոհեր չեն լինում: Գաղանին սպանելու համար շուրջկալ են անում, վորին մասնակից եյին նաև մեր կենդանաբանական այգու պատանի բնագետները: Սպանված եղ գայլին տեսնելուն պես նրանք ճանաչում են ժենկային:

Այսպիսով, սովորական պայմաններում գայլը չի հար-

Հակվում մարդու վրա: Իսկ յեթե այնուամենայնիվ դա
պատահում ե և գաղանին զոհ են դառնում մեծերը, նշա-
նակում ե, թե գայլը կատաղած ե:

Մի անգամ յես նամակ ստացա Հյուսիսային յերկրա-
մասից. պատմված եր Ուստ-Ալեքսեևսկի ռայոնում տեղի
ունեցած գեղքի մասին:

Ուշ յերեկոյան կոլտնտեսական Զեբիկինը ջրաղացից
տուն ե վերադառնում—գեղի Պաշկովո գյուղ: Հազիվ ինչ նա
քանդում ե ձիու լծասարքը, յերե նրա վրա յե հարձակվում
չգլուխ վորտեղից լույս ընկած մի գայլ: Գաղանը գետին
ե շպրտում կոլտնտեսականին, պատառուառում նրա հագի
քուրքը և սաստիկ կծում նրա ձեռքը: Գայլը միայն այն
ժամանակ ե փախչում բակից, յերբ Զեբիկինի աղաղակների
վրա հայտնվում են միքանիսը նրա համազյուղացիներից:

Հետո գաղանի կծած կոլտնտեսականը իր տաս տա-
րեկան վորդու հետ ուղեվորվում ե գեղի ուայոնական հի-
վանդանոցը: Վերքը կապելուց հետո նա դուրս ե գալիս
ընդունարանի շեմքը և հենց այդտեղ նորից տեսնում ե կա-
ռապի գալին: Մի ցատկումով ահագին գաղանը գետին ե գլո-
րում Զեբիկինին և սկսում ե գեղենրա հագուստն ու մարմինը:
Հետո, հորը թողնելով ձյան յերեսին, գայլը հարձակվում ե
տղայի վրա: Այս սոսկալի պատկերը պատռհանից տես-
նում ե հիվանդանոցի տնտեսվար Դերնովը: Հրացանը ճան-
կելով նա դուրս ե վազում և կրակում: Վերևի ծնոտից
վիրավորված գաղանը մի րոպե նահանջում ե: Նա մի
պտույտ ե գործում հիվանդանոցի շուրջը և նորից հայ-
տընվում կովի վայրում: Այդ միջոցին մոտ ե գաղումնաե
քուժակ Մելեխինը: Նա արդեն նշան ե առնում, սակայն
գաղանը մի ակնթարթում վրա յե թուչում և իր մարմնով
ծածկելով, գետին շպրտում նրան: Այն ժամանակ Դերնովը
նորից բարձրացնում ե իր հրացանը: Գայլը նետվում ե
գեղի նա, սակայն վորոտում ե կրակոցը—և գաղանը գե-

տին ե ընկնում: Յերկրորդ լիցքը նրան սպանում ե տեղ-
նուածեղը:


Նամակը վերջանում եր հետեւյալ հարցով.

«Ինչով եք բացատրում դուք, պրոֆեսոր, գայլի այդ
հանդուգն հարձակումը»:

Պատասխանը յես ուղարկեցի հեռադրով.

«Գայլը կատաղած ե: Անհրաժեշտ ե պատվաստում:
Զպետք ե հապաղել և վոչ մի բոպե»:

Գայլերը ահագին վսաս են տալիս ԽՍՀՄ-ում՝ հորթեր
պատառտելով, վոչխարներ և այլ գյուղատնտեսական կեն-
տանիներ վոչնչացնելով: Նմանապես և շատ վորս են նրանք
փչացնում: Պայքար գայլերի դեմ—հերթական խնդիրներից
մեկն ե. գայլը պետք ե վոչնչացվի վորպես վասարար:



ԴԻՆԳՈ

Մի քանի տարի առաջ Մոսկվայի կենդանաբանական ալգին ստացավ յերկու վայրի ավատրակիական շներ - դինդու: Եատ շուտով նրանք այնքան սովորեցին մեր պատանի քնագետներին, վոր նրանց հետ ազատ զբոսնում եին այգում: Յեռանդուն և զվարթ, այդ շներն աչքի յեն ընկնում զորեղ կազմվածքով, արագավազությամբ և ճարպակությամբ, սուր հոտառությամբ ու լսողությամբ, լավ տեսողությամբ, ուժեղ զարգացած վորսորդական բնազդով և քաջությամբ: Այս բոլոր հատկությունները անհամեմատ բարձր են դասում դինդոյին մեր վորսորդական գազանորս շներից: Դինդոյի լակոտները, վորոնք աշխարհ յեկան կենդանաբանական այգում, սովելի մարմնեղ ու ամուր եյին քան իրենց ծնողները:

Կենդանաբանական այգու ընդարձակ բացատի վրա ջահել դինդոնները զվարթ խաղեր են սարքում առյուծի կորյունների և արջաքոթթների հետ: Այդպիսի դեպքերում դինդոնները յերեան են բերում շան ըմբռնողության բարձրագույն աստիճանը: Իրենց մտերիմ քոթոթի հետ քաշը վելիս նրանք սովորաբար այնպես են խաղում, վոր իբր թե վորսում են նրան: Հարմար ըովե գտնելով, լակոտները՝ ասես հրամանի համաձայն՝ բռնում են քոթոթների ականջներից և նրան սեղմաւմ գետնին: Ուժեղ քո-

թոթը փորձում ե թաթերով բռնել շներին, սակայն սրանք այնպիսի գիրք են բռնում, վոր վոչ մի կերպ հնարավոր չի համնել նրանց: Վերջապես բռնում ե արջուկի կատաղությունը և այն ժամանակ լակոտները հազիվ միջոց են գտնում նրա թաթալրշներից մի կողմ փախչելու: Սակայն այդ վեճերը շատ կարծ են տեսում: մի քանի վայրկյանից նրանց խաղերը նորից են սկսվում:

Դինդոնները շատ լավ են ըմբռնում մի քան, վոր չեկարելի հաշվի չառնել գագաղած կորյունի հարվածի ույժը և մագիների սրությունը: Այդպիսի անսաստ բարեկամի հետ խաղալիս լակոտները շատ ուշադիր հետևում են նրա շարժումներին: Նկատելով վոր կորյունը փոքր ինչ սեղմում ե իր ականջները, իսկ նրա պոչի ծայրը սկսում է ջղայնաբար ցնցվել դինդոններն իսկույն թողնում են իբր թե առյուծ վորսալու խաղը:

Խաղով տարգելով, կորյունները յերեմն ցատկումքարձրանում են ծառի բնի վրա, սակայն արդեն մեկուկես յերկու մետրից վախենում են իջնել գետին, վորովհետեւ շատ վատ են մաղլցում: Այդ ժամանակ ծառը շրջապատում են դինդոյի ձագերը: Բայց նրանց հետաքրքրում ե վոչ թե կորյունը, այլ այն «վորսը», վորը իբր թե փախել պրծել ե կորյունի ձեռից և թագնվել ե վերին ճյուղերի կանաչի մեջ: Դինդոններն սկսում են թռչել ծառի վրա, աշխատելով համնել բնի այն մասին, վորը բարձր ե գտնվում անողնական կառչած կորյունից: Այդ ցատկումների միջոցին նրանք արագ կերպով հոտոտում են կորյունի շրթունքները, ինչպես նաև ծառը, կարծես թե վորսալով թագնված զոհի հոտը: Մեկ ել հանկարծ դինդոններն անցնում են պաշարման: Նրանք նստոտում են ծառից վորոշ տարածության վրա և սկսում են ուշադրությամբ դիտել ծառի ճյուղերը, ասես հետազոտելիս լինեն այնտեղ «թագնված» վորսը:

Դինգոները հաջում են խուլ ու ընդհատ, իսկ վոռամ են ինչպես գալիքը: Վորոշ դինգոներ հաջելու յեղանակը բավական արագ սովորում են մեր շներից:

Լավագույն գազանորս ցեղալին շները չունեն մինչև իսկ մեկ տասներորդն այն վորսկան հատկություններից՝ վորոնցով ոժտված ե դինգոն: Ահա ինչու շատ մեծ հետաքրքրություն են ներկայացնում սկսված փորձերը՝ վորոնորդական նոր տեսակի շներ ստանալ դինգոների և լայքաների, դինգոների և քերձեների և դինգոների ու գերմանական վոչխարապան շների խառնուրդից:

Այս փորձերը պետք ե նաև լույս սփռեն ընտանի շների և դինգոների տոհմագրության վրա, վոր դեռ ես պարզ չեմ, վոր դինգոների վոսկորները Ավստրալիայում գտնված են անհամեմատ ցած գետնի այն շերտերից, ուր առաջին անգամ հանդիպում են մարդու յերեալու հետքերը:



ԳԵՏՆԱՓՈՐ ՇՆԵՐ


Որենքուրդի սպանդանոցը գտնվում է քաղաքի ամենահեռու արվարձանում: Սպանդանոցի կողքին—մի մեծ խրավանդ: Այնտեղ եյին հորում սպանված կենդանիների դիակները, յեթե բժիշկները հայտնաբերում եյին վարակիչ հիվանդություններ: Սկզբում կենդանիների դիակները դարսուում եյին վոչխոր փոսերում, սական հետո պարզվեց, վոր այդպես չի կարելի. խրավանդում հավաքվում եյին շների վոհմակները և հեշտութիւմբ փորում-հանում եյին թաղված լեշերը. գործը լուրջ կերպարանք եր ստանում—չե վոր շները կարող եյին վարակը տարածել քաղաքում: Հարկ յեղավ հորերն ավելի խորն անել: Սակայն այդ ել չոգնեց—շները համառ կերպով փորում հանում եյին կենդանիների դիակները մինչև իսկ մի քանի մետր խորություն ունեցող հորերից:

Որենքուրդցիւերից վոմանք դիտել են գետնափոր շների աշխատանքի «տեխնիկան»: Իր նամակում ընկեր Խարիտոնովն այսպես եր պատմում այդ մասին.

«Յես ապշտծ եյի, տեսնելով այն կարգը, վոր իշխում ե պեղումներով զբաղված շների վոհմակի մեջ: Հազիվ ինչ սկսում եր հոգնել հողը փորող շունը. յերբ նրան անհապաղ փոխարինում եր մյուսը: Իսկ փոսը քանի գնում այնքան խորանում եր, հա խորանում....»

Իրոք, վորսորդները հաճախ տեսել են, թե չները
ինչ հեշտությամբ կարող են մեծ փոս փորել, ըստվորում
վոչ միայն փխրուն հողը, այլ մինչև իսկ բոլորովին խա-
մը։ Պատահում ե, վոր վորսի ժամանակ չները վորեւ
մանր գաղանի հալածում են այնքան, վոր սա մտնում ե
առաջին պատահած խոր վորջը։ Շներն սկսում են քան-
դել այդ բունը, արագ-արագ աշխատելով առջեի թաթե-
րով։ Դա հեշտ զբաղմունք չե և շունը շուտով հոգնում ե։
Հոգնելուց հետո նա պառկում ե քիչ հեռու, իսկ նրան փո-
խարինում ե մյուսը, վոր մինչ այդ անշարժ կանգնած եր
կողքին։ Սովորաբար այդ փոխարինումներն այնքան արագ
են տեղի ունենում, վոր աշխատանքը չի դադարում և
վոչ մի ըոպե։

Հանգստանալիս չորքոտանի գետնափորը բոլոր
ժամանակ հետեւում ե իրեն փոխարինող շանը և անհա-
պաղ նորից աշխատանքի լե անցնում, հազիվ ինչ առա-
ջինը դանդաղեցնում ե իր շարժումները։



ՅԵՐԲ ՇՈՒՆԸ ՉԻ ԱՌԱՌԻՄ ԲԱԴԻ ՀՈՏԸ

—Համա թե ձեռս շուն եր ընկեր, հա՛ Յերևակայեցեք
բաղը նստած եր ձվաների վրա, իսկ ես շունը հանգիստ
անցավ մոտով յերկու քայլի վրա։ Շուն չե, ալ-քաֆ-
թառ ձի՝ հարրուխ ընկած...

Այսպես վրդովվեց մի փորսորդ։ Մինչդեռ խեղճ շու-
նը ընավ մեղավոր չեր. յերևան հանել ձվերի վրա նստած
բաղին դժվար ե մինչև իսկ լավագույն հոտառություն
ունեցող շանը։

Ինչպես հայտնի յե, թոշնի մարմնի վրա չկան վս
ճարպային, վոչ ել քրտնքի գեղձեր։ Այդպիսի գեղձ կա
միայն պոչի հենց վրա։ Դա կոչվում ե կոպչիկային և
արտադրում ե բուրալից ճարպային նյութ։ Թոշունը կտուցով
սեղմում հանում ե յուղը գեղձիկի միջից և դրանով ոժում
իր փետուրները։ Ահա այս ե պատճառը, վոր բոլոր ջրային
թոշունները կարող են յերկար մնալ ջրի յերեսին, ընավ
չժրջվելով։ Իզուր չե, վոր ասում են. «սագի վրա ջուր
կմնա»։

Իսկ յերբ թոշունը նստած ե ձվերի վրա, նա չի ո-
ծում իր փետուրները յուղով և կորցնում ե այն հոտը, վո-
րը հնարավորություն ե տալիս շանը առնել վարսի հո-

տը մի քանի տասնյակ մետր հեռավորությունից: Այսպիսի առանձնահատկությունը թևավորներին փրկում է թուխս նստած ժամանակամիջոցին. յերբ բացակայում ե թոշնի հոտը, գիշատիչները դժվարությամբ են յերեան բերում նրանց: Բացի այդ, յուղոտ բարուներն անխուսափելիորեն կճարպուելին ձվերը, իսկ դա հղի յե աննպաստ հետևանքներով, ձվակճեղի փակված ծակոտիներով չի անցնի ողի թթվածինը և ձվից դուրս դալիք ճուտը կիսեղղվի առանց լույս աշխարհ տեսնելու:

Սակայն հենց վոր բաղիկները դուրս են գալիս ձվերից, մայրերն սկսում են «հարդարել» իրենց և արագ կերպով իրենց փետուրները ծածկում են յուղի բարակ շերտով: Յուղի փոքրիկ կաթիլը, վոր կտուցով սեղմելուց հետո դուրս ե գալիս պոչի վրա գտնվող պտուկից, հոսում ե կտուցի յեղիբափոսիկներով, վորոնց միջոցով բաղը մեկ.մեկ անցկացնում ե իր փետուրները, ասես յերկու յուղոտած զլանակների արանքով: Վիզն ու գլուխը նա ոծում ե վերջին հերթին, քսելով լուղոտած փետուրներին: Միաժամանակ նա արթուն կերպով հետեւում ե իր բաղիկներին և կոխնչով նախազգուշացում ե տալիս, հազիվ ինչ նկատում ե վերահաս վտանգը:

Յեթե բաղիկները զրկվում են մորից և մեծանում առանց նրա խնամատարության, ապա նրանք հաճախ չեն կարողանում մնալ ջրի յերեսին և ընկղմում են: Մինչդեռ իրենց մոը հսկողության տակ գտնվող բաղիկները լողում են ամբողջ ժամեր և ջրից դուրս են գալիս միանգաման չոր:

Թե ինչումն ե գաղտնիքը, դժվար չե գլխի ընկնել. իրենց մոր տակ տաքանալիս բաղիկները քսվում են մոր յուղոտած փետուրներին և նրանց աղվամազը նույնպես ծածկվում ե յուղով: Շնորհիվ զրան և բաղիկները չեն ընկղմում: Իսկ «անապաստանները» վնրտեղ պետք ե ոծվեն, իսկ իրենք ինչպես կարդն ե գեռ ևս չեն կարողանում կարդի բերել իրենց հարդարանքը: Զրի մեջ նրանց աղվամազը հաճախ թրջվում ե և բաղիկները կամ ընկը. մում, հատակ են իջնում՝ կամ թե ցրտից սատկում են:



ԳՈՐԾՈՒԿՆԵՐԸ ՅԵՎ ԱՐԵՎԸ

Կարծեմ, բավականաշափ լայնորեն հայտնի լե, վոր առանց արեի ճառագայթների չի կարող զարգանալ և վոչ մի կաթնասուն: Սակայն ի՞նչպես են մեծացնում իրենց ձագերին այնպիսի կենդանիները, ինչպես գորշուկներն են, վորոնք միշտ ել ապրում են մութ բներում: Չե վոր այդպիսի ստորերկրյա բնակարաններում պատուհաններ չկան: Ու մինչդեռ, թվում ե, թե մատղաշ գորշուկներին նույնպես պետք ե արել:


Այս հարցը հեաաքրքրեց Մոսկվայի կենդանաբանական այզու աշխատակիցներին: Պատանի բնագետների բրիգադաները հերթապահություն սահմանեցին գորշուկի բնի մուտքերից վոչ հեռու, ցանկանալով ինչ գնով ուղում ե լինի պատասխան ստանալ իրենց հետաքրքրող հարցին:

Պատանի բնագետներն որ ու գիշեր չեյին թողնում իրենց դիտակետերը: Յեվ ահա պարզվեց, վոր պարզ որեւբին գորշուկների մայրն առավոտներն իր ձագերին դուրս ե բերում թարմ ողի մեջ: Զգուշությամբ նրանց ատամներով բռնելով, մայրը ձագերին տանում եր այնտեղ, ուր արևն եր լուսավորել, սակայն յերբեք չեր դնում բաց ճառագայթների տակ, այլ միշտ տեղավորում եր թփի և ծառի տակ:

Ամեն ինչ լավ է, յեթե չափով եւ լինում և դա առանձնապես վերաբերվում եւ արեի վաննաներին։ Դորշուկ։ Ների մայրը շտապով նորից բունն եր կրում իր կույր ձագուկներին, հենց վոր սրանք սկսում ելին աղաղակ բարձրացնել։ Այդպիսի գեղքերում նա շատ եր շտապում և հաճախ փորձում եր ատամներով բռնել վոչ թե մեկ, այլ միանդամից յերկու գորշուկների։

Նման փութկոտությունը բնավ ավելորդ չե. հաճախ մթության սովոր գաղանիկներն արեի վտանգավոր հարվածներ են ստանում։ Այդպիսի հարվածներից մեր կենդանաբանական այգում մի անգամ սատկեցին յերկու փոքրիկ վազքեր, վորոնց վանդակից դուրս եյին բերել արեի տակ։ Նույն վիճակն ունեցան և ուխտիտի կոչված կապիկը և աֆրիկական իժը և մինչև իսկ վարան կոչված հոկայական մողեսը, վորը ամբողջ ձմեռը նստել եր մութ հողարկում (տերրարիում)։

Արեն անհրաժեշտ ե կենդանիներին, սակայն շատ վտանգավոր ե ի չարը գործ դնել այն։



ԶԵՐՆԱԾՈՒԻՆ ԻՇԱՅԾՅԱՄՆԵՐ

Մի քանի տարի առաջ Մոսկվայի պատանի բնագետներին հանձնարարված եր հոգ տանել յերկու ծծկեր-իշայ-ծյամնիկների մասին, վորոնց նոր բռնել եյին կիրովյան մարդի անտառներում։ Պատանի բնագետները նրանց կերակրում եյին ծծակով—կաթ եյին խմացնում և հոգ տանում փորձգած ծծմայրերից վոչ վատ։

Յերբ մեր իշայծյամները քիչ մեծացան, պատանի բնագետներն սկսեցին նրանց սովորեցնել սանձի և լծասարքի։ Դժվար չեր սովորեցնել իշայծյամներին։ Նրանք զարմանալի կերպով հլու-հնազանդ եյին և մի քանի ամսից արդեն սկսեցին սովորել լծվելուն։ Պարզվեց, վոր իշայծյամները շատ հանգիստ բնագործություն ունեն և չեն վախենում մեծ քաղաքների փողոցային աղմուկից։ Միայն մի անգամ սահնակին լծված իշայծյամները հանկարծ խրտնեցին, կտրեցին ձգիչ փոկերը և տակովն արին իրենց գլուխը կորցրած դեկավարներին։

Մի այլ անգամ իշայծյամները վախեցան... սովորական փոքրիկ լեռնային նապաստակից։ Բանն այն ե, վոր աղատության մեջ նապաստակն աղաղակել գիտե, յեթե միայն նրա վրա յե հարձակվում թշնամին, որինակ՝

սոսկալի լուսանը կամ մի այլ գաղաճ: Ամբողջ կենդանաթէ
կան աշխարհը նապաստակի աղաղակն ընդունում ե վոր-
պես վերահաս վտանգի ազդանշան: Այդպես պատահեց և
այդ անգամի պատանի բնագետներից մելքը բռնեց նապաս-
տակի յետեի վոտներից ու ականջներից, վորպեսզի նրան
մի այլ գանդակ դնի. նապաստակը վախեցավ և ճղավեց:
Իշայծյամները լսեցին այդ ազդանշանը և սարսափած
խրտնեցին հեռու այն տեղից, ուր ինչպես ցույց եր տա-
լիս նապ ստակի աղաղակը, կարող եր թագնված լինել
արյունաբրու գիշատիչը: Ընդհանրապես իշայծյամը չա-
փազանց հանգիստ բնավորություն ունի և շատ շուտով
դառնում ե ձեռնասուն: Աֆանասեվո գյուղում (Գորկու
մարզ) կոլտատեսականները սի անգամ ինչպես և լի-
նում փորսում են մի ջանել իշայծյամ և առաջարկում
են Մոսկվայի կենդանաբանական այգուն: Ընդունող աշ-
խատակցին սպասելով, կոլտատեսականներն իշայծյամին
տեղ են հատկացնում ախոռում, մսուրի առջե և խնամ-
քով հոգ են տանում նրա մասին: Մեր աշխատակիցն ու-
շանում ե: Շուտով իշայծյամն այնպես ե սովորում իր
նոր վիճակին, վոր սկսում ե ազատ ման գալ գյուղի
փողոցներում, միշտ ել վերադառնալով իրեն հատկացված
տեղը: Իշայծյամին անտառ քշելու փորձը հաջողություն
չունեցավ, կես ժամից նա նորից վերադարձավ գյուղը
և ինքը մտավ ախռոատուն:


Մի այլ ձևնասուն իշայծյամ ապրում ե Ոք գետի
ափերին, Դեմյանկայի ռայոնում։ Այնտեղ նրա վրա բեռ-
ներ բարձած կը ռում են տեղ՝ ց տեղ, յերբեմն ել նա վոր-
սորդների հետ գնում ե անտառ, ուր և գիշերում ե մարդ-
կանց հետ միասին խարույկների մոտ։

1934 թվին գորսորդաբան Ն. Պյաղիշևը տեղեկաց-
րեց այն մասին, վոր Հյուսիսային յերկրամասի արևմը-
տյան մասում շատ իշայծյամներ են յերեացել, գորսո-

Ղարելիայից և Բելոմորսկ-Բալթյան ջրանցքի շինարարության այլ տեղամասերից են այստեղ քոչելու Մալոցույկա, Կալդաշյանա, Տուրչակովո գլուղերին մոտիկ իշալծյամները հաճախ արածում ելին կովերի նախրի հետ, լեռբեմն և մոտենում ելին բնակավալը երին:

Իշայծյամին այսպես հեշտ սովորեցնելը մեծ հետա-
քըրքը ություն և ներկայացնում։ Իշայծյամը խոշոր, շուտ
մեծացող կենդանի յե, բացի այդ մեծ ուժ ունի։ Նրա
միսը համով և անդարձարությամբ յետ չի մնում կովի
մսից։ Ի դեպ, կովը մեկ-մեկ հորթ ե բերում, իսկ իշայ-
ծյամները շատ հաճախ զույգ ձագեր են բերում։

Սակայն ձեռնասուն իշխանամբ շատ ոգտակար կլի-
ներ վոչ միայն իբրև մսատու կենդանի, — նրան հաջողու-
թյամբ կարելի յե ոգտագործել նաև բեռներ կրելու կամ
տայգային շերտում փոստային ճանապարհները սպասար-
կելու մեջ։ Տայգայում քիչ կա այսպիսի կանաչ, վորն
անհրաժեշտ ե ձիերին, չկա յեղջերվամամուռ կոչված բույսը,
վորով մնվում են յեղջերուները։ Դրանց փոխարեն այն-
տեղ անհաշիվ քանակությամբ փայտանյութային ընձյուղ-
ներ են բանում և հենց դրանք են, վոր կազմում են իշխա-
ծյամների հիմնական կերը։ Շնորհիվ իր լայն սմբակների
և վոտքի մատների առաջին յերկար հոդի վոսկրի, իշխ-
ծյամը չի խրվում ճահճախոտի մեջ և հեշտությամբ և
հաղթահարում խոր ձյունը, իսկ վագոլ կարող ե ազնվա-
բեղ ձիուց վոչ պակաս։




ԱՇԽԱՆԱՅԻՆ ԴԻԵՏԱ

Ամեն ամառ ճերմակ կաքավներին, դահուձներին, ցախաքլորներին, մայրեհավերին և անտառային այլ հավաթոչուններին ընկճում են ստամոքսային ճիճուները։ Շատ թոշունների դրությունը կվատթարանար, յեթե նրանց կորստից չփրկեր ամառային առատ կերի լիարժեք վորակը։

Սակայն ձմեռն այդ կարդի կերն անհետանում են թվում ե, թե ճիճուներով վարակված թոշունը պետք է սատկի. չե վոր պակաս մնունդով, առանց այդ պարագիների ել, թոշունները դժվարությամբ են կեր ճարում իրենց համար։ Մինչդեռ անտառային հավաթոչունները ճիճուների պատճառով բնավ մասսաներով չեն կոտորվում շնորհիվ այն բանի, վոր ոգնության և հասնում յուրատեսակ օդիետան - սննդապահքը - աշնանաձմեռային շրջանի այսպես կոչված կոշտ սեղոնալին կերերը, ծախաքլորն, որինակ, աշնանն սկսում ե ուտել մեծ քանակությամբ սոճու, ճերմակ յեղենու և սաղարթավագատերները։ Տերեփսերի վրա գտնվող ուժեղ բուրումնալից խեժերը և գաբաղանյութերն այնքան են շշմեցնում ստամոքսային ճիճուներին, վոր նրանք պոկվում են փոքրութիւն պատերից։

Փշատերները՝ թոշնի ստամոքսում մարսվում են մոտավորապես տասը-տասնինդ տոկոսով։ Իսկ մնացած բոլոր փայտանյութը, լամպի ապակին սրբելու կոշտ խոզանակի պես սրբում, իր հետ դուրս ե տանում շշմած ճիճուներին։ Այդ «խոզանակը» գործում ե հաստատապես։ Կոշտ կերի անցնելուց յերկու-յերեք որ հետո թոշնի փորստիքը ամբողջությամբ մաքրվում ե պարագիտներից։ Գոյության համար մղվող յերկարաւու կոխվը պահում ե սոսկ այն թոշուններին, վորոնք ժամանակին անցնում են «բուժիչ դիետայի»։

Իրենց սեղոնային դեղակերն ունեն նաև բուսակեր կաթնասունները։ Տափաստանային կովերը և այլ սմբակավորներ աշնանն անցնում են բարձրվենեկային (ոշին-դըր) մացառուտներին։ Դաուր բարձրվենեկի բուրավետ դուղերը շատ լավ թափում են նրանց ստամոքսային ճիճունները, վորոնց պատճառով ձմեռը կոշտ կեր ուտելիս, այդ անսասունները կարող են բոլորովին լզարել։ Զիներ բարձրավենեկը տափաստանային սմբակավորների սեղոնային կերակրացանկում - պարագիտները և աղբատիկ կերը վաշնչացման դուռը կհացնելին այդ կենդանիներից շատ շատերին։



ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լճակի յերեսին յեռում եր սովորական կյանքը։ Կենացնաբանական այգում անլուելի աղմուկ եռ տեսում։

Պատանի կենսաբաններից մեկի հետ յես համրաքայլ գնում եյի ափով։ Անսպասելի կերպով մենք տեսանք «ջրահեղձին»։ Նա պառկած եր փոքրիկ ծոցի հատակին և արևի լուսը յերերուն շողեր եր զցում նրա վրա։ Դա մի բոլորովին փոքրիկ կատվի ձագ եր։ Մանր ջրաբույսերի կանաչ շերտը ծածկել եր նրա մարմինը։

Ուղեկիցս ջրից գուրս հանեց կատվի ձագին և մենք
ուշադրությամբ զննեցինք նրան։ Ընդարձացած կենդանին
կենդանության վոչ մի նշան ցույց չեր տալիս, թվում
եր, թե կատվի ձագը վաղուց խեղպվել եւ,

Սակայն, քանի դեռ մենք զբաղված եյինք նրան
զննելով, «ջրահեղձի» քթածակերից բավական չուր թափ-
վեց և մեր ձեռների հպումից տաքացավ նրա մարմինը:
Յեվ ահա կատվիկը թեթև ցնցվեց: Կյանքն աստիճանա-
բար արթնացավ նրանում:

Մահից ազատված կատվիկը տեղավորվեց մի կատ-
վի մոտ, վորը կենդանաբանական այգում սնում եր մի
քանի ու մե ժանտաքիսների։ Շնորհիվ նրա խնամքի կատ-
վիկը շուտով ամրապնդվեց և յերբ քիչ մեծացավ, նրան
վիկը շուտով ապահովագործվեց մեր գիտական աշխատողնե-
րի տունը պահելու տարավ մեր գիտական աշխատողնե-
րից մեկը, ինչու այդպես հեշտությամբ կատվիկը կեն-
դանացավ։ Զե՞ վոր նա ջրի պես սառն եր։

Բահնն այս ե, վոր եմբըինալ, արսինքն սաղմա-
յին վիճակում բոլոր կենդանիներն ել կրկնում են ի-
րենց հնագույն նախահայրերի եզրուցիան (աստիճանա-
կան փոփոխությունը): Ծնվելուց հետո առաջին շրջանում
այդպիսի ձեափոխությունները զեռևս շարունակվում են
և ձագերը շատ բանով զանազան վում են հասունացած
կենդանիներից, վորոշ նշաններով հիշեցնելով իրենց նա-
խահայրերին, վորոնք գտնվել են զարգացման ավելի
ստորին աստիճանի վրա: Որինակ, կաթնասուններից շա-
տերն ունեն մարմնի մշտական ջերմություն, մոտ 37—38
աստիճան: Սակայն այդ կենդանիների ձագերը, առանձ-
նապես նրանք, վորոնք կուրը են ծնվում, շատ արագ
սկսում են սառչել, յեթե դրսից չեն ստանում ջերմու-
թյան հոսանք (այսինքն, յեթե չեն տաքանում, իրենց
ծնողների մարմնին սեղմվելով): Հազիվ կարելի լինի հա-
սունացած շան մարմինը սառեցնել 27 աստիճանից պա-
կաս, առանց մահ առաջ բերելու, մինչդեռ նորածին ձա-
գուկներին հաջողվել ե սառեցնել մինչևիսկ 10 աստիճանից
ել ցած: Այդ վիճակում նրանք մի ան զամայն անշարժա-
նում են, սակայն տաքացվելիս վերստին կենդանանում

Եյին։ Մեզ հայտնի յեն շատ դեպքեր, յերբ վայրենի կենդանիների ամբողջ ընտանիքներ (խոսքը միայն ձագերի մասին ե) մինչ այն աստիճան եյին սառեցվում, փոր բոլորովին դադարում եյին շարժվելուց։ Սակայն հենց փորքիչ տաքացնում եյին նրանց — կենդանանում եյին և ապա զարգանում միանգամայն նորմալ։

Յուրաքանչյուր հետո մեր կենդանաբանական այգում փայտացել եր և չեր շարժվում ջրաքիսի ձագը։ Վառարանի վրա քիչ տաքացնելուց հետո նա «կենդանացավ»։ Ինարկ ե, այդ ձագը չեր ել մեռել, բայց կյանքը ախալեսթույլ եր միարառում նրա որդանիզմի մեջ, փոր նայելով մենք չկարողացանք հայտնաբերել։

Առավել չափով դա վերաբերում է թուչուններին, փորոնց հետավոր նախորդները յեղել են սողուններու իսկ սողունները չե փոր չունեն մարմնի մշտական ջերմություն։ Ճիշտ ե, հասակավոր թուչուններն ունեն մարմնի մշտական ջերմություն։ Սակայն, մի շարք այլ նշաններով թուչունները միանման են սողուններին։ Այդ նմանությունը շատ բաներում ե յերեան գալիս, — թուչունների, ինչպես նաև սողունների մորթու վրա բացակայում են քրտնքի և ճարպի գեղձերը, յեթե չնաշվենք պոչի մոտ գտնվող գեղձերը։ Թուչունների և սողունների արտաթորանքների մեջ կա միզային թթվուտ, իսկ փորոշ թուչունների, որինակ փարփարների և ջայլամների թեամառների վրա մինչև հիմա մնացել են ճանկերը։ Թուչունները, փորոնք ձվերից գուրս են գալիս մերկ ու կույր, առանձնապես սաստիկ հիշեցնում են սողուններին։ Նրանք արտագ կերպով սկսում են սառչել, յեթե տաքանալու տեղ չկա, իսկ այդ միջոցին կենսական բոլոր արտահայտումները հաղիվ նկատելի յեն դառնում։ Դրսից ջերմային լիցք ստանալուն պես այդպիսի թուչնածագերը վոչ միայն կենդանանում են, այլ առաջվանից անհամեմատ լեռանդուն

են լինում։ Գիտական աշխատակից ն. Կալաբուխովը, փորը յերեմն յեղել ե մեր կենդանաբանական արգու պատանի կենսաբանը, սառեցնում եր, որինակ, ճնձուկի ձագերին մինչև + 5 աստիճան։ Վորոշ գեպքերում նրան հաջողվել ե նրանց սառեցնել ավելի շատ։ Այդպիսի վիճակում նրանք սառած դիակների պես եյին, իսկ յերբ այդ ձագերին քիչ տաքացըրին, նրանք սովորականից ավելի կենդանություն ցույց տվին, — բացելով իրենց բերանիկները — նրանք ուտել եյին ուզում։


Յես քանիցս համոզվել եմ այն բանում, թե ինչպես, վատ յեղանակին արագ սառչում եյին ձվից նոր գուրս լեկած կերնեխները կամ սերինոս տեսակի սարեկները յեթե վորեւ բանից վախենալով բնից թռել ելին նրանց տաքացնող ծնողները։ Սակայն, ժամանակավոր մրսելլ բնավ չեր վնասում ալդ ձագուկներին և հետագայում նրանք զարգանում եյին միանգամայն նորմալ։

Նույնը պետք ե ասել նաև թխսաճուտերի մասին, փորոնք ինքնուրույն կերպով սկսում են վագել ձվից գուրս գալուց անմիջապես հետո։ Այդ ժամանակ մայրը գուրս համար կատարում ե վառարանի դեր, փորի մոտ նրանց համար կատարում է վառարանի դեր, փորի մոտ կարելի յե տաքանալ։ Հավանորեն շատերն են տեսել, թե ինչպես բակում քուջուջ անող թուխսը ժամանակ առ ժամանակ տփկում ե գետնին և իր թերերի տակն ե առնում ձուտիկներին։ Նա իրեն և սեղմում ձագերին և տաքացնում նրանց իր տաք մարմնով։

Այսպիսով, ճտերի մարմնի ջերմությունը բավական հաճախ փոխվում ե, նրանք մերթ սառչում են՝ մորից հեռու վազվելիս, մերթ նորից տաքանում մոր թերերի տակ։ Մենք նկատել ենք, վոր ջերմության այսպիսի ցատկումներն ամրապնդում են ճտերի որդանիզմը և արագացնում նրանց աճեցումը։ Նույն յերեսությը գիտելի յե նաև սողունների մեջ, փորոնց՝ ջերմության տատանումներով՝

Ճտերը ավելի նման են, քան մեծ թռչուններին: Ճերեկով արևի ջերմության լիցք ստացող սողունները գիշերվա ընթացքում սաստիկ սառչում են. հավասար, միշտ միատեսակ բարձր ջերմության մեջ նրանք իրենց անհամեմատ վատ են զգում, քան թե փոփոխականում:

Դեռ վերջերս ել թռչնաբուծարաններում ճտերին մշտապես պահում եյին ջերմության մեջ և սաստիկ վախենում եյին ցրտեցնել նրանց ապրած շենքը գոնե մի աստիճանով: Այդ վախի հետևանքով, վորից դեռ ևս բոլորը ձեռք չեն քաշել մեծացըին հազարավոր թույլ ու վատառողջ ճտեր:



ԳԱՂԹԱԿԱՆ ԱՐՁԱՄԿՆԵՐԸ

Դաղստանի լեռներում արջամկներ հայտնվեցին: Կովկասում նրանք յերբեք գրյուղիուն չունեցին և առաջին անգամ այնտեղ ընկան 1934 թվին միան:

Ալտայում բռնել եյին հարյուր տասնեհինդ արջամկներ: Մոսկվայի կենդանաբանական այգու պատանի կենաբանների բրիգադան այդ արջամկներին հաջողությամբ տեղափոխեց Դաղստան, չնայած յերկարատև ճանապարհորդության դժվարությանը:

Վերին Գունիբի բարձրավանդակի վրա դադիռող արջամկների համար նախորդ պատրաստված ելին ընել: Սակայն այդ «բնակտրաները» դուր չեկան ալտայցի գաղանիկներին և նրանք ցըմիցին բարձրավանդակի վրա, պրավելով լեռների սոսկ հարավային լանջերը: Այնտեղ արջամկները ակղավորվեցին ժայռերի ձեզքերում կամ հաղմեալ փորած բներում:

Շուտով վրա հասավ քնակության գամանակը, վորի մեջ արջամկներն անցկացնում են տարվա համարյա յերեք քառորդը: Յուրաքանչյուր ընում տեղափորվել եյին


առա - տասնհինգ գաղանիկներ, վորոնք չեյին հասցըել
բնակության այս նոր վայրում ավելի մեծ հարմարություն-
ներով սարթվելը:

Բայբակ կոչված տափաստանային արջամկներին վորո-
նեժից հարավ ընկած Սարելեցալին տափաստանից տարել
ելին ուղայնական Ասկանիա-Նովա արգելանտառի տերի-
տորիա: Դժբախտաբար այս անդամին արջամկներ տեղա-
փոխելու փորձը այնքան ել հաջող չեր անցել:

Մարդկանց թվում եր, վոր այնպիսի խնամքով իրենց
ընտրած սիդավետ տափաստանի այդ կտորը պետք ե իսկ
և իսկ հարմար լինի բայբակներին: Սակայն սրանք չմնա-
ցին այդ տեղամասում և ցրվեցին ամեն կողմ: Անոթեան
գաղանիկների վրա հարձակվեցին գիշատիչները. շուտով
արջամկները բոլորովին անհետացան:

Շատ ուշ բայբակների մի փոքրիկ գաղութ հայտնա-
բերվեց մի այլ տեղամասում, ոթ կիլոմետրի վրա այն
վայրից, ուր յերբեմն նրանց բաց եյին թողել: Գաղան-
ները, ինչպես յերեսում եր, վատ չեյին ապրում և կարիք
չունեյին կերի: Մինչդեռ տափաստանն այսուղ ճիշտ
նույնպիսին եր, ինչպես նախկին տեղամասում: Համե-
նայն դեպս այդպես եր թվում առաջին հայացքից: Այդ
վայրի ավելի մանրազնին հետազոտությունը հնարա-
փորություն տվեց գտնել այն սխալը, վորի պատճառով
կոտորվել եր Ասկանյան տափաստանը բերված արջամըկ-
ների մեծամասնությունը: Բանից գուրս լեկավ, վոր առա-
ջին տեղամասում բացի գաշտային սեղից այլ բույս չկար,
իսկ այնտեղ, ուր բայբակներն իրենց գաղութն եյին հիմ-
նել, մեծ քանակությամբ վայրի կապույտ առվույտ (լոն-
ջա) և այլ բակլայաբույսեր կալին: Ճիշտ ե, բարձր սեղը
աշքից ծածկել եր այդ բույսերը, սակայն դրանք այն պատ-
ճառագ չելին յերեսում, վորովհետեւ բակլաներն արջամկնե-
րի գլխավոր կերն ե: Ամեն որ ցողուններն իրենց կտրիչ-

ներով խուզելով, բայբակները չեն թողնում, վոր առ-
վույտը բարձրանա, ուստի և այն բոլորովին չի յերեսում
խամ տափաստանի առաս բուսականության մեջ: Այս պա-
րագան մոլորության մեջ ձգեց այն բնագետներին,
վորոնք արջամկների կյանքը դիտել եյին իրենց հալը ենի-
քում. տափաստանում չնկատելով բակլայաբույսերը, մար-
դիկ սխալվեցին և կարծեցին, թե սեղը բայբակների կերն
ե, իսկ սեղ շատ կաթ այն պատճառով, վորովհետեւ բայբակ-
ները դա չեյին ուտում:



ՎՈՐԿՐԱՄՈՒ ՊԻՏՈՆԸ

Պիտոնը Մոսկվա ուղարկված եր Հնդկաստանից։ Դա մի հոյակապ ոճ եր, յերկրագնդի ամենախոշորներից մեկը։ Հսկայի յերկարությունը յոթը մետր եր և քաշը հարյուր քսան կիլոգրամ։

Մեծ ե այսպիսի հսկայական ոճերի ուժը։ Իբենց զորեղ մարմնի ողակներով նրանք փաթաթվում են կենդանիներին և ասես պողպատյա սեղմիչով՝ ձնշում են նրանց կուրծքը։ Ոճի բանած զականի շնչառությունը դադարում ե, սոսկալի խտիսը խեղում է նրան։ Իսկ յերբ զոհի մարմնով անցնում են վերջին ջղաճությունները, ոճը թուլացնում է իր ողակները և ամբողջությամբ կուլ ե տալիս անշարժ կենդանուն, միանդամից կշտանալով մի ամիս և ավելի։ Պիտոնը յերբեք չի կոտրում իր զոհի վոսկորները, թեպետ շատ հեշտությամբ կարող է խորտակել դրանք։ Ոճերի աճս առանձնահատկությունը մշակվել ե միլիոնավոր տարիների ընթացքում։ Զարդութված վոսկորները ծակում, դուրս են դալիս խեղոված կենդանու մոր-

թուց և խանդարուժ են ոճին ամբողջությամբ կլանել իր գոհին։

Մեր պիտոնի մարմնի ամենահաստ մասն ուներ յերեսուն սանտիմետր լայնություն, սակայն յերբ նա կուլ եր տալիս իր հերթական «ձաշը», նրա մարմինն աներեւակայելի կերպով ուռչում եր։ Կենդանաբանական այգում պիտոնին կերպակում եյին խողի ձագերով, յերբեմն ել յերկու փուլթ քաշ ունեցաղ խողերով, բայց յեթե տեսնեք, թե ինչ չպես ե ձգվում ոճի յերախը, ապա թվում ե, թե նա կարող է կուլ առաջ և անհամեմատ խոշոր կենդանի։ Այսպես պատահեց, վոր Մոսկվայի կենդանաբանական այգու պիտոններից մեկն անցել եր հարևան բաժանմունքը, ուր մեծ կոկորդիլոսներն եյին աեղավորված։ Նրանցից մեկին ոճը խեղդել եր և խեղդերուց հետո ամբողջովին կուլ ավել։ Վոմանք յերկյուղում եյին, թե ինչ հետևանք կունենա այդ ագահությունը. բժիշկները մինչև իսկ առաջարկում եյին վիրահասության միջոցով դուրս ճանել կոկորդիլոսին։ Սակայն պիտոնը մի քանի որվա ընթացքուժ մարսնց իր ավարը, բացառությամբ արտաթորությունների մեջ հետո գտնված ճանկերից և յեղջերավահանիկներից։

Պիտոնը, վորին մենք կերպակում եյինք խողերով, հեշտությամբ մարսում եր նրանց իր ստամոքսային հյաւթի մնջ. անմարսելի եյին մնում սոսկ մազերը, սմբակը, մեկ ել ատամների եմալը։ Մարսողության արագությունն ամբողջովին կախված եր նրանից, թե վորքան տաք եր լինում մեր աեղբարիումում*), վարովնեան ոճերը, ինչպես նաև կոկորդիլոսները, մողեսները և կրիաները չունեն մարմնի մշտական ջերմություն։


Պիտոնը թունավոր չեւ իսկ թունավոր ոճերը — ակ-

*) Թանգարաններում և գաղանանոցներում հատուկ արկղ՝ սողուններ ու զեռուններ պահելու համար։

Ծ. թ.

Նոցավոր ոճերը և իժերը իրենց զոհին սպանում են թույնով, վոր սրսկում են խայթված կենդանու արյան մեջ իրենց վերին ծնոտի վրա գտնվող յերկու թունավոր ատամների կանալներով։ Յերբեմն խալթված կենդանին կարողանում ե փախչել և մեռնում ե ոճից հեռու, վերջինս սակալն, միևնույն ե, գտնում ե իր վորսին։ Ոճը սողում ե խայթված կենդանու հետքով, հողը և շրջապատող բույսերը շոշափելով իր յերկար յերկճյուղ լեզվով, վորին շատերը սխալմամբ խայթ են անվանում։ Ոճի այս որդանի զգայականությունն արտասովոր զարգացած ե. ոճի լեզուն փոխարինում ե բացակայող հոտառությանը։ Մեր կենդանաբանական այգու բաց վոլյերում ամառը ապրող լորդուները համառ հետապնդումներ են սարքում գորտերի յետելից։ Կանաչի վրայով նրանց հետքով սողալիս ոճերը միայն այն ժամանակ են բռնում գորտերին, յերբ սրանք այնքան են հոգնում, վոր կորցնում են մեծ ցատկումներ անելու ընդունակությունը։

Քրականության մեջ հաճախ կարելի յե հանդիպել այսպիսի նկարագրություններ. հեղինակը պնդում ե, թե իբր ոճերը «հմայում» են իրենց զոհին, հայացքով հիպոռողացնելով նրանց։ Մինչդեռ դա միանգամայն ճիշտ չե։ Վիշապոձը կամ պիտոնը գրավում են սմբակավորների, կրծողների և այլ կենդանիների ուշադրությունն իրենց անշարժությամբ ու թեփուկավոր մորթու փայլով։ Նկատելով իր վորսը, նա ողակ-ողակ ե դառնում և համբերությամբ սպասում ե, վոր իր զոհը մոտենաւ հետաքրքրված կենդանին սկսում ե ուշադրությամբ դիտել այդ չտեսնաված ֆիգուրան, ըստվորում այնքան ե մոտենում, վոր պիտոնը անվրեպ բռնում ե նրան ատամներով և վայրկենալուս փաթաթվում ե իր մկանոտ ողակներով։ Հազվադեպ ե պատահում, վոր ոճերը բաց թողնեն իրենց զոհին, ուստի և կենդանիները փորձառություն չունեն այդ սոս-



Կապիկները՝ վախեցան! լորդուից։

կալի թշնամու գեմ պալքարելու գործում։ Անկախ դրանից, կուշտ պիտոնը չի բռնում գաղաններին և սրանք ընդուղ մոտենում են նրան, բառիս նեղ մտքով նրան ամեն կողմից հոտոտելով։

Ոձերի անխնա փաթաթումներից ամենից հաճախ կապիկներին ե հաջողվում խուսափելու Զարմանալի չե, վորայդ հանդիպումները նրանց մեջ առաջացրել ե համապատասխան զգուշություն. չե վոր ոձերի համար բարձր ծառն անդամ խոչընդուած չի հանդիսանում, իսկ ոձերի մնջամասնությունը սողում ե զիշերը, յերբ կապիկները քնած են։ Եիմպանզեն, վօրը ծառի բարձրությունից անկախ նայում ե ամենառութեղ գիշատիչներից վորին ուզես, ոճին տնանելուն պես սարսափած փրկություն ե վորոնում։ Այսպիսին ե բնական ընտրության և սեփական փորձի հետևանքը, վորը (փորձը) ձեռք և բերվում ոձերի հետ ունեցած հանդիպումներից—ոձերը համարյա թե կապիկների միակ լուրջ թշնամիներն են։ Ահա ինչու իր հայրենիքում՝ Աֆրիկայի տրոպիկական մասում, ուր բազմազան ոձեր կան, ալէ թվում և շատ թունավոր, շիմպանզեն մեծ զգուշությամբ ե մոտենում ծառերի փշակներին՝ թռչունների բներ ու ձիեր վնասութիւն. չե վոր ամեն մի փշակում թռչնի փոխարեն կարող ե լինել թունավոր մի ոճ։

Մի քանի տարի առաջ մեր կենդանաբանական այդին արտասահմանից ստացավ յերկու շիմպանզե։ արուի անունն եր Հանս, իսկ եղինը—Լիզա։ Հանսն աչքի յեր ընկնաւմ իր հաղթանակամ կաղմվածքով և շատ ուազմատենչ բնույթով։ Նրա և Լիզայի մոտ վոչ վոր սիրտ չեր անում մտնել, վորովհետև այդ ուժեղ կապիկի հանաքները ծանր հետևանքներ եյին ունենում։ Յերբ հարկ յեղավայդ այդ զույգին մի նոր տեղ հատկացնել, մենք ընկանք անելանելի զրության մեջ. ի՞նչպես մոտենալ կատաղի զադանին, ի՞նչպես նրան հարկադրել մտնելու շարժական վանդակը,

վորպեսզի կապիկին նրա մեջ տանել իր նոր «բնակաբանը»։

Շարժական վանդակի բաց դուռը մենք մօտեցըինք նրանց նախկին մշտական վանդակի դռանը և սկսեցինք շիմպանզեներին գրավել այնտեղ։ Լիզան մտավ բավական հաճույքով, սակայն հանսը համառում եր։ Շուտով նա սկսեց մոլեգնել, սպառնալից աղաղակներ եր արձակում և դես ու դեն նետվում։ Կտաղած գաղանն ուշք չեր դարձնում և վոչ մի հորդորանքի վրա։ Այս ժամանակ մենք հրդեհաշեցների ջրմուղ մեքենայից դեպի նա ուղղեցինք ջրի սառը հոսանքը, սակայն վոչինչ չեր ոգնում։ Այդ քիչ եր, իրարանցումից ու աղաղակներից Լիզան նույնպես սկսեց հորդվել և յետ դարձավ, Հանսի կողքին տեղ բռնելով։ Չողնեցին և անգնդակ կրակոցները. կապիկները համառորեն չելին ուզում մտնել շարժական վանդակը, իսկ Հանսը քանի գնում, այնքան շատ եր մոլեգնում։

Այդ ժամանակ եր, վոր կապիկների պուրակի վարիչը վճռեց ոգտագործել վերջին միջոցը։

—Բերեք մի լորդու, —դարձավ նա պատահի կենսաբանին։

Մի քանի ըսպեյից լորդուն բերվեց քաթանի փոքրիկ տոպղակով։

Հազիվ ինչ ոճի ու մարմինը յերևաց, յերբ վալրի մի սարսափի բռնեց անհնազանդ Հանսին։ Այլայլված դեմքով և չուծ աչքերով նա սկզբում պաշտպանողական գիրք ընդունեց, սակայն իսկույն ևեթ մի կողմի վրա յետ-յետ գնաց, վուներն իրեն քաշելով (վուները տակն առնելով) և անոգնական կերպով չորս կողմը նայելով։

Ոձին բաց թողին։ Նա սկսեց մոտ սողալ կապիկներին։ Լիզան վաղուց քաշվել եր շարժական վանդակի ամենաեռավոր անկյունը։ Վերջապես մըրկի արագությամբ ալիստեղ նետվեց և Հանսը։ Վանդակի դուռը վակելով,

մենք կապիկներին տարանք ուրիշ տեղ։ Սաստիկ վախենած գաղաններն այլևս չեյին դիմադրում։

Ամբողջ որը հուզված և ջղային դրության մեջ եր չանուց։

Խեղճ չանս ի՞նչպես բացատրել նրան, վոր լորդուն թռնավոր վիշապով չեւ կոր նրանից վախենալ կարող են թերեւս միայն գորտերը։



ՅԵՏՔ ՅԵՎ ՅԵՏԱՊՆԴՈՒՄ

Հազիվ լույս աշխարհ տեսած, նապաստակի ձագը՝ մորից շտապով լիզված՝ փութկոտ մոտենում ենրա ծծակներին։ Կշտաննալով, նապաստակի ձագերը դես ու դեն են վազում և յերկու, յերեք, չորս որ ու գիշեր նստում են կանաչի վրա, առանց տեղից շարժվելու։ Այդ որերի ընթացքում նրանք սնունդ չեն ընդունում, քանի զոր ստամոքսի մեջ բավականաչափ յուղալի, թանձր կաթ կա, վոր նա ստացել եւ առաջին անգամ կերակրվելիս։ Յեվ մինչեւ զոր ձագուները տեղից չշարժվեն, մայրն անգամ չի գտնի նրանց։

Նապաստակի ձագերի այսպիսի բիոլոգիական առանձնահատկությունը նրանց փրկում եւ հետապնդումներից։

Խոկ այդ առանձնահատկությունը նրանումն ե, վոր նապատակի մորթու վրա չկան քրտնքի գեղձեր. այդ գեղձերը տեղ են գտել նրա թաթերի ներքեւի կողմում։ Մի վայրից մյուսն անցնելիս նապաստակը անխուսափելիորեն պետք ե թողնի բուրալից հետք և այդ հետքով նրան հեշտ կհայտնաբերի գիշատիչը։ Իսկ յեթե նապաստակը նստած ե իր տեղում, թաթերը գետնին հայած, — վոչ շունը, վոչ ել վայրի գիշատիչները չեն կարող հայտնաբերել նրա այդտեղ գտնվելը։ Սակայն, շունը ինչքան շատ ե հալածում նապաստակին, այնքան սաստիկ ե քրտինքը՝ դուրս դալիս գեղձերից և քանի գնում ուժեղանում ե նրա հետքից մնացած հոտը։ Ահա ինչու շներն այնպես համառ են հետապնդում վաղուց արդեն տեղից թուցրած նապաստակին, և այդ ժամանակ ուշադրություն չեն դարձնում այն նապաստակներին, վորոնք հենց նոր են ցատկել իրենց տըպկած տեղերից։

Մեր կենդանաբանական այգում մենք ձեռնասուն աղվեսի վիզը փոքրիկ շղթա ձգած նրան անում եյինք կանաչի վրա տպկած նապաստակաձագերի մոտով և գազանը, վոր սուր հոտառություն ունի, վոչ մի անգամ չնկատեց նրանց։ Նույն այդ աղվեսը անմիջապես հուգված վիճակի մեջ եր ընկնում, հենց վոր բանում եր նապաստակի հետքը։

Նապաստակի ձագի հոտը՝ նրա տպկած ժամանակ թուգանում ե նաև նրանով, վոր առաջին որերը նա վոչ մի արտաթորություն չունի. ըստ յերեսութիւն նրա որդանիքը ամբողջությամբ մարտում ե բոլոր կաթը, իսկ ջրի ավելորդը, վոր ստացվում ե յուղային մասերի տարրալուժ, ման ժամանակ, ծախսվում ե շնչառության պրոցեսում

Յեթե նապաստակի թաթերի վրա գանվող գեղձերը կարող են նրան մատնել գիշատիչին, ապա հենց դրանք ել նրան փրկում են հետապնդման ժամանակ։ Ճարպաթ-ըըրտընքալին գեղձերից գուրս յեկող քրտինքը նախադահպա-

նում և նապաստակի թաթիկի խիտ մազերի վրա ձյան կամ խոնավ հողի չափազանց հաստ շերտ գոյանալուց, վարպետի հանգամանքը ինքը կերպէ, կարող եր նվազեցնել նրա վազքի արագությունը։

Դուգընթացարար մի քանի խոնք ասենք նաև աղվեսի հետքի մասին։ Յուրաքանչյուր վորսորդի հայտնի լեւ, վոր աղվեսի թաթերի հետքերը սասաթիկ տարբերվում են շան հետքերից։ Շան թաթը ձյան վրա թողնում ե վորոշակի հետք՝ մատների մերկբարձիկների պարզ գծագրված նշումներով։ Մինչդեռ աղվեսի թաթի հետքը ավելի փափուկ ուրվագծեր ունի։ Դա նրանով ե բացատրվում, վոր աղվեսի տոսքիկը ձածկված ե խիտ ու յերկար մաղերով, վորսոնց շնորհիկ գաղաճնը քայլում ե, ասես թաղվեցած վոշիր հագնծ։

Այս տուակնահատակության ուժով աղվեսը յերբեք չի միրավորում իր թաթը մինչև իսկ կարծր, յերեսի կեղեռաշերտը ներս ընկած սասառշաճաւմն վրայով քայլելին թակայն հերիք եւ, վոր նույն այդ տեղում անցնի շունը—նրա հետքերի վրա կմնան արլան կաթիներ։

Սակայն աղվեսը միշտ ել այդ առաջինությունը չունի։ Ոգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին նրա թաթառակի մազերը թափկում են և այդ շրջանում գազանը կորցնում ե իր սովորական արագալիքությունը։ Նրա տնակիների բարձերի վրա սկսում ե բանել նոր մագ։ Մկրպում դա կարճ ե լինում և կոշտ։ այդ ժամանակ աղվեսը տնակես ե քայլում, վոր սաեւ կանդնած լինի տսեզների աղվեսը ամբողջությամբ մարտում ե յերկար վազեր մինչեւսկ բարակ նա անընդունակ ե յերկար վազեր մինչեւսկ բարակապահ շնիկը կարող ե հասնել նրան հալածելիս։

Հետագայում, մոտավերապես լերեսուն որից, թաթերիների բարձիկների վրայի բրդամագը լերկարում եւ ծագիվելով, այդ մագը փոքր ինչ ծածկում ե ամբողջ թաթը և արդ ժամանակ վերջանում ե վտանգավոր շրջանը աղվեսի կյանքում։



ԱՆԻ ՍՈՎԸ

Յերբեմն Մոսկվայի շրջակա թաղամասերից կենդանաբանական այգի յեն գալիս թևավոր հյուրեր: Ամենից հաճախ դրանք ճնճղուկներ են, յերբեմն և կարմրակատաշիկների, յեղնականավերի, ազնվասարեկների և վշտասարեկների չփող յերամիկները: Մեր հյուրերը ձգտում են դեպի կենդանիների կերը, թեպետ, կարելի յե, վոր նրանք սովոր չեն նեղվում: Ամենից շատ նրանց գրավում ե աղը, վորը սովորաբար մեծ մեծ կտորներով դրված ե մեր սըմբակավորների կերամանների մեջ:

Բնության մեջ, վոր մեզ այնպես ներդաշնակ ե թվում, խսկապես վոր անհամաձայնություններ կան: Ալսպես, որինակի, կենդանիների մեծամասնությունը ազատության մեջ զգում ե աղի սովածություն: Քանից մենք նկատել ենք, թե ինչպես կրիաները անապատում լիզում եյին ցողի աղի կաթիկները մոշավայրու տերենների վրա կամ տեղ տեղ հանդիպող հողի աղաշերտերը: Աղը ագահությամբ լիզում են կովերը, վոչխարները, այծերը, ձիերը: Զմեռը աղի մեծ սովածություն զգալուց հետո յեղջերուները ամառ գնում են դեպի գետնի յերեսը դուքս յեկած աղաշերտերը և այնտեղ խոր հոր են բացում կրծելով:

Մի անդամ յես մի բուռը աղ յերկարացը կենդանաբանական այգում ապրող ջայլամներին: Նրանք մեծ

գոգուռումով խլխլեցին այն և հետո ամեն անգամ հուզվում ելին, յերբ ինձ առիթ եր լինում անցնել նրանց մասով: Վայրի գաղանները շատ հաճախ այլ վայրեր են քոչում, միայնթե հագեցնեն իրենց «անլիացած» որգանիզմը: Իշխանականները, հյուսիսային յեղջերուները և մյուս կենդանիները յերբեմն մեծ ճանապարհորդություններ են կատարում ծովափով, ուր լիզում են ալեբախությունից մնացած աղառատ վիրփուրը:

Բացառությամբ գիշատիչներից, աղի պակաս զգում են համարլա բոլոր կենդանիները: Իսկ յերբ նրանց անունգի մեջ բացակայում ե կամ քիչ ե աղը, գաղանները թույնում են:

Գիշատիչ գաղանները չգիտեն ինչ բան ե աղի սովածությունը և դա հասկանալի յե: աղի անհրաժեշտ մասերը նրանց որգանիզմն ստանում ե պատառուած կենդանիների մսից, վուկորներից և արյունից: Բուսակերները չունեն այդպիսի առավելություն: Նրանց կերը հարուստ ե կալիով, սակայն՝ բնավ վոչ խլորի նատրիով (իսկ խլորի նատրին, ինչպես հայտնի յե—դա սովորական աղն ե): Յեզ միայն այն ժամանակ, յերբ կենդանին ընկնում ե աղառատ վայր, նատրիի աղերը նրա որգանիզմից դուքս են քշում կալիի վոչ-անհրաժեշտ ավելորդը:



ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ ՎՈՐՈՆՌԵՄՆԵՐ

Յերբ պատահում եր, վոր անտառում յեղինու կոնգումի
մեծ ըերբ եր յեղել, ալդտեղ են թոչում բազմաթիվ խաչ-
կուուցներ: Այս փոքրիկ ու գեղեցիկ թոչուները փշատե-
րև անտառներն են ընկնում նրա համար, վոր յեղինու
կոնգումի հնդերով նրանք կերակրվում են ձմեռվա բոլոր
ամիսները:

Յեկ յեթե կոնգոմների ծանրության տակ ծովում են փրչու ու բուրավետ լեղանիների ճյուղերը, ապա ենց այնտեղ, ուր թռել-յեկել են խաչկտուցները, կանգ են առնում նաև քոչվոր ռկյուռները:

ԿԵՐԻ ՀՊՈՅՈՒԹՅՈՒՆԻց ՓՐԿՎԵԼՈՎ, ԱԿՈւռՈՆԵՐԸ յԵՐԲԵՑ

մեծ բազմություններով՝ այլ ռայոններ են անցնում։ Իր մի նաև կում Արխանցելսկի կենդանաբան Նատալիա պատմում է 1935 թվին նեղի ունեցած այդպիսի մի գաղթի մասին։ Այդ ժամանակ Ռւբալի անտառներից դուրս յեկած հարյուրավոր և հազարավոր սկյուռներ անցել եյին Կոմիի, մարզը, ուր չորային ամառովա հետևանքով ժամանակից շուտ սկսել եյին թափվել յեղենու հսդերը։ Սկյուռները այդտեղից անցել եյին Հյուսիսային յերկրամասից անտառները։ Նրանց կարելի յեր հանդիպել մեծ քանակությամբ՝ դաշտերում և մինչև իսկ գյուղերի մոտերքում։ Նրանք համարձակ կերպով լողալով անցնում եյին լայն ու արագ գահոս ջրերը և կանգ առնում կընգումներով հարուստ պնդառներում։

իսկ անտառում արդեն տեր ու տնօրին Եյխ գարձեց, խաչկտուցների յերամները՝ Թուչունները յեռանդագին պոկտում եյխն կոնգոմ կոնդոմին յետեից և նբանց միջի հնդերը քիչ կտցելուց հետո գցում եյխն գետին:


Խոչպես եր սկյուռների հալքը չո խաչկտուցները
նրանց բաժինը չելին խլում, հարկադրելով տանջվել կե-
րապակասությունից: Վոչ, կերը կըավականացնի քոլորին:
Կոնգոմը կտրելուց հետո խաչկտուցը նրա միջից կտցում
հանում ե միայն միքանի ամենից մատչելի հսդերը, իսկ
հետո գցում ե այն և նորին անցնում:

ևաշկտուցների այսպիսի սովորությունից սկյուռ-ները միայն շահում են, Յեղենու ճյուղերի վրայի վողորկ կոնգոմները տաքանում են արևից և փետրվարից արդեն սկառում են յետ բացել իրենց թեփուկները. հունդը թափ-վում և քամին դես ու դեն ե թոցնում նրանց. Այն ժամա-նակ վրա յե հասնում կերապակասությունը: Մինչդեռ թռչունների վայր գցած կոնգոմը ձյան յերեսին մնում է նույն վիճակում—թեփուկները չեն բացվում, շնորհիվ դրա ալդ կոնգոմները չեն կորցնում իրենց հունդը և գրանով

իսկ սկյուռներին փրկում են սռվամահությունից։ Հոգ չե, յեթե գետնի յերեսին խոր ձյուն ե նստած. սկյուռը շատ լավ առնում ե կոնդոմի հոտը մինչև իսկ ձյան հասա շերտի տակից և բնավ դժվար չե փորել ու հանել այն։

Նշանակում ե, սկյուռն ու խաչկտուցը թշնամիներ չեն։ Նշանակում ե, թռչունները սկյուռներին փրկում են պարնանային կերապակասությունից։

Իսկ յերբ այս աղվամազ փոքրիկ գաղանը գետնի վրայից հավաքում ե կոնդոմները, վորսորդի շտնը հեշտությամբ գտնում ե նրան իր թռղած հետքերով։ Հյուսիսի վարսորդները շատ լավ գիտեն, վոր նիզովկա կոչված սկյուռները հատկապես այն անտառներում են յերեան գալիք, ուր մեծ քանակությամբ խաչկտուցներ են թռչում։ Յեզ նրանք սիրով են նայում այդ փոքրիկ թռչնին. նա ոժանդակում ե հաջող վորսին։



Նախընթաց պատմվածքներից մեկում մենք արդեն հիշեցինք այն խմասին, թե ինչպես պատահի բնագետներից մեկը բռնել եր լեռնային նապաստակի ականջներից ու լետի վոտներից, վորպեսզի նրան դնի հարեան վանդա-

ՎՏԱՆԴԻ ԱԶԴԱՆՇԱԽ

Ցած, քիչ ե մնում, թե ծառերի գագաթներին քավի, կենդանաբանական այգու վրայով ոլանում ե սավառնակը։ Ցանկապատի այն կողմում, ոելսերի վրայով դղրդոցով անցնում ե արամվայը, սուլում ու վոռնում են ավտոների շչակները։ Իսկ կենդանիների արգելանոցներում ու վանդակներում—գոչ մի հուզմունք։ Կենդանաբանական այգու սանեղը դառնալով, բոլոր կենդանիներն ել շատ արագ սովորում են քաղաքի աղմուկին։ Մակայն այն ձայները, վորսնք բնութիւն պայմաններում կապված են վտանգի մոտիկանալու հետ, միշտ հուզմունք են առաջ բերում մինչև իսկ քաղաքի հին—բնիկ չորքստանիների մեջ, վորսնք կենդանաբանական այգում են սնվել ու մեծացել իրենց ծնվելու առաջին իսկ որից։

կի մեջ։ Նապաստակը վախեցել եր ու աղաղակել։ Մի ակընաթարթում մեր բոլոր իշայծյամները, վորոնց լսողությանը հասել եր այդ թույլ ծփոցը, սկսել եյին սարսափած դեռ ու գեն ընկնել ընդարձակ արգելանոցներում։

Յերբ մոտերքում հայտնվում ե ագուավը, նա առանձին և վոչ մի յերկուող առաջ չի բերում վորսաթոշունների մեջ։ Սակայն հատու, տագնապալից կոնչյունը, վորով այդ թոշունը քաջաբար դեմ ե թոշում գիշատիչներին, ստիպում ե կաքաղների, բազերի, ցախաքլորների ձագերին արագ թագնվել, ուր կարելի յեւ Յեկ թեպետ ագուավն ինքը վոչնչացնում ե վորսաթոշունների ձագերի մի մաք, դրանց մեծամասնությունն այնուամենայի նա փրկում ե կորստից իր տագնապալից, հատու կոնչյունով, վոր թեավորների թագալորությանը նախագգուշացնում ե գայլի, աղվեսի, բազեյի մոտենալու մասին։

Յերբ հնչում ե կաչաղակի բնորոշ ճթճթոցը, մինչե լոկ խոշոր գաղաններն շտապում են դլուխներն առնել ու կորչել վորովինետե կաչաղակը սովորաբար անհանգըստանում ե, յերբ անտառում մարդ ե տեսնում։

Յերաշատահավի բարակ, հազիվ լսելի ծղրտոցը՝ դա նույնպես վտանգի ազդանշան ե և վոչ միայն յերգեցիկ թոշունները, այլև խլահավերը կաչում են ծառի ճյուղերին, առանց շարժվելու քարանալով այնտեղ, յեթե այդպիսի ազդանշան են լսում։

Յերաշտահավերի ծղրտոցը նախագգուշացնում ե ճուռակի կամ բազեյի մոտենալու մասին։

Բայց ահա նույն արդ ճուռակը սկսում ե պտույտներ գործել բակի վրա, ուր անհոգ քուջուջ են անում տասնյակ դեղին, աղվամազով ծածկված անփորձ ճուռիկներ։ Գիշատիչին տեսնելուն պես թուխոր տագնապով կչկչում ե մի ակնաթարթում բոլոր ձագերը շտապում են թագընի մոր թերի տակ։

Ի՞նչն ե հարկադրում այդ ճտերին փրկություն վորոնել։ ԶԵ վոր նրանք վոչ մի անդամ առիթ չեն ունեցել իրենց մարմնի վրա զդալու ճուռակի մաղիների գիշատիչ հավիտումը։

Շատ և շատ հաղարավոր տարիներ թուչունները հարկադրված են յեղել պաշտպանել իրենց կյանքը թշնամիներից՝ թևավոր կամ չորքստանի դիշատիչներից և այդ պայքարում միայն նրանք են իրենց գոյությունը պահպանել։ Վարօնք սերնդից՝ սերունդ ժառանգաբար ոտացել են զանազան ողտակար սովորություններ։ Տվյալ դեպքում ողտակար սովորույթներ ե հանդիսանում այն ունիթեքսը, վորը թևսախ ճտերին հարկադրից մոր առաջին իսկ տագնապալից ազդանշանն ատանալուց հետո փրկությունը վորոնել, մի ազդանշան, վոր նրանք կարելի յեւ, թե առաջին անգամ լսեցին։

Մի անգամ պատանի բնագետների խմբին մենք փորձով հաստատեցինք այս բանը։ Բոլորս միասին՝ զնացինք այն բաժանմունքը, ուր ինկուբատորների մեջ դրանից հիսուն որ առաջ դրված եյին եմու կոչված ջայլամի ձվերը։ Յերկու որից հետո այդ ձվերից պետք ե դուրս գային ջայլամի ձագերը։ Առայժմ ականջ դնելով արդեն կարելի յեր վորսալ նրանց շնչառությունը՝ հավասար ընդմիջումներով, սակայն հազիվ նկատելի։


Ինկուբատորի միջնց ձվերը հանելով դրինք սեղանի վրա։ Ձվերն անշարժ մնացին իրենց տեղում, հազիվ ինչնկատելի կերպով ցնցվելով։ Այն ժամանակ յեւ՝ նմանեցնելով արու ջայլամի տագնապալից կանչին, արձակեցի մի կարճ մոնշաձայն։

— Բու-ո-ո-ո...

Ձվերն իսկույն դողացին իրենց տեղում և գլորվեցին։ Ի՞նչպես թե, — հարցը ինձ տղաները։ ԶԵ վոր մեր ջայլամները զարգացել են ինկուբատորի մեջ և յերեք չեն լսել իրենց ծնողների կանչերը։

—Հենց բանն ել այդ ե, —պատասխանեցի յես իմ խոսակիցներին:—Լսելով ծնողների տագնապալից ազդանշանը, ձագերն շտապում են շուտով թագնվել վոչ թե այն քանի հետևանքով, վոր նրանք արդեն լեղել են գիշատիչների ճանկերում և այդպիսով կենսական փորձ են ձեռք բերել: Վոչ, դա միայն կենդանական, ոեֆլեքս (Յօօրեֆլեքս), և դա անցնում ե սերնդից սերունդ ժառանգաբար: Մեր փորձով ցույց տվինք, վոր ջայլամի ձագերի ներվալին սխտեմը ընդունել և արձագանքել ե վորոշակի ձայնը:

Այս պարզ փորձը կարող ե անել ամեն ցանկացող յեթե վերցնի ու փորձի սովորական հավի ձգերը թխսի տակից—ճտերը դուրս գալուց մեկ-յերկու որ առաջ: Փորձի հաջողության գրավականը նրանումն ե կայտնում, վոր ակետք ե այնպիսի ձայն հանել, վորպիսի կանչ արձակում ե մայր-հավը վտանգի ըռպեյին:



«ԱՆԱՊԱՏԻ ՆԱՎԸ»

«Անապատի նավ» անունը իրավամբ ե ստացել ուղարք: —հարլուրավար և հարյուրավոր տարիներ նա ծառալեկ ե վորպես տեղափոխության միակ միջոցը անջրդի անապատների տոթակեղ ավազուտներում:

Ուղարք զարմանալի տոկուն կենդանի յե: Լավ կեր ունենալու դեպքում նա իր սապատի մեջ հավաքում ե ճարպի մեծ պաշար և ապա առանց խմելիքի և ուտելիքի քայլում ե անապատում տասը և ավելի որեր անընդհատ իրոք, ուղարք սապատը ճարպի ահազին ամբար ե: Նրա քանակը յերբեմն հասնում ե մինչև տասներկ ու փթի:

Ամբողջ մի շաբաթ քարավանը գնում ե անջուր ավազուտներով և ճամբին հնար չկա ծարավը հագեցնելու: Իսկ նա հանգիստ առաջ ե գնում, առանց ծարավ զգալու և առանց տառապելու թալությունից: Միայն աստիճանաբար փոքրանում ե նրա սապատը և ճանապարհորդության վերջին անհամեմատ փոքր ե, քան սկզբին: Յերկար ժամանակ մարդիկ չեյին հասկանում, թե վճրաեղից ե ուղտի այսպիսի տոկունությունը: Շատ հեթիաթներ եյին պատմում ուղտի մասին: Մինչև իսկ ասում եյին, վոր նա որ առաջ նախազգում ե հեռավոր ճանապարհորդությունը և մինչև քարավանի դուրս գալը սովորականից շատ ջուր ե խմաւմ, ամրարելով այն իր բարդ առամոքսի առաջին լերեկու բաժանմունքներում, այսպես կոչված գանձակում:

(վորոճաղների առաջին ստամոքսում) և ընդերացանցում
(վորոճաղների յերկրորդ ստամոքսում), վորոնք փոխաբերա-
բար անվանվում են գրպաններ։ Հասկանալի յէ, վոր այս
բոլոր մեկնությունները հերյուրանքներ են։ Աւտումնասի-
րելով Միջին Ասիայի անապանների կյանքը և քանիցո
ձմնապարհ կտրելով քարավանների հետ, մեղ առիթ և յե-
ղել շատ ուղերի հերձահատության կատարել, սակայն,
յերբեք նրանց ստամոքսում ուրիշ վոչինչ չենք տեսեր,
բացի քիչ քանակնությամբ դառը, հոտած հեղուկից, վորի
մեջ անհաշվ ինֆուզորիաներ ու բակուրիաներ կային, վո-
րոնք վորոճողների ստամոքսում անխուսափելի յեն։

Սակայն այս «անապատի նույն» վորտեղից և ձեռք
ըերում իրեն անհրաժեշտ ջուրը, — կհարցնի մեղ ընթեր-
ցողը։ Ուղտն այն ստանում ե իր սապատից։ Նա այդ
չուրն ստանում ե ճարպի այրվելուց ՝ նյութերի տարան-
կումից (լուծվելուց), վոր տեղի յե ունենում որդանիզ-
մում սոված ճանապարհորդության միջոցին։ Ըստվորում
ավելի շատ ջուր և գոյանում, քան թե քաշում եր սկզբ-
ում կուտակված ճարպը — թթվեցման (ոքսիդացման) մի-
ջոցով տարանկման նյութերին միանում ե նաև ողից
ստացված թթվածինը, վոր ուղտը կուլ ե տալիս շնչառու-
թյան ժամանակ։ Յեթե վերցնենք սովորական կովի ճարպը,
ապա բանից դուրս ե գալիս, վոր դրա տարանկման ժա-
մանակ 100 մասից կստացվի միջին հաշվով 112 մաս
ջուր և 182 մաս թոքերից արտադրված ածխային
թթվուտ։ Յեկ ի հաշիվ այն եներգիայի, վորը աղատվում
ե ճարպային նյութերի տարանկման միջոցին, ուղտը կո-
րողանում ե աշխատանք կատարել — քարավանի հետ գնալ
շիկացած ավագուտներով։

Նորից հիշենք և դառը հեղուկի մասին, վորից փոքր
քանակություն միշտ գտնվում եր «գրպաններում» և ուղ-
տի ստամոքսի առաջին յերկու բաժանմունքների այս-

պես կոչված հորերում։ Այս լորձնանեղուկը յուրատեսակ
մակարդի (մերանի) դեր ե կատարում։ ինֆուզորիաներն ու
բակտերիաները այստեղ են ապաստարան գտնում։ Նրանք
ողնում են շուտով պատրաստել ուղտի վորոճվածքը, կե-
րածի մեջ խմորում առաջ բերելով։ Իսկ իրենք՝ ինֆու-
զորիաներն ու բակտերիաները բազմանում են ահազին
քանակությամբ։ ուղտը մարսում ե դրանց և այսպիսով
ստանում ե որդանիզմի համար այնքան արժեքավոր կեն-
դանական սպիտակուցը։

Շատ հազարամյակներ ավագուտներում ապրելը ուղ-
տին հարմարեցրել ե անապատի յուրահատուկ պայման-
ներին։

Որինակ՝ մենք տեսնում ենք, վոր այս կենդանու
վուներին և մարմնի այլ մասերին մեծ-մեծ կոշտուկներ
կան։

Չե վոր դրանք բնավ այնպիսի կոշտուկներ չեն, վոր
մենք ստանում ենք վատ կոշիկների սեղմումից կամ
քսվելուց։ Բանն այն ե, վոր արելը անապատում սաս-
տիկ շիկացնում ե ավաղը, վորի վրա պառկելիս կարելի
յե լուրջ այրվածքներ ստանալ։

Այրվածքներից ու պարկելահարուկներից՝ մարմնի
այն մասերին, վորոնց վրա պառկում ե ուղտը, նրան պաշտ-
պանում են կոշտուկները։

Դմակավոր վոչխարները նույնպես հեշտությամբ կա-
րող են տանել ճանապարհորդությունը անապատով — ա-
ռանց ուտելիքի ու խմելիքի։ Այս բանը նրանց հաջողվում
ե ի հաշիվ այն ճարպի, վորը կուտակված ե լինում
նրանց պոչի մեջ և մարմնի յետեկի մասում։

Սակայն անապատում ապրում են և այլ կենդանի-
ներ, որինակ՝ ջեյրանները, վորոնք չունեն ճարպի այնպի-
սի պաշտը, ինչպես ուղտը։ Նրանց կյանքը անհամեմատ
գժվար ե. կերապակասից ու ջրի չգոյությունից նրանց

փրկում են սիայն վոտները, վորովհետև այդ դյուքաշարժ կենդանիները կարող են վազել մի ժամաւմ 50 կիլոմետր արագությամբ։ Իսկ իրք վոտներն այդպիսի արագությամբ են թոցնում, ապա կարելի յե վազել դեպի առջակը և հագեցնել ծարավը թեկուզ մի քանի տասնյակ կիլոմետր տարածությունից։



ԶՈՐՔՈՏԱՆԻ ՑԱՏԿՈՂՆԵՐԸ

Մի քանի տարի առաջ Մոսկվայի կենդանաբանական այգուց փախավ սիրերյան մի եղ այծեղջյուր։ Նա դյուրությամբ ցատկեց յերեք մետր բարձրություն ունեցող ցանկապատի վրայով և սլացավ քաղաքի փողոցներով։ Յերեխաների շվոցի ու «հայ-հույ» բացականչությունների տակ կենդանին անցնում եր ընթացող ավտոմոբիլներից և փողոցը կտրում դրամվալի հենց անիվների մոտով։ Անհապաղ հետապնդում կազմակերպեցինք, սակայն այծեղջյուրը ավելի արտգ եր սլանում և մեզնից դյուրաշարժ եր։ հետապնդողները մայթերով եյին վազում, իսկ նա ցատկում եր ցանկապատերի վրայով։

Յերկու որ մենք վաշինչ չգիտեյինք փախստականի մասին, իսկ յերբերդ որը հեռախոսով զանդահարեցին կենցնաբանական այգի։

— Խոսում են միլիցիայից: Յերեխաների ամբոխը ձեր այծեղջուրին հալածում ե Տվերյան փողոցով: Մարդիկ ուղարկեցեք նրա գեմ:

Մեր աշխատակիցները կրկնել չտվին այդ հրավերը: Արդեն Թրուզինսկայա փողոցում նրանք կտրեցին այծեղջուրի ճանապարհը, սակայն սա գնդակի պես ներս թռավ մի մեծ վարսավիրանոցի բաց դռնով: Այստեղ, հենց դռների դիմաց պատից կախված եր մեծ հայելին: Կենդանին ամբողջ թափով իր պաղերով բախվեց ապակուն և փշրանքների ցայտերը դես ու դեն թափվեցին:

— Ո՞յ, չար ույժը, — ճշճվաց չարաբաստիկ հայելու առջև բազկաթուին նստած ծերունին: Իսկ վարսավիրը նախց բազկաթուին և ատշությունից քար կտրեց: Նրա հաճախորդը վայրկենապես անհետացավ, առես հալվեց ու կորավ ողում: Հետո միայն, յերբ ամեն ինչ հանդարտվեց և այծեղջուրը պարապ մարդկանց պատվավոր ուղեկցությամբ հանդիսավոր կերպով դուրս բերվեց վարսավի-, բանոցից, հաճախորդին գտան անկյունում, սեղանի տակ սավանների և անձեռոցիկների մեծ կույտի մեջ:

Սակայն, այդ ինչպես եր պատահել, վոր այծեղջուրը փախել եր կենդանաբանական այդուց:


Բանն այն է, վոր այդ կենդանիներին արտաքին աշխարհից անջատող ցանկապատը շատ հարաբերական խոչընդոտ է: Միայն խորապես արմատացած պատմանկան ոեֆլեքսը — ազատությունից զրկված լինելու սովորութը — սովորաբար պահում ե այդպիսի կենդանիներին քաղաքի փողոցներում զբունելուց: Դաղստանի վայրի ցուլերը, վորոնք ապրում են կենդանաբանական այգու նոր տերիտորիայի վրա, առանց վորեվե լարման, որինակ ցատկում են այնպիսի խոչընդոտի վրայով, ինչպիսին ցանկապատն ե, վորով նրաց ազատ արգելանոցն ե շրջապատված: Մինչդեռ այդ ցանկապատի բարձրությունը նույնպես պակաս չե յերեք մետրից: Վոչ պակաս դյու-

րությամբ այդ կենդանիները ցատկելով բարձրանում են շենքերի կտուրներին, իրենց սմբակներով կառչելով պատերի ամենափոքր խորդություններին:

Մեր կենդանաբանական այդում այսպիսի մի դեպք տեղի ունեցավ:

Մի անգամ մենք փոքրեցինք մեծ արու վայրի ցուլին քշել նոր տեղածաս, բայց նա անսպասելի կերպով հսկայական մի թուիչք գործեց արգելացանկին ջրով լի փոսի վրայով և... հայտնվեց սպիտակ արջերին հատկացված փոքրիկ հրապարակի մեջտեղում: Կարծատես կեցվածքից հետո, բնեուային գիշատիչները հարձակվեցին վայրի ցուլի վրա, սակայն հենց նույն վայրկյանին տեղն ու տեղը նրանք կանգ առան շվարած: արջերի հենց քթի տակից ցուլը առանց թափ առնելու մըրկի պես թռավ բարձրացավ վեցմատրյա ուղղաձիգ պատով և քարացավ նրա սուր շրթին, ասես մարմարից կերպած քանդակի լիներ:

Սակայն այդ ցատկումներն ել մեծ չեն թվում համեմատած նրանց հետ, վորին ընդունակ են բժագոր յեղջերու:



Ճարպիկ ցատկում:


Ները: Մի անդամ մենք պետք ե բռնելինք մի քանի յեղ-
ջերուներ, վորպեսզի նրանց ուղարկելինք ուրիշ քաղաքների
կենդանաբանական այգիները։ Մարդկանցից կազմած խիտ
շարքը կենդանիներին կամաց-կամաց սեղմեց նեղ անց-
քի ուղղությամբ, վորը ձգվում եր մինչև վանդակները։
Անսպասելի կերպով բոլոր հոտը յետ շրջվեց։ Հաջորդ վայր-
կանին յեղջերուներից մեկը փոքր ինչ ճկվեց յետի վոտ-
ների վրա, ոդը խոյացավ և թռավ մարդկանց գլխների
վրայով։ Նրա յետեվից ոդի միջով նետվեցին նաև մա-
ցած տասնչորս յեղջերուները։ Դա մի հազվադեպ տեսա-
բան եր։ Նրանցից յերկուսը, վորոնք կանգնած ելին այդ
փոքրիկ հրապարակի տարբեր ծայրերում, միաժամանակ
պոկվեցին գետնից և մի վորոշ անկյան տակ թռան մի-
մյանց դեմ։ Թվում եր, թե նրանց կործանումն անխու-
սափելի յե։ Բայց ահա կենդանիները բախվեցին ոդում
և գնդակի պես՝ մի կողմ թռան։ Հաջորդ վայրկյանին
նրանք՝ ասես վոչինչ չեր յեղել՝ արդեն կանգնած ելին
փոքրիկ մարդի վրա և առաջվա պես տագնապով հետևում
ելին մեզ։

Փխրուն հողի մեջ մնացած հետքերով մենք չափեցինք
ցատկումի յերկարությունը, վոր յեղջերուները կատարե-
ցին առանց թափ առնելու։ Պարզվեց, վոր մեր չորքոտանի
ցատկողները ոդի միջով թռել-անցել ելին մոտ տասնմեկ
մետր։ Սաստիկ չափազանցված են պատմածներն այն
ցատկումների մասին, վորոնց ընդունակ են վագքերը։ Գո-
յություն ունի կարծիք, վոր այդպիսի ցատկումները հաս-
նում են տասը և ավելի մետր յերկարության։

Այսինչ նման թոփչքը քիչ հավանական ե մինչև իսկ
թեքվածքով։ Կենդանաբանական այգու հարթ աղատ արգե-
լանոցների վրա վագրերը վեց մետրից ավելի յերկար ցատ-
կումներ չեն արել։

Հապա ի՞նչպես ե, վոր ուստուրիական վագրերը սովո-
րաբար հասնում են քծավոր յեղջերուներին։ Նրա համար,

վոր գաղտագողի կերպով յեղջերուին մոտենալուց հետա-
գագրը այնպիսի մոնչըուն ե արձակում, վորը միանգա-
մայն ջլատում ե այդ կենդանիներին։ Հեռավոր Արևելքի
վորսորդները քանիցս աեսել են թե ինչպես յեղջերուն, վորը
մի ցատկումով հեշտությամբ կարող եր իր կյանքը փրկել,
վագրի ահավոր մոնչյունից հետո անշարժ քարանում ե
եր աեղում, անկանոն կերպով ու հաճախ վոտները փոխե-
լով գետնին։



ԿԱՐԾԵՑՅԱԼ ՄԱՀ

Ով յեղել ե անապատներում, նա տեսած կլինի, թե մողեսներն ինչպիսի արագությամբ են շարժվում արևից տաքացած ավազի վրայով և ինչպես արագանում են ոձերի շարժումները։ Սակայն նույն այդ անապատներում ինձ առիթներ են յեղել լինելունաև աշնանը, յերբ անձրևներ եյին մաղում։ Այդ ժամանակ ոձերը սողում եյին դանդաղդաղաղ, իսկ դյուրաշարժ մողեսները հազիվ եյին շարժում իրենց թաթիկները։

Ինչքան տաք ե յեղանակը, այնքան դյուրաշարժ են դառնաւմ ոձերն ու մողեսները։ Նույնը պետք ե ասել նաև կրիաների, գորաերի, տրիտոնների մասին։ Դա նրանով ե բացատրվում, վոր նրանք բոլորն ել չունեն իրենց մարմնի մշտական ջերմությունը։ Սառնարյուն կենդանիների ջերմությունը միայն շատ քիչ ե բարձր այդ կենդանիների առջած վայրերի ջրի, հողի և ողի, այսինքն նրանց շրջապատող միջավայրի ջերմությունից։ Ջերմությունը նրանց ակտիվություն ե հաղորդում, սակայն քառասուն աստիճանի շոգի ժամանակ նրանք ել ձգտում

են հով տեղ գնալ կամ շտապով փորել, մանել ավաղի ավելի ցուրտ շերտերը։

Լավ ե ոձերի, մողեսների և կրիաների վիճակն ամառ ժամանակ, սակայն ինչ հալ ունեն նրանք ձմեռը, յերբ սառչում ե ջուրը։ Ինձ առիթ ե յեղել քարհանքերում գտնել ոձերի մեծ կծիկներ—լորդուներ և իժեր, վարոնք այնտեղ եյին իջել փտած արմատներով մինչև յերեք մետր խորություն և պառկել եյին քարաշերտերի վրա միմյանց սեղմված կամ կծիկ դարձած։ Մի անգամ սաստիկ սառնամանիքի ժամանակ քարհատները ձյունի վրա գցեցին տասից ավելի իժեր։ Յես նրանց գտա առաջ, քան նրանք կսառչելին։ Զեռս առնելով իժերից մեկին, յես համոզվեցի, վոր դժվարությամբ կարելի յե նրան ծոել։ Սակայն տաք սենյակ բերվելուց հետո ոձը տաքացավ ու կենդանացավ։ Մինչդեռ քիչ առաջ նրա, աչքերը այնպես ճերմակ եյին, ինչպես լինում են սառեցրած շիղաձկի աչքերը։

Ոձերը սակայն ձմեռ ժամանակ միշտ ել գետնի խորքը չեն անցնում։ Նրանցից շատերը ձմեռում են ճահճացին անտառներում, ուր գետնի մակերեսից վոչ հեռու միշտ ել կա գետնատակի ջուր։ Այդ անտառներում յես իժեր գտնում եյի ձյան յերեսին։ մամուռի տակից նրանց դուրս եր քաշում քաջ սպիտակ մի փոքրիկ դազան—կղաքիսը։

Մենք փորձեցինք ձմեռ ժամանակ կիսասառ վիճակում պահել կենդանաբանական այգու ոձերին և կրիաներին, վորովիետե տերրարիումի (հողնոցի) փոքր տարածությունը մշտակես անել դրության մեջ եր դնում մեզ, յերբ հարկ եր լինում աշնանը զեռուններին տեղափոխել փակ բաժանմունքների մեջ, հանելով նրանց ամառալին լայնարձակ աղատ արգելանոցներից։ Իրականացնելով մեր փորձը, մենք վոչ միայն ոձերի և կրիաների ջերմությու-

Նը հասցնում եյինք մինչև զերո աստիճանի,՝ այլ մինչև իսկ սառեցնում եյինք նրանց։ Հասկանալի յե, վոր այս բոլոր կենդանիները միանգամայն դադարում եյին շարժվելուց և անհնար եր վճռել—կենդանի յեն նրանք, թե մեռել են։ Ոձերն, որինակ, նմանվում եյին կարծը, պինդ պարանաերի, նրանց մորթու և մկանունքների մեջ յերևացին ստոցի բյուրեղներ։


Այս դրության մեջ մեր ոձերը մնացին շատ շաբաթներ շաբունակի Բայց հենց վոր նրանց բերում եյինք տաք սենյակի, իսկուն հալչում-տաքանում եյին և կենդանանում։ Իսկ ավագաբնակ փոքրիկ վիշապոձերը շուտով ակսում եյին խեղդել ու կուլտալ մկներին։

Յեթե սառած ոձին փոքր ինչ տրորենք ձեռներում, ապա նրա մարմինը հալչելուց-տաքանալուց հետո, մորթու միջից կարմիր բծեր կերևան։ Դա նրանից ե առաջ դալիս, վոր սառցե բյուրեղների սուր ասեղիկները ծակծկել են արյան անոթները. իսկ յերբ արյունը վերստին կսկսի շրջանառություն կատարել, նրա մի մասը դուրս կհոսի կաշվի շերտի մեջ։

Մեզանում շատ քիչ ոձեր եյին սատկում, յեթե ջերմությունը, վորի մեջ նրանց պահում եյինք, զերոյից յերկույերեք աստիճան ցած չեր իջնում։ Մինչդեռ կրիաները աղատ դիմանում եյին ութ և մինչև իսկ տաս աստիճան սառնամանիքի մեջ։ Դա դեռ քիչ ե. սառեցրածները հետագայում մինչև իսկ ավելի լավ վիճակում եյին, քան թե նրանք, վորոնք ձմեռել եյին տաք շենքում։ Մարտ ամսին արդեն մենք հնարավորություն ունեցանք տեսնել մեր փորձին լենթակա կրիաներին կենդանի և առողջ։ Նույն այդ ժամանակ տաքության մեջ ձմեռող կրիաներից շատերը հիվանդանում եյին։ Վահանն ակսում եր վիտեր, վոր հաճախ մահ եր առաջ բերում։ Մինչդեռ ցրտով «պահծո դարձրած» կրիաների վահանի վիտումը դադարում եր,

իսկ վորոշ դեպքերում հիվանդները գտրնան դեմ բոլորովին առողջանում եյին։

Սառեցրած կենդանիներին պահելու տեխնիկան առանձին դժվարություններ չի ներկայացնում։ Որինակ, սառեցրած կրիաներին մենք շարում եյինք արկղի մեջ, նրանց միջև չոր տերևներ դնելով։ Հետո այդ արկղը մենք դնում եյինք այնպիսի տեղ, ուր ջերմությունը ութ աստիճան ցրտից ցած չեր իջնում։ Հենց սա յե սառեցրած կենդանիներին հաջող կերպով պահելու հիմնական պայմանը. պետք ե միշտ հետևել, վորպեսզի ոձերի և կրիաների ջերմությունը չիջնի այն սահմանից ցած, վորն անցնելուց հետո վրա յե համսում այլևս վոչ թե կարծեցյալ, այլ իսկական մահը։



ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ

Մի անդամ, ինչպես յեղափ, վորսորդները մեր կենդանաբանական այգին բերին մի վանդակ, վորի մեջնստածեյին յերկու աղվեսածագ։ Սակայն հազիվ մենք ավարտեցինք այգու նոր բնակիչների «գրանցումը», յերբ հարկ յեղափ քարտոտեկայում նշում անել «հեռացածների» մասին, վորովհետև աղվեսի ձագերը փախան։

Յերկար վնատեցինք փախստականներին, բայց գոնել չկարողացանք։ Անցավ ամառը և աշունը։ Վրա հասավ ձմեռը։ Յեկ այդ ժամանակ առաջին իսկ տեղած ձյան վրա լես յերկան բերի յերկու աղվեսների հետքերը։ Դրանք տանում եյին կենդանաբանական այգու բոլոր անկյունները—ցանցավոր ցանկապատի սողանցքներին, ուրիշ դադանների կերատեղերին, դարպանների մոտ, անհետանում եյին փողոցում և վերստին հայտնվում այգու ծառուղիներում։ Հետքերը խոսում եյին այն մասին, վոր աղվեսները ամեն դիշեր թափառում եյին բաղաքում, ալցելով այլեւայլ բակերի աղբարկները և լուսաղեմին վերադառնում յետ։ Փախստի մոմենտից անցած ժամանակամիջոցում գագանները մեծացել եյին և վորսում եյին վոչ միայն առնետներ, ալլև մեր այգու սաներից վոմանց Յերբ լճակները սառեցին, աղվեսները մի բադ խեղդեցին, ապա և պատառ ոտեցին՝ մեր կադ ալծյամին։

Սահմանագործ դիմել Վորսորդների միությանը միենք խնդրեցինք շներ ուղարկել, վորպեսզի սրանք վերջապես դուրս քշեն աղվեսներին իրենց ստորերկրյա ութեվանից—այգու շենքերից մեկի տակից։ Նույն որն ևեթյերկու ֆոկսուրյեր, վորոնք հայտնի եյին դարձել աղվեսների դեմ մղած կոխվներում, անհամբերությունից դողալով մտան փախստականների բունք։ Շուտով լսվեց հաջոցը—գագանին տեսած շների ազարտ հաջոցը։ Հետո այդ հաջոցը փոխվեց հարցական-անվատան վայնասունի և վերջապես խուճապալին ճղճոցի։ Մի վալրկյան հետո չորքոտանի վորսորդները փութկոտությամբ դուրս ցատկեցին շենքի տակից։

Աղվեսները Մուկվայում եյին մեծացել և իրենց գիշերային զբոսանքների ժամանակ սովորել եյին շներին, վորոնց հետ հավանորեն շատ անգամ կովի եյին բունվել աղբարկներում դաշտ վորեն համեղ կտորի համար։ Նրանք վոչ միայն չվախեցան ֆոկսուրյերներին տեսնելով՝ այլև նրանց վրա սաշատի տարածեցին, «այնքան ել սիրալիր» չընդունելով հցուրերին իրենց ստորերկրյա բնակարանում։

Այսպիսով, վորսն անհաջող անցավ։ Փախստականները դրանից հետո ել դիշեր ժամանակ հարձակվում եյին բադերի վրա և սրանք դժվարությամբ եյին փրկվում գիշատիչներից, քաշվելով լճակի չսառած բաց ջրի մեջտեղը։ Մնում եր մի բան. աչք պահել աղվեսներին գիշերային զբոսանքների ժամանակ և հրացանազարկ անել։

Անշարժ կանգնելով ծառերի ստվերում, լուսնի լուսով յես տեսա, թե ինչպես աղվեսները դուրս յեկան իրենց սովորական զբաղմունքին։ Բավական ժամանակ անց նրանք վերադարձան ավարով. աղվեսներից մեկն ատամներով քռնած տանում եր մի անետ։


Յես չբարձրացը հրացանս և չկրակեցի. այդ յերկու

«անտպաստանները» սպասածից շատ մեծ, թավամազ և ուժեղ յերեացին։ Մի որ անց թարմ ձյան վրա յես վերը ստին տեսա աղվեսների հետքերը։ Նայելով հետքերին դըժւ վար չեր հասկանալ, վոր գագանները տեղ են գտել ախուսատան հատակի տակ, իսկ վերևում ապրում եյին փոքրիկ պոնիները։ Սողանցքը գոցելով, մենք բարձրացրինք հատակի տախտակները և հանկարծակի բերինք փախստականներին։ Վերջապես նրանք վանդակում եյին։

Դիտելով բռնված աղվեսներին, մենք զարմանում եյինք նրանց գեղեցկության և ճարպկության վրա։ Աղշեցուցիչ արագությամբ նրանք ցատկում բարձրանում եյին։ Իրենց արգելանոցի ցանցավոր պատերի վրա, թափ առնելով գլխիվայր սլանում եյին առաստաղով և մյուս պատօվ վերստին իջնում։ Այսպես եր վարժեցրել ազատ կյանքը հսկա քաղաքում, ուր ամեն մի քայլափոխին խոչընդուներ. և ամենանսպասելի վտանգներ ելին հանդիպում նրանց։

Մեր նապաստակներից մի քանիսը նույնպես գտան։ Սողանցքը, վորի միջով ամեն գիշեր այգուց դուրս ելին. գալիս փողոց և առավոտյան միայն վերադառնում։ Լեռնային մի նապաստակ, յերկար փորձերից հետո՝ դուրս ծկվելով յերկաթյա ցանցի միջով, վերջապես գտավ այնպիսի մի անցք, վորն ավելի մեծ եր մյուսներից։ Այդ որեց նապաստակն ամեն գիշեր ճանապարհում եր դեպի Սաղովո-Կուղբինսկայա փողոցը, իսկ լուսաբացին նույնայդ ճանապարհով գալիս եր իրեն հատկացված արգելանոցը։ Այգու դրսի ցանկապատի և իր արգելանոցի միջև մեր նապաստակը գնալ-գալով մի փոքրիկ շավիդ եր բարձել։

Թե ուր եյին ճանապարհորդում նապաստակները չկարողացանք հետեւ ու իմանալ։ Սովորաբար նրանց հետքերը կորչում ելին փողոցում, ուր համարյա յերեք ձգուն-



չեր լինում։ Մի անգամ միայն, առավոտյան, մանր ձյունափոշի թափվելուց հետո, ձյան վրա յես վորոշեցի գորշ նապաստակի հետքը։ Այդ հետքը ձգվում եր մինչև Սաղովայա փողոցը և այնտեղից ծռվում մի ինչ վոր բաց տեղ։ Մի այլ անգամ գիշերը տեղած ձյան վրա կարելի յեր հետքերով կարդալ հետևյալ դեպքի մասին։



Յերեկոյից քաղաք գնացած գորշ նապաստակը մեծմեծ ցատկումներով սլանում եր դեպի կենդանաբանական այգու ցանկապատը, Մի մեծ շուն հետապնդում եր նրան։ Ցանցավոր ցանկապատի սողանցքով ներս ցատկելով, նապաստակն իսկույն ևեթ դանդաղեցրեց իր վազքը, հետո շան աչքի առաջ քիչ նստեց և հետո միայն հանդիսավուսայունով ուղղվեց դեպի մարալների արգելանոցի կերպատակները։ Ինկ ցանկապատի այն կողմում դես ու գեն եր նետվում շունը. սողանցքը չափազանց փոքր եր, վորպեսզի այդ խոշոր շունը կարողանար ընկնել կենդանաբանական այգու աերիտորիան։

Վայրի չորքոտանիների ճանապարհորդությունը մեր մայրաքաղաքի փողոցներում և հրապարակներում — բավական սովորական յերեսույթ եւ Յեթե վաղ առավոտյան տնօշնելու լինեք Մոսկվայի վորեւե ույսոնով, ապա մի անգամ կարելի յե հայտնաբերել աղվեսների, ժամանակիսների, կզաքիսների և վայրի բնության ուրիշ շատ ներկայացուցիչների հետքերը։ Հաճախ մեզ զանգահարում են զիշեր ժամանակ միլիցիայից։

— Մենք հենց նոր բուլվարում մի աղվես տեսանք Արդյոք ձեր այգուց չի փախել...

Բանից դուրս ե գալիս, վոր Մոսկվայում, ինչպես և այլ քաղաքներում «անկեդոլ» կերպով ապրում են շատ մանր աղվամաղավոր կենդանիներ։ Իր ժամանակ այդ կենդանիներին բռնել են քաղաքից դուրս ընկած վայրերում և մեծացրել վանդակներում, իսկ հետո նրանց դաստիարակիչները բաց են թողել նրանց։

Այս փախստականների կյանքը վկայում է այն մասին, վոր շատ վայրի կենդանիներ հեշտությամբ հարմարվում են մինչեւ իսկ մարդաշատ ու աղմկոտ քաղաքում գոյություն պահպանելու պայմաններին։ Իսկ դա մի ավելորդ անգամ հաստատում է ֆառւնան ^{*)} այնպես ոեկոնարուկցիայի (վերափոխության) յինթարկելու լայն հնարավորությունը, ինչպես դա պետք է մարդուն։



ՍԱՌՑԱԴԱՏԻ ՎՐԱ

Փոկերի մեծ մասը ապրում է հյուսիսում, ցուրտ ծովերի սառուցների մեջ։ Յերկար նրանք ձուկ են վորում, ծովային փոքրիկ խեցվետիններ և մոլցուսկներ և ապա հանգստանում են, սառցադաշտի վրա դուրս զալով։ Իսկ ինչպես են փոկերը ջրից դուքս գալիս, յեթե միմյանց քիչ սառցադաշտերն իրենց շերտերով ծածկում են քոլոր բաց ջրերը։ Դոյլոթյուն ունի կարծիք, վոր այդ կենդանիները միայն վերեկից կարող են հնալեցնելը մտանցքը, յեթե յերկար պառկեն մի տեղում։ Դա, ինարկե, ճիշտ չե։ Արտաքին, յենթամտչկային ճարպի հաստ շերտը ապահովար պաշտպանում է այս ծովային գաղանի մարմինը ջերմություն կորցնելուց ե մինչեւ անգամ ձյան վրա յերկար ժամանակ պառկելուց հետո փոկի տակ գոյանում է սուկ փոքրիկ ստուծ փոս։

Մոսկվայի կենդանաբաններին այսում մենք մի վորձ կատարեցինք, վորը մեզ ճիշտ սրատասխան տվեց այդ

հարցին: Յերբ աշունը վրա հասավ, զլենլանդյան յոթ վուկերին մենք տեղափորեցինք այգու մեծ լճակում: Զմեռ. վա ցրտերին լճակը ծածկվեց սառույցով, միայն կերակրելու տեղի մոտ, ուր մշտապես պահվում եյին փոկերը, ջուրը ազատ եր սառցից:

Մի անգամ սաստիկ վախեցրին փոկերին և նրանք շտապով անցան սառցի տակ: Շուտով բաց տեղը սառեց, ծածկելով նրանց դուրս գալու վերջին անցքը. Անցան ժամեր, սակայն դրությունը չփոխվեց: Յերկյուղ առաջացավ, թե արդյոք գազանները չխեղղվեցին ողի պակասությունից: Մենք արդեն մտմտում եյինք այն մասին, վոր պետք ե սառույցը կոտրել և անցքը բանալ:

Առավտայան յես նկատեցի գոլորշու մի բարակ շիթ, վոր բարձրանում եր լճակի մի կետում, նրա սառցահերտի վրա: Զգուշությամբ մոտ գնացի: Սառցի թափանցիկ կանաչի միջով յերեւում եր, թե ինչպես բոլոր յոթ փոկերը քթերը մոտեցրել եյին սառցի փոքրիկ մի ճեղքի և միահամուռ կերպով ոդ եյին ներս քաշում: Իրենց շնչառությամբ նրանք հալեցնում եյին սառույցը ջրի կողմից: Մի քանի ժամ հետո այդ տեղում գոլացավ բաց ջրի կլոր տարածություն:

Անկասկած ե, վոր հյուսիսում ևս փոկերը վարվում են ճիշտ նույն կերպ. լավ ե, վոր Անդրբեկեալին ծովերի սառույցներում—զանազան քամիների, մակընթացության և հոսանքների աղղեցության տակ—միշտ և ամենուրեք կան ճիղքեր:

Հետագայում մեր դիտողությունների ճշտությունը հաստատեցին բեվեռայինները, ինչպես նաև վորսարան վանիլիվը, վորն ուսումնասիրել եր հյուսիսային զրադմունքները: Մովային գազանների խմբի հանդիպելիս, վորոնք քթերը մացրել են նեղ ճեղքի մեջ, գազանորս վորսորդներն ասում են:

—Այդ փոկերն են սառույցը հալեցնում...

Կենդանաբանական այգում ապրելով, ուր սաստիկ ցըրատի ժամանակ ջրամբարները ծածկվում են սառցի հասաշերտով, փոկերը հազվադեպ դուրս են գալիս ջրից, վորի ջերմությունը անհամեմատ բարձր ե ոդի ջերմությունից: Գարնանը նրանք դուրս են գալիս արենի տակ տաքանալու և յերկար քնում են շատ թեթև քնով: Խսկ լերք սառույցը վերջնականապես հալչում ե, փոկերն ընդունակ են ժամեր շարունակ լողալ և սլանում են մոտորային նավակից ել արագ: Նրանք լողում-անցնում են ջրամբարը ամեն ուղղությամբ—մերթ՝ ջրի տակով, մերթ՝ նրա մակերեսով: մերթ՝ մեջքի վրա, մերթ՝ կողքով: Հենց վոր ջրամբարի մեջ մի փոքրիկ ձուկ ենք գցում, իսկույն ևեթ արկտիկան մեր այս սաներն սկսում են ընկնել նրա յետերից այնպիսի ճարպկությամբ, վորը, թվում ե, թե դժվար ե սպասել այդ կենդանիներից—ցամաքի վրա այնպես ծանրու անձարակ:

Վորսից և յերկար լողալուց հետո փոկը հաճախ քնում ե ջրամբարի հատակին: Յերեք, յերեմն և չորս րոպենաւառանց վորնեւ շարժման պառկում ե ջրի հատակին, իսկ հետո, չզարթնած դուրս ե լողում ջրի մակերեւութը. այստեղ նա իր լայնածավալ թոքերն ե ընդունում ոդի մեծ պաշար, մեկ-յերկու վայրկյան բաց ե անում աչքերը և վերստին իջնում ցած:

Փոկերի քունը միշտ ել տագնապալից ե: Սառցադաշտի վրա նա իր աչքերը բացում ե մոտավորապես ամեն, մի հինգ րոպեն. զարթնելուն պես փոկերը արագ աչք ենք ածում իրենց շուրջը՝ արդյոք վորնեւ տեղից, վտանգ չի սպառնում — և իսկույն ևեթ քնում են:


ԾՈՎԱՅԻՆ ԱՌՅՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՈՏՈԼԻՏՆԵՐԸ

Պատճառն ի՞նչ ե — զարմանում ելին կենդանաբանական այդու անասնաբուժները, հերձահատելով սատկած ծովային առլուծին: — Ինչու գաղանն այսքան շատ վերքեր ունի աղիքներում և ստամոքսի մեջ: Կերից: Սակայն չեվոր նույն այդ փրփրուկ ձուկն ուտում են նաև գրենլանդական փոկերը, մինչդեռ նըրանց մարսողական ճանահարհը լիակատար լավ վիճակում ե:

Պատճառն ի՞նչ եք, վոր կենդանաբանական այդու ըստացած բոլոր ծովալին առյուծները (ականջավոր փոկերը) շատ հաճախ հիվանդանում են: Մենք սկսեցինք հետամտել այս հանելուկը լուծելու և շուտով յերևան բերինք,

վոր ծովալին առյուծների մարսողական ճանապարհը սաստիկ աղտեղված և «ոտոլիտներով» — փրփրուկ ձկան մանրիկ լողական փոսկրիկներով: Իսկ փրփրուկ ձուկ այդ գազաններն ուտում ելին մեծ քանակությամբ:

Ոտոլիտներն ունեն սուր ատամնավոր յեղքեր, վոր հիշեցնում են բութ սղոցի ատամները: Ծովալին առյուծի ստամոքսային հյութը չեր կարողացել հալեցնել այդ փոսկրիկները և զրանք կուտակվել ելին նրա ստամոքսում և փորոտիքում, քերձվածքներ առաջացնելով պատերի վրա:



Քերձվածքների տեղ գոյացել ելին վերքեր: Մեր ծովալին առյուծներից յուրաքանչյուրն որական ստամում եր տամանվեց կիլոգրամ փրփրուկ ձուկ: Նշանակում ե, միայն մի օրվա ընթացքում փոկի ստամոքսում կուտակվել եր առնվազն յերկու-յերեք բուռ ոտոլիտ: Դժվարչեալ պատկերացնել, թե հարյուրավոր փոքրիկ այդ սղոցները ինչպիսի վերքեր են հասցրել դժբախտ կենդանիներին:

Սակայն ինչու ոտոլիտները չեյին ֆսասում գրենլանդական փոկերի առողջությանը, թեև նրանք փրփրուկ ձուկ ստամում ելին ավելի քիչ, քան ծովալին առյուծները: Հավանորեն այն պատճառով, վոր գրենլանդական փոկերը աղատ դրության մեջ ապրում են նույն այդ ջրերում, ուրեմն ապրում ե փրփրուկ ձուկը: Մշտապես դրանով սնվելով, գրենլանդական փոկերը ավելի յեն հարմարվում այդ կերին: առաջ, քան ձուկն ուտելը, նրանք կտրում, դեն են ձգում ձկան գլուխը և այդպիսով ոտոլիտները չեն ընկնում նրանց վորկորը: Մինչդեռ ծովալին առյուծները բերվել ելին հարավային Ամերիկայի ափերից, ուր չկա փրփրուկ ձուկ, և, հետևապես, ազատության մեջ այդ գազանները չեն սընվել դրանով:

Այսպիսով, գոյության կովի բարդ պայմաններում տեղի յե ունենում բնական ընտրությունը: Փրփրուկ ձկան հետ չհանդիպելով, ծովալին առյուծները չեն հարմարվել այդ կերին: Նրանք չունեյին այն ոեֆլեքսը, վորը հարկադրում ե գրենլանդական և այլ շատ տեսավի փոկերին գըլխատել ձուկը և այնպես ուտել:

Իմանալով նրանց սատկելու պատճառը, մենք սկսեցինք ծովալին առյուծներին փրփրուկ ձուկ տալ, նախապես գլուխները կտրելուց հետո:



ՊԱՏԵՐԱԶՄ ԱՌՆԵՑՆԵՐԻ ԴԵՄ

Անթիվ, անհամար մկներ կան Մոսկվայի տներում, ներք-նահարկերում և պահեստներում։ Ամենուրեք թրկ են զալիս նրանք և կենդանաբանական այգում։ Առնետներին կարելի յե հանդիպել յուրաքանչյուր արգելանոցում, յուրաքանչյուր վոլ'յերում, յուրաշանչյուր բնակաշենքում և նիմնարկության մեջ։ Նրանք հափշտակում են կերը, փչաց-նում շինարարությունները, վոչնչացնում կենդանիներին։ Ջրամբարի ափին առնետները թաքնված սպասում են, թե յերբ ջրում լողացող թռչունները կմոտենան ափին։ Ճարպիկ կերպով սուզվելով լճակի և ակվարիումի մեջ, նրանք վոչնչացնում են ձկներին։

Ի՞նչպես պայքարել այս չարիքի դեմ։ Չե վոր մենք չենք կարող կենդանաբանական այգում կիրառել թույն և պատվաստումներ, վորովհետև առնետների հետ կարող են թռչուալորվել և մեր կենդանիները։ Մենք փորձեցինք առնետներին վորսալ թակարդներով, փոքր կալիբրի հրա-ցաններից կրակեցինք, սակայն վոչնչացված կրծողների



Բվենի կոփիվը առնետների հետ

փոխարեն քաղաքի հարևան թաղամասերից գալիս եյին նոր հրոսախմբեր:

Դոյության կույի ընտական ընտրությունը հասցրեց այն վիճակին, վոր առնետները այգում լավ եյին հարմարվել կյանքին: Նրանք անամոթաբար տիրություն եյին անում որպէս կոչված թոշունների վանդակներում—մեծ թռչուններ, վորոնք միայն լեշով են անվում. սակայն շատ քիչ կապատահի, վոր առնետը սիրու անի յերեալ ցախաքրորակեր բազեյի վանդտկում, վորի ճճաշցուցակից մեջ դյուրաշարժ կրծողը ցանկալի բաժին ե: Գիշերը յերբեք չմոտենալով գիշերաբուերին և բվեճներին, առնետները հաճախ նրանց կերը փախցնում են որվա ընթացքում: Այդպիսի արշավանքները անպատիժ են անցնում սոսկ այն պատճառով, վոր այդ թոշունները ցերեկ ժամանակ նստած են անշարժ: Իրենց գործունեյությունը սովորաբար մութն ընկնելու հետ են յերեան բերում այս թեավոր գիշատիչները:

Փասիանների և սիրամարգերի վոլ'յերներում առնետներն իրենց առանձնապես սանձարձակ են պահում: Գիշերով առնետները հարձակվում են թոշունների վրա և դրանով հարկադրում են վոլ'յերների որինական տերերին գիշերելու տեղ վնտոել ծառերի ճլուղերի վրա: Յերբեմն մինչև իսկ կատունները նահանջում են առնետների հրոսակախմբերի հանգնության հանդեպ:

Պայքարելով մեր յերգվյալ թշնամու դեմ, մենք յերեմն դիմում եյինք խորամանկությունների: Մի քանի անգամ, որինակ, փասիաններին տեղափոխում եյինք այլ տեղ, իսկ նրանց վոլ'յերներում մեկ-յերկու որ դնում եյինք բվեճներին: Առավոտլան նիրհող բվեճների ճանկերում կարելի յեր տեսնել կիսով չափ կերպած առնետներ: Բայց դա քիչ ե. դետնի վրայի հետքերն առում եյին, վոր գիշերը այդտեղ դաժան տուր ու դմիոց ե տեղի ունեցելու

Այգու հերթապահները ականատես են յեղել իսկական պատերազմների: Հաճախ, բվեճի ճանկած զո՞ի աղաղակից դրդոված, նրա վրա հարձակվում եյին տասնյակ ուրիշ կատաղած առնետներ: Յեվ զիշերային զորեղ թոշունը յետ եր մղում ալդ հարձակումները, վատնելով իր վերջին ույժերը. իր թշնամիներին նա բոնում եր սուր ճանկերով, խեղղում եր, պատառ-պատառ անում: Սակայն մինչև իսկ այդ ուժեղ գիշատիչին առնետները հաճախ հարկադրում եյին զո՞ն առած թոշել ծառի վրա: Իսկ գորշ նեյասիտ կոչված բուերին յերբեմն առավոտյան գանում ելինք մասմաս գզգզված: Դա առնետների գործն եր:

Սակայն վորքան ել առնետները հանդուգն լինեյին, բվեճների դեմ մղած յերկորյա կոփմերից հետո կրծողները հետո յերկար ժամանակ մուտք չեյին դործում այդ տեղերը:

Առնետների դեմ նույնքան հաջողակ կռվում եր և նրանց հախից գալիս վոչ մեծ, ճարպիկ տափաստանային աղվեսը—կորսակ անունով: Տեղը, վոր մենք նրան հանձնարարում եյինք» մաքրելու համար, լուսաբացին ծածկված եր լինում առնետների դիմակներով: մեծ քանակությամբ կրծողներ դես ու դեն ընկած եյին ջարդված գանգերով: Իսկ կորսակը կծիկ դարձած, խաղաղ ննջում եր մի անկյունում, ասես վոչինչ չեր յեղել:

1935 թվի գարնանը Մուկվա յեկավ կոնդոնի կենդանաբանական այգու դիրեկտորը, դոկտոր Վիկերսը: Նա այցելեց մեր կենդանաբանական այգին և պատմեց, վոր իրենք հաջող կերպով կռվում են առնետների դեմ: Scilla maritima բույսի սոխուկներից քաշած հյութով: Վայրի վիճակում այդ բույն աճում ե Միջերկրական ծովի և Ատլանտյան ովկիանոսի ափերին: Նա ազգակից, ե մեր պրոլետակա կոչված ճնծաղիկին և հավանորեն պետք ելինի Սև ծովի ափերին, Սուխումիի շրջանում:

Կոնդոն վերադառնալուց հետո դոկտոր Վիկերսը մեզ

ուղարկեց՝ նմուշի համար՝ մի շիշ հյութ, Պիտակի վրա գրված եր, վոր թույնը ներդործում և միայն կրծողներին և միանդամայն անվաս և մնացած կենդանիներին Սակայն, մենք վախեցանք հավատալ ուեկամին և վճռեցինք սկզբու մկատարել միքանի փորձ թունավորված կնրով մենք կերակրեցինք հատուկ բռնված առնետներ, մի կատու և տառ ճնճղուկ: Մի որից վանդակում նստած առնետների մարմնի յետեմի մասերը կաթվածի յենթարկվեցին, իսկ կատուն և ճնճղուկներն առաջի շատ լավ եյին զգում իրենց:


Ալդպիսով, ուեկամը չխարեց: Փորձն ավարտելուց հետո մենք այդում թափթփեցինք այդ հյութով թունավորված յերկու կիլոդրամ խայծ և սկսեցինք սպասել հետեանքներին: Մյուս որն արդեն առնետներն անհետացան: Միայն յերեմնակի այդու ճանապարհների վրա մեղ հանդիպում եյին հատ ու կենտ կրծողներ կաթվածահար վիճակում:

Զրային թոշունների կերակրելու տեղերում սովորաբար կարելի յեր հաշվել մի քանի հարյուր առնետ: Այդ անդամին թոշուններին տված կերին մոտեցան միայն չորս առնետագեր:

Կենդանաբանական այդու տերիտորիայի վրա ապաստան եյին գտել բազմաթիվ կատուններ: Նրանք թեպետ և վախենում եյին առնետների հրոսակախմբերից, սակայն, այնուամենայնիվ, ի հաշվի նրանց ապրում եյին բնավ յերեք սովորած չմնալով: Այդում թունավոր խայծներ թափթփելուց հետո կատուններն ընկան կրիտիքական դրության մեջ. նրանք նիհարեցին և սկսեցին ջրային թոշուններ վորսար:

Սակայն, կատունների վիշտը շուտով փարատվեց. Լոնդոնից ուղարկված մի շլշ եքստրակտը վերջանալու վրա յեր:

Վերստին սկսվեց պայքարը առնետների դեմ: Քաղաքը լեփ-լեցուն և այդ վնասակար կրծողներով, վորոնք, բացի այդ, տարածում են վարակիչ հիվանդություններ, իսկ այդում վոչնչացրած առնետների փոխարեն մի քանի որից նորերն են հայտնվում:



ԿՈՒՅՐ ԳԱՅԼԱԶՈՒԿԸ

Մի քանի գալակիներ ապրում են Մոսկվայի կենտրոնաբանական աբդու մեծ և պարզապ լուսավորված ակվարիումում: Նրանք բոլորն ել գեղնավուն շատ բաց գույն ունեն և նրանցից մեկը միայն բոլորովին սե ե: Յերբ կենդանաբանական ալգի յեն գալիս ձկնորսները, նրանք յերկար կանգ են առնում ակվարիումի առջև, դիտելով մեր սե գայլածուկը: Յեվ հաճախ կարելի յե լսել այսպիսի բացականչություններ.

— Այ քեզ տարորինակ բան: Ամեն ինչով գայլածուկ ե, մինչդեռ գույնը իսկական չե: Յերեխ, ուրիշ տեսակ ձուկ ե...

Վոչ, ուրիշ տեսակ չե, այլ նույն այդ տեսակի: Բանն այն ե, վոր ձկների մարմնի գունավորությունը կախում ունի լուսավորությունից. Վորքան պայծառ ե ցուկը, այնքան գունատ և լինում ձկան կաշին: Դա առաջ է գալիս նրանից, վոր լուսի աղղեցության տակ նրա մաւցիք ներկող պիգմենտի հատիկները հավաքվելով կազմում են փոքրիկ շերտեր, առաջ բերելով արտաքին ծածկութների ընդհանուր լուսավորումն: Հենց դրանից ե, վոր այնպես գունատ և պայծառ լուսավորված ակվարիումում ապրող գայլածկների գունավորումը:


Սակայն չե՞ վոր սև գայլաձռւկը նույն այդ տկամբ մեջ ե լողում, հենց նույն ջրում։ Կյանքի պայմանները միանգամայն նույնն են, իսկ կաշվի գունավորումը—բոլորովին այլ։ Վորտեղից ե այդ զանազանությանը։

Ցեթե մենք ուշադրությամբ դիտենք, ապա դժվար չենկատել, վար սև գայլաձռւկը կույր ե։ Նրա զույգ աչքերի յերեսը պատաժ ե սպիտակուցով։ Ինչպես ապացուցել են ուսումնասիրողները, լույսը ազդում ե պիգմենտի հատիկների վրա վոչ թե մորթու (մաշկի) միջոցով, այլ՝ աչքի։ Պայծառ լույսն ընկնելով բիբի վրա, առաջ ե բերում ներվային սիստեմի գրգռում, վորն իր հերթին փոփոխության ե յենթարկում կաշվի պիգմենտացիան։ Ցեթե մենք կապելու լինենք ձկան աչքերը, ապա նա մի քանի ըոպեց ավելի մութ գույն կստանա, մինչև իսկ ամենաուժեղ ըույսի տակ։ Նույնը տեղի կունենա և գայլաձկան հետ, յեթե նրա գլխին հագցնենք կարմիր ապակիներ ունեցող քիչ ծածկող ակնոցներ։

Մեր սև գայլաձռւկը շատ լավ կազմվածք ունի՝ կուշտ ու կուռ և կարծես թե վոչ մի անհարմարությունն չի զգում իր կուրությունից։ Իր մոտով անցնող ձկներին նա վորում ե տեսնողներից վոչ վատ, վորովհետև նրանց մոտենալը զգում ե շրջապատող ջրի տատանումից։

Հավանորեն յուրաքանչյուր ձկնորս տեսել ե, թե ինչպես արագ ե սպիտակում մութ գույնի ձուկը, վորը դուրս ե քաշվել կարթի ոգնությամբ մեծ խորությունից, ուր քիչ լույս ե թափանցում։ Արևոտ ծանծաղուտներում նույն այդ ձկները համարյա թե ձուլվում են բաց գույնի ավագի կամ փոքրիկ քարերի գույնի հետ։

Շրջապատող միջավայրի հետ ձուլվող գունավորումը կոչվում ե հովանավորող կամ ներդաշնակող։ Շատ ձկների դա հաճախ փրկում ե գիշատիչներից, իսկ գիշատիչ ձկանն ողնում ե աննկատելի կերպով մոտենալ իր զոհին։



ԼԵՌՆԱՅԻՆ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ

Գարնանը նապաստակները «փոխում են իրենց մուշտակը»։ Ամբողջ փնջերով նրանց վրայից ընկնում ե ձմեռային մորթը, իսկ դրա փոխարեն տեղը գալիս ե ամառային հագուստը, այսինքն նոսր և շատ կարճ մազեր։ Նապաստակներն իրենց մազը թափում են մարտին, ապրիլին և մինչև իսկ մայիսին, նայած թե նրանք ինչ կիմայական պայմաններում են ապրում։

Ամբողջ ամառը լեռնային նապաստակը ծածկված ե լինում շեկ-մութ-դարչնագույն, կարճ, համեմատաբար նոսր մազերով։ Սակայն հազիվ ինչ վրա յե համնում աշունը—և նապաստակը կարծես թե բոլորովին մազերը չթափելով, վերստին դառնում ե սպիտակ, թափամագ։ Մորթի փոփոխումը սովորաբար տեղի լե ունենում մեկ-յերկու դեկադայի ընթացքում։ Ցերբեմն գլուխը բալորովին չի սպիտակում, մինչև իսկ ձմեռը մնալով խայտարգեաւ։ Ամենից հաճախ շեկ-գորշավուն բծերը լեռնային նապաստակը պահպանում ե ձմեռ ժամանակ ականջներին, քթին, այսե-


բին, աչքավերեռում։ Իս պատահում եւ այն նապաստակների հետ, վորոնք ամառալին գունավորումը ձմեռայինի յենք փոխում շատ ուշ—ցրտերն ընկնելուց հենց առաջ։ Ինչպես յերեռում ե, ցուրտը դադարեցնում ե ներկող նյութի՝ պիգմենտի՝ գոյացման պրոցեսը մարմնի այն մասերում, վորոնք ամենից շատ են յենթակա ցրտահարության։

Մոսկայի կենդանաբանական այգում դիտելով լեռնային նապաստակների գունավորման աշնանալին փոփոխությունը, մենք ալսպիսի մի հարց տվինք մեզ—ի՞նչ ե կատարվում ամառային բրդի հետ։

Եյս հարցի պատասխանը մենք ստացանք հետեւյալ փորձի արդյունքից։ Հուլիսի վերջին յերկու լեռնային նապաստակներ ներկեցինք բասմայով, հինայով և ջրածնի վերաթթվածնատով։ Մեր նապաստակները դարձան բացշեկ գույնի և մինչև աշուն պճնազգեցիկ ման եյին դալիս իրենց համար այնպես անսովոր գունավորումով։ Բայց ահա վրա հասավ նոյեմբերը—և «շեկոները» դարձան միանգամայն ճերմակ։ Ամել եր մեծ քանակությամբ նոր, ավելի յերկար բուրդ, վորն ամբողջությամբ ծածկեց ամառը ներկած մազիկները։ Հաշիվը ցույց տվեց, վոր յուրաքանչյուր ներկած ամառային մազի փոխարեն բանել եր ութիննը ձմեռալին մազ։ Բացի այդ, մի քանի սպիտակ մազերի ծայրերը նույնպես շեկ եյին։ Նշանակում ե, նապաստակի մորթու վրա ձմեռային բուրդն սկսում ե յերեվալ արդեն հուլիսին, թեպետ դրա արագ աճումը սպակ աշնանն ե վրա համառում։ Սպիտակ մազերը աշնանն արագ են աճում և նսեմացնում են հին, մութ գույնի մազերին։

Մազիկները մենք հաշվեցինք նապաստակի մաշկից վողնաշարի մոտ կտրած մի փոքրիկ պատառի վրա։ Այդ սպերացիայի ժամանակ լեռնային նապաստակը միանգամայն համազիստ եր պահում իրեն, ասես չնկատելով, վորեր վրայից «կենդանի-կենդանի կաշի լին մաշկում»։ Իրոք,

լեռնային նապաստակը ոժտված ե մի շատ հետաքրքիր առանձնահատկությամբ։ Նապաստակի մարմնից կարելի է մաշկել մորթու մի մեծ կտոր, համարյա առանց արյունակոսություն առաջ բերելու։ Պետք ե յենթաղբեր վոր այդ միջոցին նապաստակն առանձին և վոչ մի ցավ չի գույմ։ Մի անգամ վորսի ժամանակ վիրավորված նապաստակին գետնից բարձրացրինք մորթուց բռնած։ Զեռափի մեծությամբ մի կտոր կաշի մնաց բռնողի ձեռին, սակայն գաղանի մերկացված մկանունքների վրա վոչ մի տեղ չեր յերեռում մինչև իսկ մի կաթիլ արյուն։ Մի ուրիշ անգամ մենք պատահմամբ ընկանք լեռնային նապաստակի հետքի վրա, վորի յետեկոց ընկել եր աղվեսը։ Աղվեսը հասցրել եր նապաստակին, հաճախակիսորեն շեղահատելով նրա հետքի անկյունները։ Յերկու տեղ նա ընդհուալ մոտեցել եր իր դոճին, սակայն և այնպես չեր կարողացել բռնու արագուան լեռնային նապաստակին։ Կողքից վրա հասնելով, աղվեսը բռնել եր նրա մորթուց և... տեղում մնացել, ատամների արանքում պահելով նրա կաշվից պահած կտորը։ Իսկ նապաստակն սպավելով դրանից, վախել եր ավելի հեռուն Յերկու անգամ աղվեսի հետքին մոտ ընկած եյին նրա դուրս թքած նապաստակի մորթու պատահները, սակայն ձյան վրա վոչ մի տեղ կարմբին չեր տալիս արյան թեկուղ մի հատիկ կաթիլ նապաստակը փախել-պրծել եր հետապնդումից։ Լեռնային նապաստակի կյանքը վրկվել եր շնորհիվ նրա վոչ հաստատ մարթու, ձիշտ այնպես, ինչպես վորոշ աեսակի մողեաներին ազատում ե նրա հեշտ պակվող պոչը։



ՍԱՌՆԱՄԱՆԻՔԻՆ

Բուրք վռոնում եր կենդանաբանական այդու ծառուղիներում։ Ողի միջով տարգում ելին սպիտակ և թակ փաթիլները։ Զմեռը տեր ու տիրական եր դառնուեմ։ Վերջապես իսկական սառնամանիքն ընկափ։ Զերմաշափի մեջ նոդիկն իջափ մինչև 27 աստիճան զերոյից ցած։

Կենդանաբանական այդին ամայացավ. այդ ցրտին ում ե հետաքրքրում եքսկուրսիան։

Մինչդեռ ութ գեռես ջանել եմու-ջայլամենը հանգիստ զբոսնում ելին ձյան վրա, կարծես բնավ չնկատելով սառնամանիքը։ Միևնույն ժամանակ նրանց հասակակիցներից յերկուսը նստել ելին իրենց հատիկացված տեղում և զողում ելին ցրտից։ Անտեղյակ մարդուն տարուինակ ե թվում—վնրտեղից ե ալդ տարբերությունը։ Իսկ բացատրությունը շատ պարզ ե. առաջին ութ ջայլամենը ձվից դուրս գալու առաջին իսկ որից ապրել ելին թարմ ոդում, աստիճանաբար նրանց որդանիզմը հարմարվել եր ողի շերմության փոփոխմանը և նրանք հեշտությամբ տանում ելին սառնամանիքը։ Իսկ այն մյուս յերկու ջայլամեներին մենք փորձի համար հենց ոկզրից

տեղակորել ելինը փակ շենքում նրանց մշտամես պահել ելինը տաքության մեջ և զերո աստիճան ջերմության ժամանակ արդեն ջանել եմուների վիճակը վատթարանում եր. շերմաստիճանի ցատկումներին անսովոր նրանց որդանիզմը շատ արագ սկսում եր մըսել։

Տանու հավերն իրենց մատները մըսեցնում են մինչև իսկ այն ժամանակ, յերբ ցուրտն այնքան ել սաստիկ չի լինում։ Մինչդեռ այնպիսի մի քնքույշ թռչուն՝ թվում են ինչպիսին հարավային փասիանն ե, հեշտությամբ ե տանում սաստիկ ցուրտը։ ՅՇ աստիճան ցրտի ժամանակ փասիանների միանգամայն մերկ վոտները բնավ չեյին տուժում։ Ինչպես յերեսում ե, ամեն ինչ այդ արոպիքական թռչունների յուրահատուկ ֆիզիոլոգիայի մեջ ե։

Ցրտի հանգեալ շատ ավելի զգայուն են մեր հյուսիսային թռչունները—մայրեհավը, կաքավը, ճայը։ Յերբ ցուրտն ընկափ, ճայը և գորշ կաքավները դիշերներն սկսեցին թագնվել հարդի մեջ, իսկ մայրեհավերը խորը թաղվում ելին ձյան մեջ։

Վորքան սաստիկ են սառնամանիքները, այնքան լճակի բաց տեղում շատ են լողանում ջրային թռչունները։ Յել դա ինքնին հասկանալի յե. այդ ժամանակ ջուրն անհամեմատ տաք ե, քան թե ողը։ Սուզկան բադերը մինչև իսկ լճակի հատակին են սուզվում և այնտեղ մնում են մոտ մի րոպե, իսկ վետուրների վրա հալչում են սառցի հատիկները։ Հալչելը հատակում ավելի արագ ե կատարվում, քանի վոր ըթի ներքին շերտերն ավելի բարձր ջերմություն են պահպանում. այն ժամանակ, յերբ ջրի մակերեսի մոտ շերմությունը զերոյին մոտ ե, լճակի հատակին հասնում ե չորս աստիճան տաքության։

Ցրտերին բաց յերկնքի տակ ելին մնում նաև մեր ուղտերը, բայց յերբեք վոչ վոք չի տեսել, վոր նրանք այդպիսի գեղքերում դողան։ Մինչև իսկ Մոսկվայի ամենասաստիկ ցրտերը միանգամայն հանգիստ տանում են

ուղտերը և իրենց սովորական անտարբերությամբ վորում են:

Հետաքրքիր եր դիտել ցուրտ ժամանակ այն փոքրիկ տարածությունը, վորի վրա միասին ապրում, մնջում ու մեծանում ելին գորշուկները, արջերը, գայլերը, աղվեսները, ջրարջերը և այլ կենդանիներ։ Արջի քոթոթը մի գիրկ խոտ եր հավաքնել տրվելանոցի յերեսին թափածից և տանում եր իր ապաստարանը, ուր արջուկի հետ միասին տեղափորված եր մի գորշուկ, Մուռաքի մոտ գորշուկը հանդիպեց արջուկին, խոտը խլեց նրանից և յետ-յետ գնալով, արագ փունց այն իրենց տնակում, իսկ յեթե վոչ մի տեղ ավելորդ փուոց չեր մնում, արջը, վորակն ավելի ուժեղը, առանց այլնալության քշում եր աղվեսներին և ջրարջերին, իսկ հետո գորշուկի հետ միասին հարդը կրում եր իրենց բունը։ Յերբեմն արջուկը փորձ եր անում խել այն հարդը, վոր իրեն փուոց ծառայում եր Դիկտե անունով եղ գալին, սակայն դա նրան չեր հաջողվում։ հենց վոր քոթոթը մոտենում եր, գայն ատամներն եր ցույց տալիս և այն ժամանակ մեր ավագակը զգուշությամբ շեղակի նայելով, շուրջանակի անցնում եր բարկացոծ գաղանի մոտով։ Նույնպիսի դիմադրության արջուկը հանդիպում եր և Մանիշկա անունով աղջեսի կողմից։ ականջները սեղմած, ատամները բաց, նա անթարթ նայում եր քոթոթին իր չար, կանաչ, մանրիկ աչքերով։ Թվում եր, թե ինչ ել վոր լինի, աղվեսը չի տա փոսոցը։ Սակայն արջը (նրա անունը կրոշկա յեր) հանկարծ այնպես եր հասցնում աղվեսի վզակոթին, վոր սա գլխիոնձի տալով մի կողմ եր թոշում։ Հաղթողը հանդիսատ վերցնում-տանում եր նրա խոտը և յետի վտաների վրա ծիծաղելիոթեն լընդուղակով, ավարը տանում եր իր սեփական տունը։ Իսկ յերը գիշերները սառնամանիքից ճաքճքում ելին ծառերը, գորշուկը քոթոթի հետ քնած եյին խոտով լցված վորջի խորքում միմյանց քիալ կալած։



ԱՐՄՎԻ ՎՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Արել թեքվում եր դեպի մայրաքայլ գնում եի միակ կածանով, տափաստանում կատարած մի շաբաթվա զբոսանքից Սեմիպալատինսկի վերադառնալով։ Մթնշաղը վրա լեռ հասնում, իսկ մինչ քաղաք գեռ հեռու յեր։ Անսպասելի կերպով ըլլակի այն կողմում յերեվաց դաղախական յուրաը։ Տերը կանգնած եր մուռաքի մոտ և սիրալիր ժպտում եր։ Բարեկեցինք միմյանց։ Նա ինձ հրավիրեց հանգստանալու։

Յուրախ անկյունում թառի վրա նստած եր մի ահապին քարալիծիւ։ Նրա անշարժությունը խաբուսիկ յերեվաց։ Թվում եր, թե դա խրտվիլակ եւ։

— Ինչու յե մթնում նստած, — հարցրի յես տանտիբոյն, — Եղանակ խոմ թուշելու ել կմուանա։

Թոշնի տերը քմծիծաղ տվեց, արծվին դուրս բերեց յուրատից և նրա գլխի վրայից հանեց թափակը։ Հզոր թեփափոր գիշատիչը թափահարեց իր մեծ-մեծ թները և սկսեց պտույտներ գործել յուրախ վերնում։ Արծիվն աս-

ողմանամբքար բարձրություն գըավեց և, թվում եր, թե այլս յերեք յետ չի դառնա: Սակայն նրա տերը մի տեսակ շվացքեց — և նույն վայրկյանին արծիվը թեվերը ծագելով, քարի պես ընկնել սկսեց մեր վուների մոտ: Համարյա հենց գետնին հասած նա բացեց իր թերը, սահուն իջավ ցած և իր նախկին տեղը դրվեց, վորպես պարգեվ ստանալով մի մեծ կտոր միս:


— Կավ վորսորդ ե, — ասաց տերը, սիրով շոյելով իր թեավոր բարեկամին: — Ուզում ես, յեկ վաղը միասին վորսի գնանք: Յես ուրախությամբ համաձայնեցի:

Առավոտյան մենք ձիերով ճամբա ընկանք: Ղաղախի ձեռքը հենված եր հասուկ մի նեցուկի վրա և հագած եր կաշվե ձեռնոց, Արծիվը անշարժ նստած եր նրա վրա. Եուը թասակը քիալ ծածկել եր թոշնի գլուխը:

Ծուտով հայտնվեց գայլի հետքը, իսկ տաս կիլոմետր անց հորիզոնի վրա յերեաց և գայլը՝ Վորսորդն արծվի գլխից քաշեց թասակը և ահագին թոշունը ոդը խոյացավ:

Բարձր յերկնքում մի շրջան գործելուց հետո արծիվը տեսավ վորսը և ճախրասավառնումով ընկավ նրա յետեփից: Նրա թուիչքը շեշտակի յեր: Արծվին գայլից անշատող տարածությունը արագ կերպով փոքրանում եր: Ամբողջ թափով մենք սլացանք նրանց յետելից, սակայն մի քանի լողելից գաղանը և նրան հալածող թեավորը անհետացան բլրակի այն կողմում:

Յերբ մեր ձիերը տեղ հասան, վորսորդի միջամտությունը թոշնի և գաղանի մենամարտության մեջ այլնս համարյա թե ավելորդ եր: Արծիվը իր մի թաթով ճանկել եր զոհի ազդրը, իսկ մյուսով ճարպկությամբ բռնել եր շուռ յեկած գայլի դունչը: Թեավոր գիշատիչը պինդ քռնել եր նրան և թույլ չեր տալիս շտկվելու: Լսնակոնած կաշվի յերիդն ապահով կերպով պահում եր թոշնի վունելը: Այդ նախաղգուշությունը նախատեսել եր վորսորդը, այլապես ուժեղ գայլը, վորձելով ուժգին շարժու-




Արծիվը նամակերը խրեց գայլի մարմինը:

մով ուղղել իր մարմինը, կարող եր պոկել քարարծվի վոտը:

Կոփվը մոտենում եր իր վախճանին: Մոխրագույն դայլի դույգ աչքերը կացահանված եյին. պլոկած կաշին լայն շերտով ճակատից կախվել եր բաց բերանին: Իմ հյուըընկալը մոտեցավ դայլին և մտրակի կոթով վերջ դրեց նրա կյանքին: Սակայն արծիվը չեր ուզում ձեռքից տալ վորսը: Յես հետաքրքրությամբ հետեւում եյի, թե հետո ինչ կինի:

Վորսորդին արագ մոտեցավ արծիվին, նրա վրա զցեց իր խալաթը և խալաթի տակ ճարպկությամբ հազցըրեց թասակը քարարծվի դլինին: Թուչունը միանգամից կակղեց և դադարեց դիմադրելուց:

Իհարկե, արծիվն այնքան ել հեշտությամբ հաղթանակ ձեռք չի բերում գայլի հանդեպ: Սակայն նենց դրա համար ել վորսորդը գնահատում և սիրում ե այդ անվեհեր թունին, վորն աշնանը բազմաթիվ նաղաստակներ, աղվեաններ և այլ դադաններ ե բոնում նրա համար:



ՄԱՀՎԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ

1934 թվի գարնանը աֆրիկական վայրի գորտնուկավոր խողը ևեր կենդանաբանուկան այգում առաջին անգամ ձագեր բերեց: Նա վեց դոճի ծնեց և տարորինակ եր թվում, վոր մայրը կարծես թե բնավ չի հայտնաբերում մայրական հոգատարություն: Նա իր ձագերին կտաղաբար պաշտպանում եր մարդկանցից, սակայն ինքն առանց նայելու, ուր ասես վոտքը դնում եր և ամեն ըստե կարող եր ճիշել անբավարար ճարպիկ դոճիներին:

Սակայն, գորտնուկավոր խողի սերունդը իր կյանքի առաջին խոկ որից չտեսնված ճարպկություն, գյուղաշարժություն և պրագ շարժումներ լիրեան բերեց: Հենց վոր մայրը վեր եր կենում տեղից, գոճիները դես ու դեն եյին փախչում: Մինչև խոկ այն ժամանակ, ինը ձագերը սովոր ժամանակ կպչում եյին նրա ստինքներին, նրանք այնուամենայնիվ զգույշ եյին և իրենց ծնող մոր ամենա-

չնչին շարժման դեպքում արագ ցատկումներով հեռու ելին փախում:

Չնայած այդ բանին, վեց գոճիներից յերկուսը սատկեցին մոր սմբակների տակ: Դրանք ամենաթույլերն ելին և ամենադաշտաղաշըմները այդ վեցյակից:

Բանն ի՞նչումն ե: Միթե իրոք գորտնուկավոր խոզը չունի մարդական հոգատարություն իր սերնդի հանդեպ: Իհարկե, ունիր Սակայն այդ հոգատարությունը շատ յուրատեսակ եւ Գորտնուկավոր խոզերի մեջ բնական ընտրությունը սկսվում է ձագերի ծնվելու ըոպեցից: Իսկ առաջին հայցքից մոր այդքան չնչին հոգատարությունը իր յերեխաների նկատմամբ այն հետևանքն ունի, վոր կենդանի մնում են միայն՝ ամենաուժեղները, ամենաարագիկները: Հենց գորտնուկավոր խոզի այսպիսի ձագերն են, վոր կարող են ապահովել իրենց նմաների հետագա գոյությունը, ապրելով ազատության մեջ՝ աֆրիկյան տուկալի գիշատիչներով մշտապես շրջապատված:



ՑԱԽԱՔԼՈՐԻ ՄԱՅԸ

Այս դեպքը պատահեց Մոսկվայից վոչ հեռու: Զմեռը, ուզմա-վորսորդական տնտեսության անտառում անտառապահը մի ցախաքլոր տեսավ: Նա այնքան թույլ եր, վոր չեր կարող թռչել և հեշտ բռնվեց ձեռքով:

Հիվանդ թռչնին տարան պահականոց և ախտեղ նա մի ժամից մեռավ:

Շուտով նույն այդ անտառում գտնվեցին ելի մի քանի ցախաքլորներ և դահուճներ: Դա մեզ հետաքրքրեց. ընության մեջ շատ հազվադեպ կարելի յե տեսնել իրենց բնական մահով մեռնող գաղաններ և թռչուններ:

Ցախաքլորի դիակը տրվեց մեզ: Նրա մահվան պատճառը վորոշելու համար մենք հերձահատեցինք նրան: Թը ոչ նի մկանոտ ստամոքսի մեջ քիչ չեյին սահանաքարիկները, սակայն վոչ նրանցից, վոր մեզանում պատահում են Մոսկվայի մոտ, այլ բերովի քարեր, վորոնցով սովորաբար ծածկում են շաղաների միջն ընկած տարածությունը յեր-

կաթուղագծերի յերեսքի վրա։ Հենց այդ մանրիկ քարերը բացին հանելուկը։

Բոլոր բուսակեր թոշունների մկանու ստամոքսում գտնվում են մանրիկ քարիկներ։ Դրանք յուրատեսակ յերկանաքարեր են, վորոնց ովնությամբ աղացվում են կոշտ տեսակի կերերն առաջ, քան կմանեն տասներկումատնյա աղիքը։ Ուսումնասիրելով անտառալին վորսաթոշունների դահուճների, խլահավերի կամ ձերմակ կտքամիերի կերի սեղոնայնությունը, յես մշտապես բախվում եյի այդ յերեսութի հետ։ Յեվ յուրաքանչյուր վորսորդ շատ լավ գիտի, վոր հոկտեմբերին ամենից հարմար ե խլահավեր վորսալ լուսադեմին, յերբ նրանք թոշում են դեպի լճափերը, զանազան փլվածքներ կամ այլ տեղեր, ուր կարելի յեգանել անսահմանափակ քանակությամբ փոքրիկ, վողորկ քարեր։ Դա սովորաբար պատճում ե աշնանը, ամառային տռատ կերերից ձմեռային աղքատիկ և նվազ մննդարար կերի անցնելիս թոշունն իր ստամոքսում քարիկների պաշար ե տեսնում ամբողջ հոկտեմբեր ամսին և նոյեմբերի կեսը։

Ինչու նա այդքան ժամանակ ե վատնում այդ բրնի համար։

Ուշիւշով քննության առնելով թոշունների ստամոքսների պարունակությունը, դժվար չե համոզվել, վոր խլահավը, որինակ, կտցում ե վոչ բոլոր մանրիկ քարերը, — նա ամենայն խնամքով ընտրում ե միայն կվարցի թափանցիկ խոշոր հատիկները, վորոնք ամենամեծ կարծըությունն ունեն, իսկ դրանց մեջ նա ընտրում ե այնպիսիները, վորոնց յեղբերը վողորկ են։ Հեշտ չե բավական քանակությամբ այդավիսի մանրիկ քարեր գտնելը, կվարցից պակաս կարծրություն ունեցող հանքերը թոշնի ստամոքսում մշտապես քսվելուց արագ կերպով մաշվում մանրանում են և հետեւաբար ընդունակ չեն վորպես յեր-


կանաքարեր յերկար ծառայելու իսկ ձմեռ ժամանակ լրացնել այդ քարիկների պաշարը միջտ հնարավոր չե, վորովհետև դրանք ընկած են ձյունաշերտի տակ։

Անտառում մեռած ցախաքլորին հերձահատելը ցույց տվեց, վոր նրա թոքերի մի մասը և ողային փուչիկներն այնքան ելին մնաված ամենամանը պարագլացին սընկով (ասպերգիլլյուս), վոր մուգ-դարչնա-կանաչավուն գույն ունեյին։

Ցախաքլորը վո՞րտեղ կարող եր վարակվել այդ պարզիտային պնկով։ Այդ հարցի պատասխանը մենք ստացանք այն ժամանակ միայն, յերբ ուշիւշով զննեցինք նրա ստամոքսի մեջ դարնված քարերը։ Դրանք նա կարող եր հավաքել յերկաթուղագծի յերեսքի վրա, ուր նա հավանորեն թռած ե յեղել խոր ձյունով ծածկված կվարցի հատիկների անհաջող վորոնումներից հետո։ Յերկաթուղագծի յերեսքից քարիկներ հավաքելիս թոշունը վարակվել եր պարագիտային պնկով, վորն այնտեղ զարգանաւմ ե մարդատար վագոններից գուրս թափվող արտաթպրությունների վրա։ Յերկաթուղագծի յերեսքից վերցրած քարիկների հետազոտությունը հաստատեց մեր յենթադրությունը (դրանցից ամլավին բուլյոնի մեջ աճեց ճիշտ այդպիսի մի սունկ՝ ասպերգիլլյուս)։ Այսինչ վորսորդական տընտեսության ձորից հավաքած քարերից, ինչպես նաև կեչու կոկոններից մենք չկարողացանք ստանալ և վոչ մի սունկ։

Այնտեղ, ուր ձյան շերտը թոշուններին հնարավություն չի տալիս լրացնել մաշված յերկանաքարիկների պաշարը, վորսաթոշունը կամ մահանում ե, ի վիճակի ըլինելով կոշտ փայտակերերը մարսել, կամ թե հարկադրված ե լինում թոշել դեպի յերկաթուղային յերեսքը։ Իսկ թե ինչ հետեւանքի յե հասցնում դա, մենք արդեն համոզվեցինք ցախաքլորի հետ պատահած դեպքից։

Հավաթոչուններն արժանի լեն, վոր նրանց մասին գեթ փոքր ինչ հոգ տանենք: Զմեռը նրանց մանրախճերով ապահովելը շատ հեշտ է. միայն թե պետք է զանազան տեղերում մանրիկ քարեր թափեր դրանք ձյան ծածկումից յեղենյա ճյուղերից շինած պատվարով պաշտպանելով:



ՈԴԱՅԻՆ ԶԲՈՍԱՆՔՆԵՐ

Ինչ վոր մեկն ասաց, վոր Կրամնայա Պրեմնյան — դա Մոսկվայի միակ ուայոնն է, ուր ապրում են զերեր և վագրեր, փղեր և արջեր, թութակներ և ջայլամներ:

Իրոք, ապրում են: Ցեվ վոչ միայն այդ կենդանիները, այլև տասնյակ, հարլուրավոր ուրիշ կենդանիներ: Միայն թե նրանք ապրում են վոչ թե ազատ վիճակում, այլ կենդանաբանական այգում:

Մեր այգու բնակչությունը տարեցտարի նկատելի կերպով ավելանում է. բազմաթիվ այլեւայլ թուչուններ և գաղաններ գարնանը նոր սերունդ՝ են բերում: Սակայն ըոլոր կենդանիներն ել ընդունակ չեն ազատությունից զրկված վիճակում սերունդ տալ, և դա առաջին հերթին վերաբերում ե թուչուններին: Շատ թեվավորների այսպիսի առանձնահատկությունը նրանով ե բացատրվում; Վոր արգելանոցում ապրելու հետևանքով նրանք չեն կարող թոփչքներ կատարել: Իսկ առանց թոփչքների նորմալ չեն կարգանում նրանց ներքին որգանները: Ահա ինչու սերունդ չեն տալիս նաև սուզկան բաղերը, վորոնց թևերը մենք քիչ կտրում ենք, վորպեսզի գարնանը և աշնանը նրանք վոչ մի տեղ չթուչեն — կորչեն: Դրա փոխարեն սաստիկ շատ ձագեր տալիս են կոնչող վայրի բաղերը, վորոնք կենդա-

նաբանական այդում ապրում են լիակատար ազատության մեջ։ Արշալույսին նրանք բարձրանում են քաղաքի վրա, թոշում են դեպի շրջակայքը, սակայն միշտ ել ճշշտապահ կերպով վերադառնում այդի։ Մենք ունենք յերեք հարյուր հատ կոնչող բաղեր և խոչընդոտ չենք հանդիսանում նրանց զբոսանքներին։ այդ թոշունները սովորում են իրենց բնատեղին և մշտապես ձգտում են այդտեղ։

Կարմրագլուխ սուզկան եղ բաղերից մեկը սովորեց թոշել կողքի վրա, չնայած այն բանին, վոր նրա թեփերի փետուրները քիչ կտրած եյին։ Ճիշտ ե, նա չկարողացավ հեռու թոշել, սակայն պատույտներ գործել լճակի վրա նրան հաջողվում եր։ Այդպիսի «Փիզկուլտուրան» բավական եր, վոր թոշնի կյանքը նորմալ ընթացք ունենար։ Յեվ բաղը տվեց յերկու ձագ։

Չահել սուզկանների մեծամասնությունը ձմեռը մնաց այդում, այնտեղ լիակատար ազատության մեջ ապրելով։ Զվելու չճգտեցին և այն սուզկանները, վորոնք դուրս եյին յեկել կոնչող բաղերի տակ դրված ձվերից։ Սովորելով կոնչողների խմբին, նրանք այդ յերամների հետ թըռչում ենին քաղաքից հեռու, բայց միշտ վերադառնում են յետ։

Հեռավոր չվոցների փոխարեն ողալին զբոսանքներ անելով կոնչողների հետ, չահել սուզկանները շատ լավ զարգացն և վերջապես սկսեցին սերունդ տալ ազատությունից զուրկ վիճակում։


Վորսորդների մեջ գոյություն ունի կարծիք, վորպես թե կոնչողների արուները քանդում են բաղերի բները։ Յերեվի այդ լեզենդը նրա համար գոյություն ունի, վոր դրանով վորսորդները փորձում են արդարացնել արու բաղերի վորսը գարնանը։ այդպիսով, նրանք իբր թե փըռկում են կոնչողների ապագա սերունդները կործանումից։

Բայց վորսորդներն իզուր են բամբասում արու բաղերին։ իրականում միանգամայն հակառակն ե։ Կենդա-

նաբանական այգում մենք հեշտությամբ ենք գտնում թուխս նստած բաղի բունը այն պարզ պատճառով, վոր նրա մոտ միշտ կարելի յեւ տեսնել արութին։ Ասես հերթապահություն կատարելով, նա մշտապես գտնվում ե մոտերքում և արթուն կերպով նստում և ջրում, հենց ափի մոտ։ «Ժամապահը» գլուխը չի խոթում բնի մեջ, իսկ ջրային այլ թոշունների միշտ ել քշում ե։

Հարավալին Սիբիրի, խոռվ լճերում չես առիթ եմ ունեցել տեսնելու հազարավոր բաղեր և արուներ։ Գար նանը վոչ վոք չվորսաց նրանց, բայց թխսածերը լրիվ եյին։

Իմ ստացած նամակներում հաճախ մեղադրում են արու բաղերին բներ քանդելու մեջ։ Ըստվորում ըսլոր սովորաբար մատնացույց են անում Ակսակովի հայտնի գիրքը, գրված դեռևս 1852 թվին։ Լավ վորսորդ և գիտող Ակսակովը այդ գրքում խոսում ե այն մասին միայն, վոր ինքը բաղի բներ և գտել ջարդված ձվերով, իսկ մի վոր ինքը բաղի բներ և գտել ջարդված ձվերով, իսկ մի վայրագությունները։ Այս չի կարելի ամեն ինչ գցել արու վայրագությունները։ Այս չի կարելի ամեն ինչ գցել արու բաղի վրա, յերբ այնպես շատ կան գիշատիչներ, վորոնք բաղի վրա, յերբ բանդում են բաղերի բները, իսկ գարնանը բանի վրա գույքերի յեն բաժանվում ե նշանակում ե, արուդերը զույգերի յեն բաժանվում ե նշանակում ե, արու պահանջվում են ճիշտ այնքան, վորքան և եգ բաղեր։



ԲԱԴԻ ՈՒՏԵԼԻՔԸ

Ինչո՞վ են մնվում վայրի բաղերը:

Թվում ե, թե դժվար չե պատասխանել այդ հարցին. պետք ե միայն այդ թոշուններից մի քանիսին սպանել, բացել նրանց ստամոքսները և տեսնել; թե այստեղ ինչ կա. Սովորաբար այդպես ել անում եյին: Յեկ բաղերի ստամոքսներում գտնվում եյին շերեփուկախոտի, վողնեղիսուկի, յեղեգնի, բոշիսի կամ այլ ճահճալին բուլսերի հնդերի ձիշտ ե, շատերը դիտել են, վոր վայրի բաղերը ձկներ են բռնում, գիրտեր, վորդեր և խեցգետնանմաններ, սակայն այդպիսի կերերը համարվում են պատահական. չե վոր դեռևս վոչ վոք այդ կերը նկատելի քանակությամբ չի գտել թոշի ստամոքսում:

Միանգամայն այլ կերպ հարկ յեղավ դատել, յերբ Մոսկվայի կենդանաբանական այգին Սիբիրից ստացավ մի մեծ խումբ հողամաղիկ բաղեր: Նախքան Մոսկվա

քնկնելը, նրանք մեկուկես ամիս գտնվում եյին ճանապարհին: Ամբողջ ճանապարհին բաղերին կերակրում եյին միայն ցորենով և ձկնով, իսկ յերբ մենք հերձահատեցինք մեկ-յերկու զույգ սատկած հողամաղիկներ, նրանց ստամոքսներում գտանք միայն կատարավոր շերեփուկախոտի հնդեր:

Այսպիսով, միթե բաղերը մնվում են այդ հնդերով: Իհարկե, վոչ: Ում ե պետք այն կերը, վորը չի մարսվում մինչև իսկ քառասունինդ որ ու գիշերվա ընթացքում: Կատարավոր շերեփուկախոտի պինդ հնդերը ստամոքսում մնացել եյին միայն այն պատճառով, վոր թաշունները չեյին կարողացել մարսել դրանք:

Կվարցի կարծր հատիկների հետ այդ հնդերը կատարել են յուրատեսակ լերկանաքարերի գեր, վորոնք ոգնում են ավելի արագ մանրացնել կուլ տված կերակուրը: Սակայն, ինչո՞վ են կերակրվում բաղերը:

Կենդանաբանական այգում մենք վորոշեցինք ավելի ծիշտ ստուգել, թե ինչու ջրային թուշունների մարսողական որգաններում չեն գտել կենդանական կերի մնացորդներ: Մենք սկսեցինք կոնչող արու բաղերին կերակրել վորոշ կերերի ծիշտ վորոշված քանակությամբ և քիչ ժամանակ անց հերձահատեցինք այդ կոնչողներին, վորովեսղի ուսումնասիրենք նրանց ստամոքսների և աղիքների ալարունակությունը:

Կերակրելուց քսան բոպե հետո արդեն բաղի ստամոքսում չկար վոչ ձուկ, վոչ անձրեային ճիճուններ, վոչ խեցգետնանմաններ, վորոնցով մեր թոշունը Շնախաճաշել եք: Յերկրորդ բաղը մենք հերձահատեցինք քառորդ ժամից հետո, իսկ յերրորդին - տաս բոպե անց կեր տալուց հետո: Նույն արդյունքն ստացվեց. ստամոքսներում չեր մնացել ընդունված կերակրից և վոչ մի հետք: Հերձահատության ժամանակ չգտնվեց և վոչ մի թեփուկ (ձկան

վահանիկ), թեև մյուս կենդանիները սովորաբար շատ յերկար են մարսում շեղաձկան խոշոր թեփուկները:

Մենք վերցրինք արու բարի ստամբռային հյութից մի կաթիլ և նրա մեջ թողինք ձկան թեփուկը. դա տարրալուծվեց մեր աչքի առջև:

Բագերի այս զարմանալի հատկությունը՝ այդպես արագ մարսել կերակուրը՝ սխալ յեզրակացությունների բերեց նրանց ուտելիքի նկատմամբ:

Ինարկե, մի քանի բույսեր վորոշակի դեր են խաղում բաղի ուտելիքի մեջ, սակայն յեթե վորեն մեկի խելքին փշեր վայրի բադերին կերակրել միայն ճահճային բույսերի կոշտ հնդերով, ապա խեղճ թռչունները շուտով կսատկեյին սովոր:


Յերեկոները կոնչող բագերը թռչում են գեղի մարդագետինները կամ անտառի բացատը և այնտեղ ուտում են մեծ քանակությամբ անձրևային ճիճուններ, վորոնք դիշելները դուրս են սողում իրենց բներից: Յերկույթերիք ըոպեյից արդեն ճիճուն տարրալուծվում ե բաղի ստամբռային հյութի մեջ. մնում ե միայն ճիճվի փոքից դուրս յնկած հողը՝ քիչ քանակությամբ ու ցեխ:

Ճիշտ նույն կերպ դատարկ են լինում փոքրիկ կտցարների և խաղատանիկների ստամբռանները, վորոնց համարյամիշտ կարելի յե հանդիպել ծովեղերքներին: Մերթ ջրին մոտենալով, մերթ յետ նահանջելով վրա հասնող ալիքներից, այդ թռչուններն ասես պարում են ծովեղերքին: Իսկ յերբ ալիքը փլչելով հեռանում ե, նրանք արագությամբ ինչ վոր բան են գջում ափի թաց շերտի վրայից, մինչև վոր այն վերստին կծածկի նորից վրա հասնող փրփրալից ալեկատարը:

Հրացանազարկ անելով մի խաղտանիկ, մենք տեղանուտեղը հերձահատում եյինք նրան, սակայն նրա ստամբռում միշտ ել միայն ավազահատիկներ եյինք գըտնում: Առակս դինչ ցուցանեա: Զե վոր թռչունը խոմ

ավագ չի վորում ծովեղերքին: Այս հարցի պատասխանը գտնելու համար պատանի բնագետները մաքուր մաղի միջով լվացին տիղմը, վերցրած ամսնակոյժության այն շերտից, վորով ախալես հետաքրքրվում եյին թռչունները: Մաղի վրա մնացին բազմաթիվ բարակ, ոլիգոխետ կոչված վորդեր: Ահա թե ինչ վորս եր գբավել ծովափին պարող խաղատանիկներին: Բանից դուրս յեկավ, վոր ալիքի հեռանալուց հետո շատ ոլիգոխետներ սկսում են շարժվել և տղմի միջից դուրս են ցցում իրենց մարմինները: Թռչունները կարողանում են նրանց կացել առաջ, քան ալիքը վերստին դեպի ափ կվազի, իսկ մեկ-յերկու բուլեյից ստամբռային հյութի ամբողջությամբ հալեցնում ե վորդին:





ԱԴՐԱՎԱՆԵՐԸ

Ավագուտ գետեզերքի վրայով դանդաղ թռչում եր մի ագռավ։ Ասես իր վերջին ույժերն սպառելով, նա ծանր ու անկանոն թափահարում եր թները։ Հավանորեն քաղցը ուժասպառ եր արել ագռավին։

Անսպասելի կերպով թռչունը թփրտաց ոդում։ Սկըզբում նա ինչ վոր բանի յեր նայում, հետո ցած իջավ և մոտեցավ ավազի վրա ընկած անատամ խեցիին։ Այդ խեցին բերանն առնելով ագռավը նորից ողը խոյացավ։ Սակայն նա հազիվ եր հասել տաս-տասնուհինդ մետք բարձրության, յերբ լայն բաց արեց կտուցը և թողեց խեցին։ Անատամ խեցիի ընկնելուց հետո ճախրասլաց թոփչքով իջավ և ագռավը։ Խեցին ընկավ ավազի վրա և բնավ շվասվեց։

Յերեք անգամ ագռամն ող բարձրացավ և յերեք անգամին ել ցած գցեց միևնույն անատամ խեցին։ Դա միանգամայն ուժասպառ արեց թռչնին։ Սակայն գետափին փոքր ինչ հանգստանալուց հետո նա վերստին բարձրա-

ցավ մի քանի մետր, պտտվեց քարոտ թմբի վրա և վերալարձավ այնտեղ, ուր ընկած եր խեցին։ Չորրորդ անգամին ագռավը միայն այն ժամանակ ցած գցեց խեցին, յերե ներքեւում լերևացին քարերը, վերջապես անստամիկ կրային զրահը ջարդված եր, Խեցին իր կառչուն ձանկերով բռնելով, սոված թռչունն ագահությամբ սկսեց մաքրագրել մոլլուսկը։

Այս դեպքի մասին իր նամակում պատմել ե Ա. Սեղինը, վոր գարմանքով դիտել եր ագռավի համառությունը Իրոք, գոյութիւնն մշտական կորիվ շատ կենդանիների մեջ այնպիսի սովորույթներ ե առաջացրել, վորոնք ոգնում են հաճախ յելք դանել, թվում ե թե, ամենադժվարին վիճակից։ Փոքր ինչ ալ կերպ, քան ագռավը, կտցար-կաչաղակն ե կոտրում խեցին։ Կտուցն առնելով այն, նաայնքան ե խփում քարին, մինչև վոր կոտրվի։

Այլ թռչունների մեջ ագռամներն աչքի յեն ընկնում իրենց անհամեմատ ավելի զարգացած գլխուղեղով։ Ահա ինչու, դիտելով նրանց, հաճախ կարելի է տեսնել շատ և շատ հետաքրքիր տեսարաններ։ Այդպիսի տեսարաններից մեկի մասին մեզ գրել ե վորսորդ կաչոնին Ռւրալից։

Հրացանաձգության մեջ հմտություն ձեռք բերելու նպատակով, Ռւրալում աշխատող այդ լեռնային ինժեները սկսում ե ամեն որ կրակել ագռավների վրա։ Սակայն լերկու-յերեք որ հետո ագռամներն սկսում են տեղերից թռչել, հենց վոր իրենց թշնամին լերեւում եր հեռվում։ Թռչուններն իջնում եյին սոճիների գաղաթներին վոչ այլ կերպ, քան հրացանի զարկի հասանելիությունից հեռու։

Ինժեները դիմում ե խորամանկության։ Ամեն տեսակ նախադպուշություններով նա դարան ե սարքում փոքրիկ ամբարում, աղբարկուից վոչ հեռու, վորի մոտ սովորաբար լինում ելին ագռամները։ Սակայն թռչունները տեսնում են, թե թշնամին ինչպես ե դարան մտնում

և մի ակնթարթում թոշում-ծեփում են սոճիների գագաթները։ Միայն այն ժամանակ են նրանք իջնում աղբարկղի մոտ, լեռը ինժեները հեռանում ե իր դարանից։

Մյուս որը թոշուններին հետապնդողը ամբար և մըտնում յերկուսով—իր ընկերոջ հետ, վորը մի ըոպեյից յետ ե վերադառնում, սոճիների վրա նստած ագուամների աչքի առաջ քայլելով։ Ինժեների պարզ հաշվով՝ թոշունները տեսնելով հեռացող մարդուն, կմիամտանան և նորից կթոշեն դեպի աղբարկղը։ Սակայն ագուամներն այդ գեղքում ել չխաբվեցին։ Նրանցից վոչ մեկը չժողեց իր ապահով տեղը, մինչև վոր դայրացած ինժեները չգնաց տուն նախաճաշելու։


Զախորդության հանդիպած վորսորդի ջիգը գալիս ե, մի մարդ, վորն իր դրամում դիպլոմ ուներ բարձրագույն գպրոցը հաջող կերպով ավարտելու մասին, չի կարողանում խարել սովորական ագուամին։

Նա ամբար և մտնում յերկու ընկերների հետ, իսկ հետո նրանց յետ ե ուղարկում։ Յերբ մարդիկ աչքից կորան, ինժեները մեծ հույսով դուրս ե նայում ճեղքի արանքից... Ագուամներն առաջվա պես կանոնավոր կերպով նստած ելին սոճիների վրա։

«Չե, բալամ, անձնատուր չեմ լինի», — վճռեց վորսորդը և դարան մտավ յերեք ընկերների հետ։

Վերջապես նա կարող եր ցնծալ։ Յերբ յերեք տղամարդիկ դուրս յեկան փոքրիկ ամբարից, անցան բակի միջով և մտան տուն, ագուամները միանգամից իջան աղբարկղի մոտ։


«Այդ պատահաբար դրված փոքրից, — գրում եր իր նամակում ընկեր կաշիոնին — կարծես թե կարելի յե յեղբակացություն անել. յեթե մարդիկ յերբեմն հրացանագարկ անելով ագուամներին «հաշվում են ավարը», ապա ագուամները ևս կարող են հաշվել մարդկանց, թեպետ յերերից բարձր հաշվելը վեր ե նրանց ուժերից»։



Կրակոց ագուամների վրա։

Սակայն միթե բանը հաշիվն եւ կարելի յե, թե թոչունները պարզապես հիշել են իրենց թշնամու արտաքինը և ցած չեն իջել սոճիների գաղաթներից, մինչև վոր հեռացող մարդկանց մեջ տեսել են նրան: Իսկ յերբ փոքրիկ ամբարից դուրս յեկան յերեքը և խմբված հեռացան բակից, ազռաֆները կարող եյին սխալվել, վորսորդի տեղ դնելով նրանցից մեկին:

Հնդհանուր առմամբ ազռաֆները շատ լավ հիշում են մարդկանց դեմքն ու ֆիգուրան, մանավանդ նրանց ովքեր անհանգստություն են պատճառում նրանց:



ԴԺՎԱՐ ԶՄԵՌՈՒՄ

Խաղաղ լճակի հայելանման յերեսով դանդաղ լողում ե գեղեցիկ թոչունը: Նրա վետրավորումը ավելի ձերմակ է, քան ձյունը, իսկ յերկար վիզը հպարտ կորություն ունի:

Այսպես են պատկերում կարապներին նկարների վրա, այդպիսին նա ներկայանում ե մեզնից յուրաքանչյուրին: Իրոք, դա իսկական ջրային թոչուն ե, և մինչև իսկ դըժվար ե նրան պատկերացնել ջրից հեռու:

Այսինչ ջրի մակերեսի աննշան բարձրացումն այն ավազաններում, ուր ձմեռում են կարապները, հաճախ առաջ ե բերում նրանց կոտորածը: Հենց այսպես պատճեց մի անգամ Լենքորանի մոտ, Անդրկովկասում: Քամու ճնշման տակ Ղզլ-Աղաջ կոչված ծովախորշում ջրի մակերևույթը բարձրացավ քսան կամ յերեսուն սանտիմետր: Չանցավ մի ամիս և այստեղ ձմեռող կարապներն այսպիս լղարեցին, վոր բնավ չեյին կարողանում թոչել. նրանցից մի քանիսին վորսորդներն ուղղակի ձեռքով եյին բռնում:

Կարապները ստակում եյին տասնյակներով, հարյուրներով: Լենքորանից մեզ նամակներ ուղարկեցին և հարցնում եյին, պատճառն ի՞նչ եր այդ աղետի: Զե՞ վոր նա-

Խորդ տարիները այդ թոշունները ծովախորշում առկռում ելին բավական լավ:


Իհարկե, զանազան պատճառներ կարող եյին լինել: Յեվ, վորպեսզի զրանք պարզվեն, ծովախորշի հետազոտությունը մենք հանձնարարեցինք մեր պատանի բնադետների խըմքին, վորը և նքորան եր մեկնել Դղլ-Աղաջի արգելանտառն ուսումնասիրելու համար: Տեղ համելով, պատանի բնագետները պարզել եյին, վոր ջրի հորիզոնի բարձրացումը կարապներին զրկել եր կտուցով մինչեւ այդ ծանծաղ խորշի հատակը համելու հնարավորությունից: Իսկ հատակում կային խմունջներ, փոքրիկ խեցգետիններ, ջրաբույսեր և այլ կեր նրանց համար:

Սովը կարապներին հարկադրել եր կերի համար սուզվել ծովախորշի հատակը, սակայն դա հեշտ աշխատանք չեր: Եներգիայի այնպիսի մեծ քանակություն եր պահանջում դա, վոր այնքան դժվարությամբ ձեռք բերած կերակուրը չեր կարող լրացնել վատնած ուժը: Կարապներն աստիճանաբար նվազում եյին, թուլանում և սատկում:

Ի՞նչ հետևանք ունեցավ ձմեռելու պայմանների առաջին հայացքից արդքան չնչին փոփոխությունը: Այն, վոր Մի հորդացման դժվարին որերին ավելի տանելի վիճակ անելին այն թոշունները, վորոնց վիզը փոքր ինչ յերկար եր, քան թե մյուս կարապների մեծամասնության վերը:

— Թույլ տվեք առարկելու, — կասեն մեզ: — Մի՞թե կտրապները չեյին կարող մերձափնյա ջրերում վորսար:

Իհարկե, կարող եյին: Սակայն ծովախորշի ափերն այնքան ցած եյին, վոր ջրի չնչին բարձրանալն անդամ ծածկում ե զրանք հարյուրավոր մետրեր: Յեվ վորովհետեւ մերձափնյա գետինը ամայի լե, ուստի կարապները նրա վրա վոչ մի ուտելու բան չելին գտել վորքան ել վոր կտուցներով վնասելու լինեյին արդ բնավ վոչ խոր տեղբուժմ:



ՏՈՒՐԱՆԳԱ-ԿՈՒԼ ԼՅԻ ՎՐԱ

Իբուիշ գետի վերին հոսանքն ուսումնասիրելիս յես մի քանի որ վրան զարկի Տուրանգա-կուլ լճի ափին: Այդ հանապարհորդությունը ձեռնարկված եր բնությունն ուսումնասիրելու միակ նպատակով, ինչու և յես հետաքրքրությամբ սկսեցի զիաել ֆշացնող կարապների մի ընտանիք, վոր յես նկատել եյի մերձափնյա մացառություներում:

Բացի ծնողներից, Փշան կարապների ընտանիքում կային յերեք ձագեր: Աշուն եր և թոշունները պատրաստվում եյին չվել գեղպի հարավ: Ահա նրանք թողին լիճը և մոտ հինգ կիլոմետր հեռացան բնատեղերից: Անսպասելի կերպով ջահել կարապներից մեկն անջատվեց թոշողների ջերամից և յետ վերադարձավ: Նրա յետեկից վերադարձան և մեծահասակ կարապները: Ծնողները յերկար պատվեցին ողում և ամեն կերպ իրենց ձագին հարկադրում եյին չվել մնացած ամբողջ ընտանիքի հետ միասին: Յեվ սա,

վերջապես, թուավ նրանց յետևից, սակայն շուտով կը կի՞ն
վերադարձավ դեպի լիճը:


Այսպես կրկնվեց մի քանի անգամ: Նորից ու նորից
ծնողները պատվեցին իրենց բնատեղի վրա: Կարապը թուավ
նրանց հետ միասին, սակայն իսկույն վերադարձավ, հա-
զիվ ինչ գուրս գալով իրեն ծանոթ վայրի սահմաններից:
Վերջիվերջո ընտանիքը լքեց նրան, թողնելով լճի վրա,
ուր նա մնաց ցրտերը դիմավորելու:

Յես ամենայն ուշադրությամբ հետևեցի մնացող կա-
րապին—արտաքուստ նա առողջ եր և վոչ մի արատ չու-
ներ: Ինչումն ե բանը: Ինչու նա աշնանը չթուավ դեպի
տաք յերկրներ, Տուրանդա-կուլում ապրող մնացած կա-
րապների հետ:

Ինչպես յերեւմ ե, յես գործ ունեյի մի դեպքի հետ,
յերբ թուչունը չունի չվելու սեզոնային մղում: Թողնելով
Տուրանդա-կուլի ափերը, յես գիտեյի, վոր այդ կարապն-
այլս յերեք չի տեսնի իր ցեղակիցներին, նա ընդունակ
չեր գոյության կովին և ձմեռը նրան մահ եր սպասում:

Չվող թուչունների մեջ այսպիսի դեպք—յերբ բացա-
կայում ե հարավ թուչելու մղումը—հազվագեպ ե պատա-
հում: Ահա ինչու զարմանալի չե, վոր մեզ հետաքրքրեցին
այն պատճառները, վորոնք հարկադրել եյին մի քանի սերմ-
նադռամների ձմեռելու մնալ Վյազմա քաղաքի շրջա-
կայքում:


Մեղ հետաքրքրող հարցերը պարզելու համար մենք
հրացանազարկ արինք տասնհինգ թևափոր «ձմեռողների»:
Բանից գուրս յեկավ, վոր նրանք բոլորն ել ունեյին վորեւ-
մնասվածք: Որինակ, մեկը չուներ ներքին ծնոտի կեսը,
վոր յերեխ թե յերբեք կոտրել տարել եր հրացանի
կոտորակը, մյուսի թե ձանանչոսկը՝ անցյալում կո-
տըրված՝ ծուռ եր աճել, յերբորդը գուրեկ եր յերկու մատ-
ներից, չորրորդի մկաններում խորը մնացել եր մի կոտորակ:



Կարապները նրան մենակ բաղին:

հենց ալդ վնասովածքները հարկադրել եյին սերմնագուավներին հրաժարվել հեռավոր չույցից:

Մեր կենդանաբանական այգում շատ տեսակի վայրի բաղեր ուժգին արտահայտված ձգտում ունեն դարնանը և աշնանը չվել, սակայն նրանք Մոսկվայում մնում են միայն այն պատճառով, վոր անդամահատված են նրանց թեր մատի մորմը: Այդպիսի բաղերը բարձր խորանում են ողջ և յերկար թռչում են քաղաքի վրա, սակայն հեռավոր ճանապարհորդության դուրս չեն գալիս: Մինչև իսկ պեղիկանները, վորոնց թիվ ծայրը նույնպես քիչ կտրված ե, դարնանը և աշնանը թռչում են Մոսկվայի փողոցների վրա, սակայն հետո միշտ ել վերադառնում են այգի, մնալով Մոսկվայում ձմեռելու:



ԱՆՍՊԱՍԵԼԻ ԹՎԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Արգելանոցի մոտ, ուր գվարթ խաղում եյին արջի քոթովները, կանգ առավ եքսկուրսանտների խումբը: Պատմելով նրանց արջ-ընտանիքի մասին, դասախոսը հանկարծ արագիսի մի հարց տվեց:

— Դուք, ինարկե, գիտեք թվաբանություն: Այդ գեպքում փորձեցեք լուծել հետեւյալ խնդիրը. նորածին մանուկը քաշում է յերեք-չորս կիլո, ձեր կարծիքով վորքան պեսք և քաշի տասներկու փթանոց արջի քոթովթը:

— Հավանորեն, կես փութ,—պատասխանեց մեկը
— Ի՞նչ եք առում, ավելի, —ասաց մյուսը: —Եդ արջը խոմ կույի մեծություն ունի, իսկ նորածին հորթը առնվազը կքաշի կես փութ:

Յեվ յուրաքանչյուրն իր լուծումն եր առաջարկում, սակայն դրանցից և վոչ մեկը ճիշտ չեր, քանի վոր նրանցից վոչ վոք սիրա չարեց այդ քաշն անվանել հինգ-վեց կիլոգրամից պակաս:

Իրոք, գմկաը և պատկերացներ, վոր ահագին արջի նորածին քոթովթը միջին հաշվով քաշում և սոսկ կես կի-

լոյնի չափ, այսինքն այնքան, վորքան և առնետը։ Միևնույն ժամանակ ընտանի վոչխարների նորածին գառները տաս անդամ ավելի ծանր են լինում։ Սամոյերի ձագը մոտ յերեսուն գրամ ե քաշում, իսկ ժամտաքիսի ձաղը—տաս գրամ։

Համեմատեցեք նորածինների քաշը իրենց մայրերի քաշի հետ—և դուք կտեսնեք, վոր արջաքոթոթի քաշը կազմում է իր մոր քաշի 0,27 տոկոսը, իսկ սամոյերին կինը—մոտ 3 տոկոս և նորածին գառնուկի քաշը—համարյա 10 տոկոս։ Իրենց կյանքի առաջին դեկադայում ժամտաքիսներն որ ու դիշերվա մեջ ավելանում են մատագորապես 2,4 գրամ, սամոյերները—մոտ 10 գրամ, նորածին գառնուկները—մոտ 180 գրամ, իսկ արջաքոթոթները—ընդամենը միայն 2,5 գրամ։

Ինչու՞ն ե բանը: Բնության մեջ վո՞րտեղից են այսպիսի տարրովինակ՝ թվում ե թե՛ համեմատությանները։


Արջը ձմեռն ե սերունդ բերում, հունվարին։ Մինչե զարուն իր վորջից դուրս չգալով, նա իր ձագերին կաթով ե կերակրում և դրա վրա վատնում ե դեռևս աշնանից որգանիզմի մեջ կուտակած ճարպի և այլ սննդատունյութերի պաշարը։ Ձմեռն այդպիսի նյութերի պաշարն արջի որգանիզմում վոչ մի անդամ չի լրացվում, մայր արջը մինչև իսկ ջուր չի խմում։ Հասկանալի յե՛, վոր այդքան փոքրիկ արջաքոթոթներին շատ կաթ պետք չե, և մայրն ընդունակ ե մինչև գարուն կերակրել նրանց։ Իսկ յեթե քոթոթները ծնվելին նույնքան մեծ, վորքան նորածին հորթերն են, ապա նրանք որ ու դիշերվա մեջ կծծեյին կես վեղբոյից վոչ պակաս կաթ։ Դա շատ շուտով ուժասպառ կաներ մորը և մահվան դուռը կհասցներ ամբողջ ընտանիքը։ Մինչև գարուն քոթոթները շատ դանդաղ են աճում-մեծանում։ Դրությունը փոխվում ե միայն այն ժամանակ, յերբ արջ մոր հետ նրանք սկսում են դուրս գալ վորջից, «արեի վաննաներ» ընդունելով և

առատ մնվելով։ Այդ շրջանում քոթոթներն ուտում են նախորդ տարվա հատապտուղները, բույսերի կոշտերը (կոճղեզներ), մըջյուններ, վարդեր, թրթուրներ, մկներ, մի խոսքով այն բոլորը, ինչ հնարավոր ե գտնել ուտելու համար բնության գարնանային զարթոնքի որերին։ Այդ ժամանակից սկսած քոթոթների քաշն սկսում ե ավելանալ անհամեմատ արագ տեմպերով։

Նորածին գառները—ինչպես նաև ընդհանուր առմամբ խոտակերների ձագերը—սնվում ու մեծանում են կաթով, վորն անընդհատ ստացվում ե տարին բոլոր ուտվող կերերից։ Բացի այդ, խոտակերերի ձագերն իրենք ևս շատ շուտով սկսում են արածել, ուստի և նրանք անհամեմատ արագ են աճում, սկսած իրենց ծնվելու առաջին իսկ որից։

Մանը ճարպիկ գիշատիչները—սամուլը, ժանտաքիսը, կղաքիսը — համեմատած իրենց հետ՝ փոքրիկ ձագեր են բերում։ Դա հղի մայրերին հնարավորություն ե տալիս հեշտությամբ ձեռք բերել կեր մինչև իսկ հղիության վերջին որերին, վորովհետև գաղանը մնում է ճարպիկ և դյուրաշարժ։ Իսկ յեթե դա ուրիշ կերպ լիներ — նրանք չենին կարող վորսալ վոչ մկներ, վոչ ել թըռչուններ։

Մանը գիշատիչների ձագերը շատ արագ են մեծանում և առաջին դեկադայի ընթացքում արդեն նրանց քաշն ավելանում ե համարյա յերեքհարյուր տոկոսով։ Բացի այդ, նրանց առաջին ատամները—կարիչները—շատ ավելի ուշ են դուրս գալիս ժանիքներից և սեղանատամներից։ Առաջին հայացքից թվում ե, թե դա մի չնչին առանձնահատկություն ե, այնինչ դա ձագին հնարավորություն ե տալիս յերկար ժամանակ սնվել իր մոր կաթով, առանց նրա ծծակները կծոտելու։ Բանն այն ե, վոր նորածին սամուլների և ժամտաքիսների աչքերը բացվում են ծնվելուց յերեսունչորս, յերբեմն և յերեսունվեց որ հետո։




ՊԼԱՆԵՐԻՍՏ ԱՐԾԻՎԸ

Դա սեպտեմբերի սկզբին եր: Սավելեվյան յերկաթու-
ղագծի վրա, իկա կայարանից վոչ հեռու, յես կտցարներ
ելի փորսում: Հենց այդտեղ եր, վոր առաջին անգամ ինձ
առիթ յեղավ դիտել թևավոր «պլաներիստների» թոփչքը:

Անծայր անտառային մասսիմի (կույտի) վրայով դե-
պի հարավ ելին թռչում մի գույղ ջահել արծիվներ: Նրանք
ծանր-ծանր թափահարում ելին իրենց թևերը և պահփում
ելին գետնից հարյուր մետր բարձրության վրա: Ցերեում
եր, վոր հեռավոր ճամբան հոգնեցրել ե այդ թռչուններին:
Վերջապես նրանք հավասարվեցին ընդարձակ բացատին
և սահող թոփչք անելով, թեփերն անշարժ տարածեցին
ողում: Փոքրիկ մարդագետնի վրա պտտվելով, ջահել ար-
ծիվները գնալով միշտ վեր ելին բարձրանում, ասես մի
ինչ վոր զորեղ մագնիս նրանց դեպի ամպերն եր քաշում:
Տաս րոպեյից հետո այդ մեծ թռչունները յերեում ելին
վորպես հազիվ նկատելի կետեր: Այն ժամանակ նրանք նորից
դեպի հարավ ուղղվեցին, սակայն առանց մկանային ուժի
ոգնության: Ջահել արծիվները լողում ելին ողի մեջ,
ասես իսկական պլաներիստներ լինելին,—նրանք բոլորովին
չելին գործում թերեով: Աստիճանաբար իջնելով, կարծես
թե սահելով թեթև զառիվայր լեռնակի շեղության վրայով
թռչունները շուտով անհետացան հորիզոնի այն կողմում:

Իրոք, վոչ մի տարրորինակ բան չկա այլպիսի թոփչ-
քի մեջ. չե՞ վոր մենք բոլորս սովոր ենք արծիվներին տեր
նել ողի մեջ սավառնելիս: Սակայն պատճառն ի՞նչ ուր-
վոր ջահել արծիվներն այնպես ուժգին գործում եյին իրենց
թերեով, յերբ թռչում եյին անտառի վրայով: Դա շատ պարզ
ե բացատրվում: Բաց դաշտի վրա գետինն ավելի յեր
տաքացել արևից, քան թե այնտեղ, ուր այն ծածկել եյին
ծառերը, ուստի և մարդագետնի վրա բարձրանում եր տաք
ողի վերընթաց հոսանքը: Ահա հենց այս հոսանքով եր,
վոր ոգտվեցին ջահել արծիվները, վորպեսզի առանց մկա-
նային ուժ վատնելու բարձրություն զրավեն, վորից հե-
տո յերկար ժամանակ կարող եյին ցած սահել առանց
եներգիայի վորեւ վատնումի: Միթե ճիշտ նույնպես չեն
վարփում պլաներիստները, վորոնց թռչող ապարատը վոչ
մոտոր ունի, վոչ ել թափահարող թերեր: Վորպես կանոն,
իրենց ոգային ճանապարհորդության մեծ մասն արծիվնե-
րը կատարում են սահող ճախրաթոփչքով: Այդ ե ահա
պատճառը, վոր նրանք ժամանակ առ ժամանակ ահազին
բարձրություն են գրավում: Իմ դիտած ջահել արծիվ-
ներն ըստ յերեույթին չափից դուրս յերկար թռել եյին
անտառի վրայով: Թռչունները վատնել եյին իրենց վերց-
րած բարձրության ամբողջ տարածությունը, իսկ ճանա-
պարհին դեռևս չկար և վոչ մի բացատ, վորի վրա նրանց
բարձրացնել կարողանար վերսլացիկ ոգային հոսանքը:
Յեկ հոգնատանջ ջահել արծիվները թռչում եյին հենց
գետնի յերեսից, ստեղծած թափահարելով իրենց բութ
թերեր:

Ով թռել ե պլաներով կամ սավառնակով, հավա-
նորեն նույն բանն ե զգացել, ինչ վիճակի մեջ եյին ջա-
հել արծիվները. ինչպես հայտնի լի, անտառի վրայով թռու-
չող սավառնակը շատ հաճախ ցած ե գդահավիժում», վո-
րովիետև այնտեղ, ուր չկան վերսլացիկ հոսանքներ, մե-
քենան սովորաբար «սեղմվում ե» գետնին:



ԹԱՓԱՌՈՒ ԲՈՒՅՆԸ

Վերջապես մեր նավը կտրվեց ափից: Յես կանգնած եյի նավի լեռների մասում, պարանասարքով շրջապատված: Այդտեղ կալին հաստ թռկեր, խարսխային շղթաներ, կուածողեր և ելի ինչ վոր ուրիշ բաներ, վորոնց նշանակությունը միայն ծովայիններին ե հայտնի: Ինձ, վորպես քնազետի, դրանք չելին հետաքրքրում, և սակայն յես ուշադրությամբ դիտեցի դրանք: այստեղ, ուր վոր, այդ պարանասարքի մեջ մի զույգ փոքրիկ թոշուններ թագնվեցին: Սակայն վորտեղ:

Քայլ առ քայլ յես հետազոտեցի նավախելը, մինչև վոր գտա այս, ինչ փնտում եյի: Նավախելի վրա դարսությած հաստ թռկի ողակներում իր համար ըռւյն եր հյուսել գեղեցիկ գեղնածաղրիկը: Հինգ փոքրիկ և դեռևս բոլորովին մերկ ձագեր միմյանց ընդհատելով ճգճիռ ելին, կեր պահանջելով: Մնողները հոգս եյին տանումնոր սերնդի շուրջը, չնայած մարդկանց «վտանգավոր» մոտիկությանը:

Դեպքը տեղի ունեցավ Արալյան ծովում, չորացրած ձկնով բարձած նավի վրա: Ոեյսի դուրս գալուց առաջ


շողենավը շատ որեր կանգնած եր՝ մասցել ափի մոտ: Այդ դադարի ժամանակ: թոշուններն այնպես եյին սովորել նավի անշարժությանը, վոր հանգիստ կերպով նրա վրա հյուսել ելին իրենց բույնը: Իսկ յերբ մենք ճանապարհ ընկանք, ձագերը դեռևս չեյին փետրավորվել: Ի՞նչ եր մուռմ ծնողներին, յեթե վոչ հետեւել նավին, վորը քանի դնում, այնքան ափից հեռու յեր տանում բույնը:

Իրենց շատակեր սերնդին կերակրելու համար դեղնածաղրիկները ճանձ եյին վորսում տախտակամածի վրա: Իսկ յեթե քամին քշում-տանում եր ճանձերին տախտակամածի վրալից, թոշունները դեպի բաց ծով եյին թըռչում, այստեղ միջատներ վորսում և ապա հասնում եյին: հեռու լողացող նավին:

Մի ինչ վոր լուռ ու փոխադարձ համաձայնությամբ նավի վրա գտնվող մարդկել ջանադիր կերպով պահպանում ելին իրենց թևավոր ուղեկիցներին: Նրանք մեզանից չարքան չտեսան:

... Հաղիվ ինչ հեռվում յերեաց ցամաքը, յերբ լերկուդեղնածաղրիկներն ել թռան դեպի ափ: Բավական ժամանակ անց նրանք յետ դարձան, իրենց կտուցներում բռնած պահելով միջատներից կազմված կերապաշարը:

Դեղնածաղրիկների վարմունքը կարծես թե հակասում ե փորձերին, վորոնք խոսում են այն մասին, վոր թոշունները սովորաբար չեն գտնում իրենց բույնը, յեթե մարդները այն տեղափոխում ե թեկուղ մի քանի մետր: Սակայն տվյալ դեպքում նամակ իրենից ներկայացնում եր իրը և մի կղզի կամ այլ բնավայր, վորի վրա ինքը բույնը վոչ մի տեղ չեր տեղափոխվում, տախտակամածի վրա գտնված ալ իրերի նկատմամբ միշտ միշտ դիմում գրավելով:



«ՎՈՐԴԵԳԻ ՐՆԵՐ»

Արդյոք կարելի յե յերգեցիկ թռչուններին բնակեցնել Մոսկվայի զբոսապուրակներում։ Վորքան հաճելի կլիներ քաղաքի բնակիչների համար լսել դեղնածաղրիկ կամ ուլաւակա-ի յերդը։ Յեզ ինչպիսի զարմանալի ոգնականներ կունենային մեր պարտիզանները։ միջատակեր թռչունները վորքան այլևայլ տեսակի թրթուրներ, կեղեակեր բղեգներ, վորդաճճներ և կանաչ տնկումների ուրիշ ֆլաստուններ կվոչնչացնեյին։

Սյա ճեռանկարը /շատ զրավիչ եւ Սակայն ամառը, հյուսիս վերադառնալիս, հազարավոր յերգեցիկ թռչուններ անցնում են մեր մայրաքաղաքի վրայով և սոսկ շատ քչեռը նրանցից ըներ են շինում շրջակայքի վորեւ տեղում։ Մնացածները ձգտում են այնտեղ, ուր արդեն ձագեր են հանել կամ ուր իրենք են դուրս յեկել ձվերից։ Նշանակում ե, խնդիրը նրանումն ե, վոր պետք ե թռչուններ ըստանալ (ձվերից դուրս գան) քաղաքի պայմաններում։ Այն ժամանակ միայն զբոսապուրակների կանաչը սովորական միջավայր կլինի նրանց համար և թեավոր յերգիչները չեն ձգտի քաղաքից դեպի խաղաղ անտառ թռչելու։

Այսպիսի մի փորձ արվեց։ Պատանի բնագետները հավաքեցին սերինսոս-սարեկների, յերաշտահավերի և այլ յերգեցիկ թռչունների մի քանի ձվեր և ապա դրին այն սարեկաբները ուր մնացուկներն եյին բնակություն հաստատելու Նախապես արդ բներից հանգած եյին ձնձուկի ձվերը։

Մենք անհամբերությամբ սպասում եինք փորձի արդյունքներին և շատ ուրախացանք, յերբ մեր սարեկաբներից մի քանիսի մեջ վերջապես յերեացին միջատակեր թռչունների ձագերը։

Վորդեգիները համառ կերպով կեր ելին պահանջում, սակայն կտրականապես հրաժարվում ելին հատիկներից, վոր հոգատար խորթ-մայրերը խցկում եյին նրանց բերանը. ճնճղուկների ուտելիքը յերգեցիկ թռչունների ձագերին դուր չեկավ. այդ ճաշացուցակի մեջ միայն միջատներ կային։ Սոված մնալով, արդ ձագերը ծվծվոց եյին բարձրացնում, իսկ մայրձնանցուկներն անխօնջ կերպով հարսար «կեր» եյին փնտուում։ Աստիճանաբար նրանցից մի քանիսը սովորեցին վորդեգիրների համար զանազան թրթուրներ, ճանճեր և բգեզներ ճարեր, իսկ հետո իրենք ևս մասամբ զրանցով եյին կերակըրմում։ Սյապիսով վորոշ ձագերի հաջողվեց վրկել սատկելուց։

Սարեկաբներում մեծացած թևավոր գաղթականների վոտներին մենք հագցրինք ալյումինից պատրաստած ամենաբարակ ողակներ — փոքրիկ ապարանջաններ. ահա զրանցով և մենք վորոշեցինք, վոր հաջորդ տարին — Աֆրիկայից վերադառնալուց հետո — նույն այդ սարեկաբներում հաստատվել ելին ճանճորս-խարտաճամուկի ձագերը, վորոնք նախորդ տարում դուրս եյին յեկել ձվերից։ Նրանք դարձան բնիկ մոսկվացիներ և քաղաքից հեռանում եյին միայն ձմեռ ժամանակ։

Ճնճղուկ-թխսերի ողնությամբ մենք շարունակում ենք միանգամայն տարբեր յերգեցիկ թռչուններ ստանալ։ Միայն թե հիմա ճնճղուկները ստիպված չեն դես ու

դեն ընկնել իրենց վորդեղիքիների համար պլատշաճ կեր փնտուելու. սարեկաքներից վոչ հեռու մենք դնում ենք փոքրիկ կերատաշտակներ, մեջը մրջնաձվեր, ճանճերի թրթուրներ և նման կեր, վոր այնքան անհրաժեշտ է միջատակեր թռչունների քնքույշ ձագերին:

Վոչ մի արտասովորություն չկա նրանում, վոր ճանճուկները այսպես ասած վորդեղրում են այլ թռչունների ձագերին: Թևավորների մեջ նման դեպքերը քանից նկատվիլ են:

Մոսկվայի դպրոցական Յու. Ավիոնտովսկին վողոցում գտնում ե մի փոքրիկ ճնճուկաձագ: Տղան տուն ե բերում նրան և ուզում ե կերակրել, սակայն ձագը հրաժարվում ե ամեն տեսակ ուտելիքից: Այն ժամանակ, իր մոր խորհրդով, պատանի բնագետը ճնճուկին դնում ե կենար թռչնի վանդակը: Կենարը լսում ե իր անակնկալ հարևանի վողբալի ծփծոցը, ցած ե թռչում թառից, մի լավ դիտում ճնճուկի ձագը և տեղն ու տեղն սկսում ե նրան կերակրել: Հոգատար խնամակալի հսկողությումը ճնճուկն ամրապնդվում ե և մեծանում:

Թևերը բաց ու խուփ անող անոգնական թռչնի ձագը, վոր մեծ թռչունի առջև կեր և հայցում բերանը բացած, մայրական բնագդներ և առաջ բերում: Յես գիտեմ գեպը, յերք ճնճուկին կերակրել և մինչև իսկ կաչաղակը, մինչդեռ հայտնի յե, վոր կաչաղակները հաճույքով սնվում են մանր թռչուններով:

Հավանորեն, յուրաքանչյուր մարդ տեսել ե, թե ինչպես թևավորները կերակրում են իրենց ձագերին. թըռչունների մեծամասնությունը իրենց կտուցներով են բերում կերը և խցկում ձագերի բերանը: Թվում ե, թե շատ հեշտ բան է: Հապա մի փորձեցեք փոքրիկ ունելիքով վերցնել կանեփի հատիկը կամ դիցուք սովորական ճանճը և այս ուտելիքը հրամցրեք թռչնի ձագին: Քաղցը նրան կստիպի ընդունել





հյուրասիրությունը, սակայն դա նույնքան ոգտակար չի մինի, վորքան ծնողների կտուցներից ստացածը: Յես առվիթները եմ ունեցել դիտել այն ձագերին, վորոնք կերակրվել են առանց մեծ թռչունների մասնակցության, և միշտ նրանք ավելի թույլ եյին լինում, աճումով զգալապես հետամնաց այն ձագերից, վորոնց կերակրել են ծնողները: «Անապաստաններին» այնչան ել չեք ոգնել մինչև իսկ լիարժեք կերերի առատությունը:

Այս խնդրի ուշադիր ուսումնասիրությունը մեղ հնարավորություն տվից հաստատել, վոր, որինակ, գեղանիք կոռւնիները յուրաքանչյուր վորուծ ճանձի հետ իրենց ձափի կտուցի մեջ լցնում են բազականաշափ թուք, դուցե և մարսողական հյութերը ձիշտ նույն կերտ են վարպում և այլ շատ թռչուններ:

Ի՞նչ ծագում ունի ձագերի կերին ծնողների այդ հավելք վածը և զա ի՞նչ նշանակություն ունի մարսողական պրոցեսներում: Պետք ե յենթաղրել վոր այդպիսի հավելումը այնքան և անհրաժեշտ թռչունների ձագերին, վորքան անհրաժեշտ և լինում դայլի ստամոքսալին հյութը իր ձագերի համար: Իսկ այդ հյութը նրանք միշտ ստանում են կերի հետ, վորովներու արու դայլը իր սերնդին կերակրում և սեփական փսխոցով:

Ստամոքսային հյութը կամ թուքը անհրաժեշտ թըռչնական հավելում և արդյոք և իրոք ի՞նչպիսին և դրանց գերը ձագերին մնելու գործում: Այս հարցի պատասխանը կստացվի այդ նյութերը լաբորատորիաներում հետագա ուսումնասիրությունից հետո:



ՄԻԶԱՏՆԵՐԻ ՄԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մայիսի մեկի արևոտ առավոտ յես մրուսների հետ գուրս յեկա փողոց, վոր վաղուց արդեն բռնված եր տոնական գեմոնստրացիայի հզոր հոսանքով: Մարդկային գետը գուրս եր յեկել ավերից, վողողելով մայթերը, բակերն ու տների մուտքերը:

Մեր շարքասյունը կանգ առավե Բարձրում մռնչում երին սավառնակների մոտորները: Հոյակալ պողպատե թռչունները սրբնթաց ամպերի պես անցնում ելին մեր գիրեվից, իսկ գետնի յերեսով արագ սահում ելին նրանց առվերները:

Ցերկինք նայելով յես տեստ մի սկ կետ: Ահազին բարձրությունից զա ուղիղ գեղի ինձ եր մոտենում: Պարզվեց, վոր զա բոռ և, իշամեղոււ նա առանց վրինդելու իջավ իմ պիջակի մերուկին հազցրած հովտաշուշանին:

Ինձ մոտ կանգնել ելին մի խումք պատանի բնազետներ: Նրանց աղշեցրեց այն, վոր իշամեղուն ահազին բարձրությունից «զզացել ե» հովտաշուշանի փոքրիկ վոստիկի բուրա:

մունքը — մի ծաղկի, վոր ալսպես աննկատելի յեր ցուցարաբների շարքասյուների պայծառ արդարանքի մեջ և իր հոտով այնպես աննշան՝ արևից տաքացած ասֆալտից բարձրացող հագարակոր այլ բուրմունքների մեջ։ Իմ գլխին հարցերի տարափ տեղաց միջատների զգացողության մասին։ Իմ պատանի բարեկամներին պատասխանելիս յես ակածա հիշեցի և այլ դեպքեր։

Դեռևս ուսանողական տարիներին յես հարսնյակից դուրս բերի հազվագեղ հանդիպող գիշերային մի թիթեռնիկ, վորը լսադիմական անուն ունի՝ Orgyia autogaea, այս տեսակի թիթեռնիկների արուները ճերմակ բծերով շեկապուն թիեր ունեն, լավ զարդացած, և թափ, սանրածե բեխիկներ. իսկ եգի բեխիկները լինում են բարակ, թելա տեսակ. ինքը թիթեռնիկը չունի թներ։ Հարսնյակից նրան հանելով, յես ծայրահեղ զգուշությամբ ու խնամքով իմ գերունուն պահում եյի մառայից կարած փոքրիկ տոպ րակում. այդպիսի թիթեռնիկները հազվագեղ են պատահում և այն ել՝ միայն անտառում։

Յերեկոյան յես այդ տոպը կախեցի տերրասից՝ վորքան մեծ եր իմ զարմանքը, յերբ դաշտի միջով դեպի նա ուղղվեցին մի ամբողջ շարան Orgyia antiqua արուներ նրանք թուչում եյին անտառից, իմ բնակարանից մեկ ու կես կիլոմետր հեռու տարածությունից։ Թիթեռնիկները մոտենում եյին ուղիղ գծով՝ քամու դեմ՝ և բախվում եյին մառային, ջանալով մանել եգի մոտ։ Ում չի ապեցնի այդպիսի «զգացողությունը», վորը նրանց հնարավորություն տվեց իմ գերունու ներկալությունը հայտնաբերել մեկ ու կես կիլոմետր տարածության վրա։

Մենք բոլորս սովոր ենք տեսնել ճանձերին, վորոնք հոծ խմբերով պատվում են թափթփուկների վրա, սակայն քիչ կպատահի, վոր մեկը միտք այն մասին, թե այդ ճանձերը ինչպես են ավար վնասում իրենց համար։

Փոքրձեցեք պատուհանից դուրս գցել մի կտոր վչացած միս. — միծ, վոսկեգույն ճանձերի յերամը խսկույն ևեթ կարծակվի վրա վրա, կարծես հենց դրան եր սպասում։ Այնինչ շատ ճանձեր գալիս են միքանի թաղամաս տարածությունից։


Ավելի քան քսան կիլոմետր տարածությունից հյուսաային յեղջերուներին գտնում են նրանց մշտական տան ջողները — մորթու և քթի վրա նստաղ բոռերը։ Մեղ առիթ է յեղել տեսնելու, թե ինչպես հեռվից թուան յեկան այսպես կոչված շիրիմալին բգեղները դեպի մի թուչուն, վոր սպանվել եր դրանից տաս-տասնհինգ բոպե առաջ։ Թվում էր, թե թուչնի դիակի քայլայումը (նեխումը) դեռ ևս չե ակսված, այնինչ «մսակեր ճանձերը» և շիրիմային բգեղները արդեն սլանում եյին անտառի հեռավոր յեղջեց դեպի թուչնի դիակը։ Յեթե անապատով անցնում ե քարավանը և ավազի վրա մնում ե ուղաբերի աղբը, իսկույն ևեթ, չգիտես վորտեղից, մոտ են թուչում ահագին բգեղները — «սրբազան կոյադնդիոնները»։

Միջատների այս զարմանալի ունակությունը բացատըրվում է նրանց ներվային վանդակների արտակարդ գյուրազգացությամբ, վորոնք տեղավորված են նրանց բեխիկների մակերևույթի վրա։ Թիթեռների, բգեղների և այլ միջատների բեխիկները լինում են սանրածե։ Այդ պրդանի այդպիսի կազմությունը շատ և շատ ուժեղացնում է նրա զգացող մակերևույթը։ Քամին հոտը հացնում է միջատներին յերբեմն տանյակ կիլոմետրերից։ Յեկ լեթե վոքը ինչ ուշազրությամբ դիտելու լինենք, ապա կարելի լե տեսնել, վոր նրանք մի նեղ ժապավեն կազմած թուչում են դեմից փչող զեփյուռի հանդեպ, եղ կամ կեր վնասուելիս՝ հաղթահարելով ահագին տարածություններ։

Փորձերը ցույց են տվել, վոր այն միջատները, վորոնց բեխիկները ծածկված եյին պարագինի բարակ շեր-

տով, միանգումայն կորցնում եյին իրենց ընդունակությունը՝ գտնել ամենառավեղ բուրմունք սւնեցող ավարը:

1936 թվի ամառը կենդանաբանական այգու պատահնի բնագետ Գորշկովը մի քիչ աղք և զնում իրենց բակում և նրա վրայից վորսում լերեսուն կապտա-կանաչավուն ձանձեր: Դրանց վրա ալյուր շաղ տալավ նա հինգ-հինգ հատ ձանձեր բաց և թողնում տարբեր տարածություններից: Նրանք աղքը գտնում եյին քամու դեմ թռչելով մինչեւսկ յոթհարյուր մեռը տարածությունից: Գորշկովը հեշտութեամբ ճանաչում եր նրանց սպիտակ փոշու շնորհիվ, վոր կուել եր ճանձերի մարմիններին և մաղիկերին:



ԼՈՇԱԿԱԶԴԻԿ

Մի անգամ կենդանաբանական այգու պատահնի բնագետների հետ մենք եքսկուրսիա կատարեցինք դեպի մերձանուկոյան անտառները: Այնտեղ, շատ հին կեչու փչակում, իմ ուղեկիցները լերեան հանեցին թռչող մկների, ալսպես կոչված սովորական լոշտակաչղիկների մի մեծ գաղութ: Տագնապից մզգած, նրանք սկսեցին զուրս թռչել փշակի միջնց, արագ թափնկելով մացառուտներում: Այսուամենայնիվ լոշտակաչղիկների մի բասին բռնեցինք և դրինք պարկի մեջ: Այդ թռչող մկներից շատերի մարմիններից, մորթու մազերին կպած, կախվել եյին նրանց ձագերը. եպերից մի քանիսը իրենց վրա միանգումից կրում եյին մինչև իսկ յերկու ձագ — դեռևս բոլորավին կույր ու լուսւուր: Զագերը ձգտում եյին դեպի իրենց մոր ձծակները, վորսնք դանգում եյին թևատակերում, և ագահաբար կը պատահնի բնագետները յերկուական ձագ եյին կպցըք հա-


Յերեկոյան քաղաք վերաբառնալով, լոշտակչղիկներին բաց թողինք լճակներից վոչ հեռու, կենդանաբանական այգու տերիտորիայի վրա: Եպերը, վորսնց մարմիններին մեր պատահնի բնագետները յերկուական ձագ եյին կպցըք հա-

զիւլ ինչ ողը թոշելուց հետո կախվեցին ծառերի բներից կամ ճլուղերից, իսկ նրանք, վոր մի-մի ձագ ունեյին իրենց հետ, իսկույն ևեթ սկսեցին պտույտներ գործել ջրի յերեսին, միջատներ վրասալով:

Անցան շատ տարիներ ։ Լոշամկաչղիկները բնակություն հաստատեցին կենդանաբանական այգում և հիմա ամեն յերեկո թոշում են այնտեղ գարնանային առաջին որերից մինչև խոր աշուն։ Այդ անվերջ թոփչքների ժամանակ թոշող մկները վոչնչացնում են մեծ քանակությամբ վնասակար միջատներ։

Ինչպես յեղավ, հունիսին այգում մենք նկատեցինք մի եղ լոշտակաչղիկ, վորը կրծքի վրա բավական մեծ ձագ առած ծանր թոշում եր ողում։ Յերեկոյան այդ ձագին մենք գտանք ծառուղու վրա։ Յերբ մկնիկին ձեռքով բըռնեցինք, նա սկսեց սուր ձայնով ծվծվալ կամ, ավելի ճիշտ, ցտցտացնել։ Այդ ձայնի վրա մոտ թուավ մալրը և իջավ գետնին։ Եզր իսկույն ևեթ մոտ սողաց ձագին, իսկ ուս իր թևամատի փոքրիկ ճանկերով կառչեց մոր մաշկին և բերանն առավ ծծակը։ Դրանից հետո մայրը մազլցեց ծառի բնի վրա, այստեղից սկսելով իր թոփչքը։

Ի՞նչ ե ասում մեր փորձը։ Այս, վոր թոշող մկներին կարելի յե բնակեցնել քաղաքներում։ Այստեղ, ուր չկան փչակափոր ծառեր, այդ կենդանիների համար պետք ե կառուցել արհեստական «հուրանոցներ»։ «Թոչնի որը» պատահի բնագետները պետք ե հոգ տանեն այդպիսի «հուրանոցների» մասին ճիշտ այնպես, ինչպես ամեն տորի հոգս են քաշում սարեկարներ շինելու, քանի վոր թոշող մկներից ստացվող ողուտը ակներե ե. գիշեր ժամանակ նրանք փոխարինում են ցերեկվա թոշուններին և ել ավելի յեռնդուն կերպով վոչնչացնում են քաղմամիվ վնասատու միջատներ, այդ թվում և մալյարիային մոծակներ։



ԱՍԿԱՆԻԱ-ՆՈՎԱՅՈՒՄ

(Ճամբորդական դիտողություններ)

Ուկրայնական անծալրածիր տափաստանների մեջ ընկած են Ասկանիա-Նովայի արգելահողամասերը։ Խիտ աճել ե հսկայական պուրակը։ Առատ ջրոռոգված հողը իր նմանը չունի արգավանդության կողմից։ Ծառերը, թփերը և կանաչը այստեղ՝ աճում են փարթած և անորինակ արագ։

Ասկանիա-Նովան դա վոչ միայն արգելանտառ ե, այլև հսկայական լաբորատորիա, սոսկ այն տարբերությամբ, վոր այնտեղ փորձերը կատարվում են վոչ սպիտակ մկների, վոչ կա ճագարների հետ, այլ այնպիսի կենդանիների հետ, ինչպիսիք են զուբը-բիզոնները, վայրի ձիերը, քարայծները, ջայլամները, վոչխարները, յեղջերուները։ Փորձի յենթակա կենդանիները այստեղ վանդակների մեջ չեն, — նրանք ազատ ման են գալիս պարկում և արգելանտառի խամ տափաստաններում։ Խիտ մացառուտով ողակված արհեստական լճակներում ապրում են բաղմատեսակ ջրային թռչուններ։ Տափաստանում մեծ քանակությամբ գետնասկզբունքներ, նապաստակներ, աղվեսներ կան։ Պարկում ազատ ման են գալիս փասիանները և ծառերի կեղեն են ուտում այս ծյամները։

Սական Ասկանիայի արգելանտառում վոչ միայն ուսումնասիրում են մեզ հայտնի կենդանիներին, —այնտեղ զարգացնում են և նոր, ավելի կատարյալ տեսակները Այսպես, անգլիական սպիտակ և տեղական տափաստանացին խոզերից ստացվել եւ դեռևս չուենիված մի նոր ակասկ ուկրանյական սպիտակ խոր, իրենց տափաստանացին ցեղակիցներից այդ հիբրիդները ժառանդել են անպահանջկոտություն և դրուրաշարժություն, ինչպես նաև լերկար, համեմատաբար փափուկ և խիտ մազեր, վարոնք շատ լավ պաշտպանում են սուր քամիներից: Միևնույն ժամանակ անգլիական ծնողները նրանց տվել են մարմնեղություն և կուլտուրական փորմեր, վորոնց հետեւանքով զգալիորեն ավելացել եւ խոզերի մասլիությունը: Հիանալի տպավորություն են թողնում կարմիր գերմանունի կոչված կովի և արաբական դերուի հիբրիդները (խառնուրդը): Անչափ գեղեցիկ են ու յերինջները —ուկրայնական գորշ կովի և գայալ կոչված վալրի յեզի խառնուրդը: Արձակ և մաքուր անամնաբակերում ուզեն չուզեն ուշազրություն ես դարձնում ուկրայնական գորշ անասուններից և յակի, գերուի և բանտանգից ստացված բարդ խառնուրդների վրա: Բաց տափաստանում արածում են հզորավիզ հոլակալ ձիեր — դրանք անգլիական նժույզների և Պրժեվալսկու վայրի ձիերի հիբրիդներն են:

Շատ զուբրո-բիզոններ, սիբիրական մարաններ, աղնվարյուն և բծավոր յեղջերուներ ասլրում են Բուրկուտի կոչված վայրում — արգելանտառի բաժանմունքում, վորնը ընկած է Մերձդնեպլյան կղզի-անտառներում: Յեղջերուների և զուբրո-բիզոնների հոտերը արդաեղ քշվել ելին Ասկանիայից: Հինգ որվա ընթացքում այդ կենդանիները յերսի անցել ելին հարյուր վերստից ավելի: Սկզբում նրանք հլունազանդ լոււմ ելին իրենց հովիվներին, բայց յերբ անծանոթ տեղեր ընկած, սկսեցին հուզվել, զլուխները շուռ տվին յետ և սլացան դեպի Ասկանիա: Միայն շնորհիվ

հովիվների բացառիկ վարպետության, հաջողվեց անզստուրեն սլացող հոտեր կանգնեցնել և վերադարձնել Բուրկուտի: Սուկ մի բծավոր յեղջերու չնապանդվեց հովվական համարին, բուրկությունը գեղեցիկ կենդանին սրարշավ սլացավ յետ և հինգ ժամվա անխոնջ վաղքից հետո կանգ առավ ասկանիական պուրակի ցանկապատի առջև:

Յեղջերուների մասին պատմելիս բուրկուտական հովիվներից մեկն ինձ հավատացնում եր, վոր Շալու կենդանիներն ամեն ինչ հասկանում են»: Նրանց հետ նա խառնում եր, ասես մարդիկ լինելին այդ յեղջերուները, իսկ սրանք խաղաղ արածում ելին, ինչպես ընտանի անասունները: Ինձ հետ գրուցելիս նա անսպասելի կերպով գոռաց եղ յեղջերուի վրա, վորը ստեղծ-ստեղծ փորձում եր հատից հեռու գնալ:

— Եյ, ուր ես քշում:

Յեղջերուն կանգ առավ, ականջները սրեց և հլունապանդ դարձավ յետ:


Այն բովելին, յերբ զուբրո-բիզոններին տափաստանից դեպի չեղոքացքած արգելանոցներն ելին քշում, հանկարծ ամբողջ հոտեր մի կողմ շրջվեց և փոշու ամպերի միջով սրացավ մեր մոտով: Ահազին կենդանիները ահավոր թափ ելին տալիս իրենց գլուխները, իսկ գետինը գողում ու գոռում եր վատների գոփյունից: Զուբրո-բիզոնների այսպիսի վարվեցողությունը հովիվները բացատրում ելին մեր ներկարությամբ: զուբրերի պատկերացումով, նոր մարդկանց հայտնվելը միշտ կապված է այդ հոկաների համար անախորժ գործողություններով — հատուկ սարքված հաստօններում կշռելու, չափելու և ալլ նման անհանգուտությամբ:

Յերբ այսպիսի վրչուա յեղները կամ բարեկազմ յեղջերուները խաղաղ արածում են հովիվների հոկողության տակ, դա գարմանալի տպավորություն և թողնում: Այս,

ասկանիական տափաստաններում մարդը հաջող կերպով լնուանեցնում եւ նրանց: Միայն ուսուռըիական բժավոր յեղջերուներին հովիժներն աշխատում են հեռու պահել յեղեգնուային մացառուտներից. մինչև իսկ լավ ձեռնասուն կենդանիներն այդ մացառուտներում վալրի քնույթ են ստանում և սկսում են իրենց զգալ կարծես Աւսուրիական յերկրամասի շամբուտներում:

Սրգելանտառի պուրակում վաղուց արդեն ապրում են սեմիրեչյան, կովկասյան և հեռավոր-արևելյան փասիանները: Նրանցից ստացված են ասկանիական կայուն հիբրիդներ, վորոնք հայտնի յեն «վորորդական» անվան տակ: Այս գեղեցիկ թոշունները շատ լավ վերցրին պուրակի կլիման: Սոսկ հատ-հատ թոշուններ սիրտ արին թողնել Ասկանիան և բնակություն հաստատեցին մի քանի տասնյակ կիլոմետր տարածության վրա— յեղեգնուատի մացաններում Աղովյան ծովափին: Յեթե մարդիկ վախեցնում են նրանց, տասնյակներով գուրս են թոշում գետնին փոված կաղական գիհ կոչված ծառի միջից կամ խոտերին տապ արած խռածապով փախչում են մոտեցող մարդուց: Հետաքրքրական ե, վոր նույն այդ վայրի վախկոտ փասիանները հավերին և բաղերին կերակրելու ժամերին թոշում գալիս են թրոշնանոց: Այնտեղ նրանք կեր են ուտում ընտանի թոշունների հետ կողք-կողքի և համարյա վոչ մի ուշագրություն չեն դարձնում մինչև իսկ մարդկանց մոտ հարևանության վրա:

Հազարավոր թոշուններ, վորոնք աշնանը հեռանում են հյուսիսից, յերկար ժամանակ հանգստանում են ասկանիական պուրակում: Նոյնիմբերի սկզբին այստեղ կրքոտ կերպով միմյանց «վողջագուրանք» են հայտնում ճարեկները: Յեղեգնիների մեջ բարակ ծղրացով գես ու գեն եյին վաստվուստում մեր ամենափոքր թոշունները— գեղնագլուխ թագվորիկները: Հյուսիսային անտառներում տարին բույր կարելի յետեսնել նրանց: Այդ եւ ահա պատճառը, վոր



Կենդանիները վազով հետ փախան:

թագվորիկներին սովոր են համարել նստակյաց թռչուն։ Յեվ փսկապես, դժվար ե պատկերացնել, թե ինչպես կարող են այդ փոքրիկ թռչունները թռչել-անցնել անսահման տափառամների զբայով։ Յեզ ահա, բանից դուրս ե գալիս, վոր թռչում են։ Նոյեմբերի տասներկուսին պուրակը լեփեցուն եր դեղնագլուխ թագվորիկներով (ցախարեկներով), իսկ մյուս որը մի հատն ել չմնաց Նունը կարելի յետեղ և աղնվասարեկների (տարինուների) մասին։ դեռևս առավատյան յետ տեսա այդ թռչունների մի մեծ յերամ, վորը անհոգ կտցահանում եր լաստենու սերմերը, սակայն կեսորին նրանք, ասես հրամանի ուժով, ողը բարձրացան և խիտ ամպով ուղղվեցին հարավ։

Ասկանիա-Նովայի արգելահողամասերի մեջ մի քանի հաղար հեկտար վայրի տափաստաններ կան։ Դեռևս յերթեք այդ տափաստանում չեն պատել արորը կամ գութանը Սիղախոտը, ոչինդրը, վայրի բանջարները, գորշ-նապաստակները, գետնասկյուռները, քյաքյուլավոր արտուտները, տափաստանային արծիվները—ալս բոլորին մարդկալին ձեռք չի դիպել։ միայն մի քանի կետերում շինված են «առնատորիաներ», ուր բժշկվում են, ինչպես կուրորտներում, հիվանդացած աֆրիկական քարածերը-կանները, Պրժեվալսկու վայրի ձիերը և Ասկանիայի այլ սանները։

Տափաստանի առանձին տեղամասերում այնքան շատ են գետնասկյուռները, վոր թվում ե, թե այնտեղ անհնար կլիներ տեղավորել դոնե մի տասնյակ գազաններ։ Զնայած այդ նեղվածքությանը, գետնասկյուռների ըների շուրջը զարմանալի կերպով խիտ աճում են վայրի բույսերը։ Տեղական հովիվները դա նրանով են բացարում, վոր կանաչն ավելի ուժեղ և թուփ բռնում, յեթե գազանները հաճախ են կրծուում այն։

Տափաստանում ել ավելի արագ շատացել եյին նապաստակները։ Խամ հողի վրայով ավտոմեքենան քշելիս մեր առջևից վագում եյին տասնյակ գորշ-նապաստակները

Հարթ տեղում մեքենան այնպիսի արտգությամբ եր ընթանում, վորով վազում եյին և նապաստակները։ Դա նշոնակում ե, վոր նապաստակները մի ժամում կտրում ելին մոտավորապես քառասուն կամ քառասունինդ կիլոմետր։ Դա նապաստակների սովորական արագությունն ե. սակայն շոփերը պնդում եր, վոր պատճում են նապաստակները, վորոնց վագրի արագությունը հասնում ե յոթանասուն կիլոմետրի։

Տափաստաններում շատ են նաև աղվեսները, վորոնք առավելապես մանր կրծողներ են վորում, վոր, ինարկե, անհամեմատ հեշտ ե, քան արագավազնապաստակներ բռնելը։ Այստեղ աղվեսներին այնքան են սովորել գորշ նապաստակները, վոր միանգաման գագարել են նրանցից յերկյուղ անելուց։

Յես տեսա, թե ինչպես եյին կերակրվում յերկու գորշ նապաստակներ, իսկ նրանցից քառասուն քայլի վրա-վոչ ավել—ծույլ-ծույլ քարշ եր դալիս տղիսը։ Նապաստակները շատ լավ տեսնում եյին նրան, այնքան, վոր փոքր ինչ բարձրացան յետի վոտների վրա, բայց փախչելու շեյին պատրաստվում։

Արգելանտառի տափաստանից նապաստակները քաշվում են շրջակա հողերը։ Վորոնըների տեղական կողեկտիվին թույլատրված եր տարեկան հրացանովարկ անել մոտ հինգ հազար գորշ նապաստակներ, վորոնք հեռացել են Ասկանիա-Նովայի մոտ ընկած արոտառեղիները։

Յես առիթ ունեցա մասնակցելու այդ արտասովոր վորորդությանը։ Արևածաղին մենք յերկու կիլոմետր հեռացանք արգելանտառի բակերից և շղթա կազմած ձգվեցինք անաբունների կոխուած խամ հողի վրա։ Տարորինակ եր տեսնեինչպես առանց վորոնալածների ոգնության տափաստանի վրա ամեն կողմից նապաստակներ են վազում։ Վորորդիներն սկսեցին կրակել և հրացանալին զարկերի հաճախակիրությունը ավելի շուտ հիշեցնում եր հարձակման յետ մղումը։ Նախորդ պայմանավորվել եյինք, վոր յուրաքանչյուր վորորդ

իրավունք ունի սպանել վոչ ավելի, քան յերեք դորշնապատճեկ. զրա համար ել մեր փորսորդությունը վերջացավ շատ շուտ: Տագնապահար նապաստակները ամբողջ յերամակներով փախչում եյին մեր առջերց: Հաճախ մեր տեսադաշտում կարելի յեր հաշվել մինչև հարյուր և ավելի նապաստակ:

...Ասկանիայից հեռացա սավառնակով: Ուժեղ քամի յեր փչում և յերբ մենք սավառնակ եյինք նստում, նրա ուժեղ թափից սավառնակը ձոճվում եր: Սավառնորդը ավելացրեց գաղը: Քանի զնաց՝ ուժգնեց պոռպելլերը: Ասես ավտոմոբիլ նստած, մենք սլացանք բաց տափաստանի խորքը, այստեղ դարձանք քամու դեմ և միայն այն ժամանակ կտրվեցինք գետնից:

Սավառնակը շատ ցած եր թոշում: Յես տեսա, թե ինչպես ոշինդրի մացառուսներից գանազան կողմեր նևավեցին նապաստակները, ինչպես վախից ահարեկ գետնասկյուռները դես ու դեն եյին ընկել առանց կարողանալու իրենց բները զտնել: Աշուն եր, յերբ գետնասկյուռները սովորաբար գտնվում են քնի մեջ: Ակներև եր, վոր այդ գաղանիկները զարթնել եյին հանկարծահաս սառնամանիքից, յերբ ցուրտը թափանցել եր վոչ խորը մտած կենդանիներին բները:

Վորքանեւ տարորինակ լինի առաջին հայացքից, սակայն դա իրոք արդպես է: Զմեռնաքուն մտած գաղանները, վորոնց մարմնի ջերմությունը իջել եր համարյա մինչ զերո աստիճան, ողի համեմատաբար ուժգին ցըտելու դեպքում չեն սառչում, այլ ընդհակառակը, անքան են տաքանում, վոր քնած վիճակը թողնում է նրանց: Դա առաջ են գալիս ներքին ջերմության հետևանքով—արյան և ճարպերի ռքսիդացման պլոցեսում:


Սավառնակի կարինկայի պատուհանից շատ լավ յերեւում եր, թե ինչպես սերինոս-սարեկների, արտուաների և այլ չվեկ թոշունների մեծամեծ յերամները մաքառում

եյին համարյա գետնի յերեսով հետպհետե ուժեղացող քամու դեմ: Սավառնակից շատ ցած ողի մեջ պահվում եյին և փրչունանի շամբածուռակները, փորոնք հեռավոր տունդրաներից թռել-յեկել եյին այդ տափաստանները կը ծողներ վորսալու:

Առանձին հետաքրքրությամբ մենք նայում եյինք պատռհանից, յերբ ցածով սլացանք Ազովյան ծովի լիմանների վրայով: հաղաբավոր չվող ջրային թռչուններ հանդիպում եյին ափերին: Ուշադիր նայելու գեղքում կազմակերպելի յեր տեսնել և կարապներ, վորոնք ջրային բուսակարելի յեր տեսները մոտերքներում եյին պահվում: Վերեկից թափանցիկ ջրի միջով հեշտ եր վորոշել մինչև իսկ հատակի համեմատաբար մանր-մունը բաները և ձկների բավական մեծ վտաները աշը կուրացնելու չափ փակուն արծաթյա թեփուկներով:

Ասկանիական տափաստանի սահմանի վրա մեր ներքեում մի աղվես այս ու այն կողմ նետվեց: հետո նա գլուխը վերև բարձրացը և յերկար նայեց սավառնակի յետեվից: Վերը նվիրանտառի վերջին բնակիչն եր, վորին ինձ հաջողվեց տեսնել:

Սավառնակը բարձրություն վերցրեց: Ալևս դժվար եր դիտել, թե ինչ կա յերկը վրա:



ԹԱՍԱՐԱՆ ՑԵՎ ՍՍՄՈՒՅՅԻ ՔՈՒՐՔ ՀԱԳԱՄ ՊԱՐՈՒԾ

Պայծառ փայլում եր արևը: Բաց պատուհանի առջե ծաղկել եր լորենին: Ճյուղի ծայրին նստած եր մի թոչնակ և հետաքրքրությամբ աչք եր գցում սենյակ, ուր զրուցում եյին մի քանի ճերմակամորուս մարդիկ:

Սենյակը պատկանում եր Մոսկվայի կենդանաբանական այգու գիտական սեկտորին, իսկ ճերմակամորուս մարդիկ գիտնականներ եյին, զանազան խնստիտուտների ներկայացուցիչներ: Նխտի մասնակիցները խստամ եյին այն մասին, վոր պետք ե սերտորեն կապվել կենդանաբանական այգու հետ — կենդանի բնության արդ լարորատորիայի հետ, ուր վերջին տարիները գիտական մեծ աշխատանք ե ծավալվել:

Անսպասելի կերպով դուռը բացվեց և սենյակ խցկվեց մի լղարիկաղջիկ:

— Սպասիր, — ասացի յես փոքրիկ հուրին, — եսուեզմենք լուրջ գործով ենք զբաղված:
— Դե ի՞նչ անենք վոր, — զարմացավ նա: — Զե՛ վոր իս ել առանց զործի չեմ յեկել:
— Իսկ քեզ ի՞նչ ե պատահել վոր:
Այցելուհու աչքերը փայլառակեցին դալրութով:
— Զե, հալա դուք մտածեցեք. «Նրանք» ինձ չեն ընդունում իբրև պատահի բնագետ: «Նրանք» ասում են, վոր յես դեռ փոքր եմ...
— Իսկապես վոր, դու այնքան ել մեծ չես, — փորձեցի լես առարկել, — արի տես, վոր տասներկու տարեկան ել չկամ:
Զանաչված բնագետուհու վրդովմունքը գնալով ավելանում եր:

— Վոչ... Բայց կլինեմ:

Փորձեցեք վիճել այս փաստարկության դեմ: Անձնապես յես սկսեցի նահանջել և հարցը թամարային (այդպես եր աղջկա անունը), թե ինչ կենդանիներ են նրան հետաքրքրում: Նա ասաց. «Կաթնասունները»:

Իսկ այն հարցին, թե նա ում ե համարում կաթնասուն, թամարան մի շնչում վրա տվեց.

— Կաթնասունները — դա վողնաշարավոր կենդանիների մի դասն ե: Նրանք բոլորն ել ունեն կրծքի գեղձեր և կաթով են կերակրում իրենց ձագերին: Մորթը մազածածկ ե, վորը՝ շատ, վորը՝ քիչ: Սիրտը բաժանված ե չորս մասի: Կաթնասունների ներսում կա մի անջրպետ, վորը կոչվում ե ստոծանի: Նրանց մարմնի ջերմությունը մշտական ե: Առրտան թեքված ե դեպի ձախ: Սաստիկ զարգացած են զգայարանները...

Խորհրդակցության ճերմակամորուս մասնակիցներից մեկը գարմանքով նայեց իմ խոսակցին, ապա հանեց բլոկնոտը և ինչ վոր բան գրեց: Զար լեզուներն ասում են,

վոր այստեղ նա դրել ե կաթնասունների նշաններից մեկը, վորի մասին, ցրված լինելով, նա մոռանում եր դասախոսության ժամանակ պատմել ուսամողներին:

Թամարայի վիճակը վորոշված եր: Նա միանգամայն արժանի յեր մեր պատանի բնագետների խմբակի գործոն անդամը դառնալու: Կես տարի հետո Թամարայի հետ մենք հանդիպեցինք կենդանաբանական այգու արգելանոցներից մեկի մոտ: Նա կանգնած եր մի փոքրիկ տղայի առջե, վորը ամոթահար անձարակ կերպով իր կարմիր փողկապն եր տրորում ձեռքերով: Թամարան նախատում եր նրան:

— Յես քեզ յերեք անգամ ասացի, վոր «չի կարելի», իսկ դու ելի վոստը խոթում ես վանդակը: Մեծերն անգամ իրենց թույլ չեն տալիս ալսպիսի խուլիգանություն: Անունդ ել պիտներ ե:

Յես ակամա հիշեցի այս միջադեպը, յերբ աչքի եյի անցկացնում «Մոսկվայի համալսարանին կից՝ բնագիտություն, մարդաբանություն և ազգագրություն սիրողների կալսերական ընկերության տեղեկանքները»: Հրաշալի կավճային թղթի վրա 1879 թվին հրատարակված այդ աշխատությունների XXV հատորի չորրորդ պրակի 240—249 եջերում տպված ե Մոսկվայի կենդանաբանական այգու ոբագիրը: Այդ որագիրը կազմել ե մի գիտական աշխատող, սակայն ինչ հրեշտակոր տղիտություն ե բուրում նրա ամեն մի տողից և ցարական Ռուսաստանի արտօնյալ դասի բարքերի վորպիսի գունագեղ պատկերներ են դրված: Որագրի ամեն մի գրանցման մեջ:

Կենդանիների կլիմայականացման ընկերության 1864 թվին հիմնած Մոսկվայի կենդանաբանական այգին մինչև հեղափոխությունը վողորմելի վիճակ ուներ: Գիտական աշխատանքի համար դրամական միջոցներ չկային և այդին սոսկ գիշերային աղմկոտ զբոսավայր եր դարձել — գինով և հրավառությամբ:

Ինկ թե ով եր այցելել այզի և ինչ նպատակով, ով ընթերցողը կաեմնի որազրություններից, վոր մենք տալիս ենք անփոփոխ:

«Սկսեմբեր 17: Յերեք հարբած պարոններ ձեռնափայտով ուժգին հրմանաւում եյին գայլերին... Յերեք հարբածներ ոնդյեղջուրին ջղանացնում եյին:

18. Մի պարոն, ասելով վոր ինքը եքսպոնենտ ե, ու զում եր առանց տոմսի մանել այգի, սակայն չկարողանալով եքսպոնենտային տոմս ներկայացներ հարկադրվեց վճարել 20 կոպ., վորի համար սաստիկ հայհոյում եր, դանձապահի վարմունքը թալան անվանելով... Փիզը խելոքացավ...

Մի պարոն, վորը պահանջում եր ալգուց իրեն հանձնել մի այլ անձի նվիրած աղվեսը և մերժում եր ստացել սպառնաց բողոքել պ. հաշտարար դատավորին:

21. Փիզը հիվանդացավ, բայց վորոշել, թե ինչումն ե նրա հիվանդությունը — չկա հնարավորություն...

22. Փիզը չի ուտում և իրեն մոտ չի թողնում ծառացողին, ուստի և զիրեկտորը հարկադրված եր ինքը մաքրենրա տակ կուտակված աղբը:

26. Գիշերը միասմբականիներից մեկը հազար, սակայն մթության պատճառով չկարողացա վորոշել, թե վորն ե:

Հոկտեմբեր 8: Այցելուները կենդանիներին ջղայնացնում ելին և ոնդյեղջուրի բերանը կոխեցին մի փաթեթ, բաղկացած 4 նկարներից:

13. Զմեռային շենք են փոխադրված Բուրալը և Գնուռնլ Մի սպա իր կնոջ և աղջկա հետ այցելեց ակվաշիումների բաժինը: Աղջիկը ձեռից բաց թողեց ձեռնափայտը և ջարգեց ակվարիումը: Ծառայողը ինչորեց՝ կամ սպասել, կամ գրասենյակ բարեհաճել, սակայն սպան, ծառալողին սպառնալով քիթ-մոռությին տալ, գնաց:

14. Ոնդյեղջուրին տեղափոխեցի ձմեռային շենքը բնակենուն լողացրինք և գեղ քսեցինք:

15. Սպաները և մի կաղետ ձեռնափայտերով դրդում եյին գրիֆներին և արծիվներին: Ի. Ի. Վիլկինսը խընդրեց ձեռք չտալ նրանց, ցուց տալով մակագրությունը, սակայն նրանք չեյին դադարում, հայտնելով, վոր մակագրություները չեն կարդացել... Մուգ-դարչնագույն արջը, վորին այցելուները լարեցին եզի դեմ, վորը դրանից յերեք որ առաջ դրված եր վործի մոտ, հարձակվեց նրա վրա և պատառուեց:

21. Բանվորները հրաժարվեցին աշխատել անբավարար ոռծիկի պատճառով: Նրանցից կեսն ստացավ հասանելիքը և արձակվեց զործից:

23. Վայրի արու բարը կուրացավ... Ընկել ելինք նապաստակի յետելից, վորին ինչ վոր մի մարդ բաց եր թողել վանդակից, բայց չկարողացանք բռնել:

Նոյեմբերի 6: Ալդերնեական յերինջը... [մեր այգում] համապատասխան ցուլ չլինելու պատճառով յետ ուղարկվեց Պետրովսկայա ակադեմիա:

24. Ոնդյեղջուրի աղիքը դուրս ե կալիս: Ոնդյեղջուրը դրված ե դադարին մեջ: Իշայծլամի մեջքին դեղ քսեցինք:

Դեկտեմբեր 14: Եդ առյուծը փորից գանգատվում ե, նորից լուծւղական տրվեց: Յերեկոյան եդ առյուծի վիճակը լավացավ:

27. Կոռունկների վրա պարագիտներ յերեվացին:

29. Վագրը տիսուր ե (հո չի ուզում հիվանդանալ):

30. Կապիկները դողում են, նրանց ապրած շենքը տաքություն չի պահում, չնայած վոր սովորականից յերկու անգամ ավելի վառելիք ե գնում... Մանգաբեան տենդի մեջ ե... Քարայծանոցում ցուրտ ե: Բուրալը մրսում ե: Վագրը հիվանդ ե: Հարկադրված յեղա փակել քարայծանոցը, գերանի անհուսության պատճառով:

1879 թիվ, հունվար, 1: Վագրը շատ հիվանդ ե... Ծննդեց

մի լակ և խակույն սատկեց... եդ առյուծի վիճակը նորից վատացավ:

7. Եդ առյուծի վիճակը վատ ե, վագրինը նույնպես, խառնուրդինը*) նույնպես:

13. Զիու միս տվողը հրաժարվեց այլես միս բերել—ձիերի թանկության պատճառով:

16. Կապիկը չի ուտում և տեղից վեր չի կենում: Մանգաբեյը հազում ե, Աքրաշկան հազում ե, մլուս կապիկները մրսում են; շտաբը՝ դողում:

21. Ոնդյեղջուրի աղիքը (հետուքը) դուրս ընկափ:

28. Շատ ժողովուրդ կար այգում: Անհանգստացնում ելին գագաններին. յերկու մարդ բռնելով յեղջերուի պողերից, ջանում ելին կախ ընկնել նրանցից. յերեք մարդ շատ աղմուկ հանեցին:

30. Աղվեսը հիվանդ ե ինչ վոր հիվանդությամբ, վոր անհայտ մնաց անասնաբույժի բացակալության պատճառով...

Փետրվար, 2: Տոն որ: Կենդանիներին անհանգստացնում ելին, ջղայնացնում. վայրի ցուլի պողերից, կուլաններին և զեբրին—քիթ-մոռութից, նապաստակներին ձեռներով ելին հրմշտում, առյուծին—կեր տալու ժամանակ, եշերին—ականջներից ելին քաշում, աղուամներին ձեռնափայտերով խփում:

11. Հիվանդացավ կամպբելովի կապիկը: Սամույրքուրք հագած մի պարոն յետ-յետ վազելով հարու յեր տալիս այծին ցանցացանկի այս կողմից, մինչև վոր այգուծառայողը արգելեց... Ելի մի քանի սկանդալներ յեղան, սակայն այդու զրասենյակից անկախ հանգամանքներով, անհարմար ե դրանք որագրի մեջ մտցնել:

Մարտ, 4: Հասարակությունը անհանգստացնում եր ու ջղայնացնում կենդանիներին, հատկապես անթե բաճկոն

*) Բնագրում՝ „ՊՈԹԵԸ“—հավանորեն վագրի և առյուծի հիբրիդի-խառնուրդի մասին ե խոսքը.

հագած մի պարոն, վորը լսելով թե խնդրում են չգրգռել կենդանիներին, առարկում եր, վոր ինքը 40 կոպեկ է վճարել:

8. Մի այցելու իր տիկնոջ հետ յերկար վախճանում եր աղվեսին:

Գաղանանոցում այցելուներից մեկը սկսեց ծխել. ծառայողը՝ մատնանշելով արգելված լինելը՝ խնդրեց չծխել, սակայն այդ պարոնը ի պատասխան դժվան համոզեց իր ընկերոջը ևս ծխել:

9. Յերինջը վերադարձավ ակադեմիալից:

Ապրիլ, 4. Յերևացին գայլի կատաղության պարզ նշանները... գայլը գիշեր ժամանակ կրծեց-պոկեց իր պոչը և կերավ այն:

Մայիս 25: Այցելուներից մեկը մոտենալով խոզուկին և սպասելով, մինչև վոր խոզուկը դունչը իրեն յերկարաց բեց, կոշկի ծալուով հարվածեց նրա քթին:

Հունիս 15: Մի վայրից լիկ ծնվեց... Մի քանի պարուն սպաներ այդին աչքի անցկացնելիս համարլա վոչ մի գաղան հանգիստ չթողին, ջղախացնում եյին, ան հանգըստացնում և հրժառում թրերով:

Հուլիս, 3։ Ալգի հասան 6 սամոյեղներ*):

*) Այս չորս բառերը պերճախոս կերպով պատկերում են
մանը ժողովուրդների վիճակը հյուսիսում ցարական ռեժիմի
որով, Իրավագութեակ, գլխակցարար մատնված վոչնչացման, նրանք
մինչև իսկ մարդ չելին համարվում: Կենդանաբանական այգու
հասցեյով «սամոյեցներին», այսինքն նենեցներին, ուղարկում
եյին վորպես եքսպոնատ. նրանց տեղափորում եյին չումում
(յեզզերուների սորթիներից սարքած վրանում) այդու վորեե
փոքրիկ հրապարակի վրա և նրանց ցույց տալու համար զբաժ
եյին վերցնում, ինչպես չափանված գաղանների համար Նենեց-
ները ձմեռ ժամանակ ապրում եյին նույն այդ չումում սառած
լճակի մեջտեղում և պարտավոր եյին զվարճացնել «պարոն այցե-
լուներին» յեզզերուներ լծած սահնակով զրունելով: Շատ նե-
նեցներ մրսում եյին ու հիվանդանում, վումանք մեռնում:

(Φωτινός. ήλη.)

Աղոստոս, 10: Դիմելով մի պարոնի, վորը ձեռնա-
փակուվ հրմշտում եր թութակին (ամենաթանգարժեք),
յես խնդրեցի ձեռ չտալ թոշնին և բացատրեցի, վոր
այդպես կարելի յես սպանել նրան, մինչդեռ թութակը
արժե 300 ռուբ.: Յերեկոյան անցնելիս ինձ կանգնեցրեց
այդ պարոնը, վորն ասաց.

—Զեր յերեք հարյուր ռուբլիանոց թութակը արդեն
սատկեց։

26. Դոգը լողացվեց և գեղ քսեցինք մարմին...
Այցելողներից մեկը աղիքի կտոր նետեց արջին։ Նրան
ուղղված նկատողությանը պատասխանեց, թե փոքրիկ տախ
տակների վրա գրվածե, վոր խնդրվում է ռկենդանիներին ձեռ
չտալ և չանհանդստացնել, իսկ չի արգելված աղիքներ նետել
կենդանիներին, ուստի և ինքը կարծում է, վոր դա կարևոր յեւ

...Այդին արժանացավ նորին կայսերական մեծություն մեծ իշխան Կոնստանտին Նիկոլայեվիչի այցելությանը»:

Այս մասին, թե ի շխան կոնստանտինը վոր գաղանի դնչին ե հրմշաել, այդ մասին՝ փափկան կատությունից մըդ-գած՝ վոչինչ չի առկռմ որազբամ:



ՀԱՅՈՒԹ

Պատ. խմբագիր՝ Լ. Մինասյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Գառազարյան
Սրբագրիչ՝ Խ. Այվաղյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահբաղյան

Վ. 2613

Հրատ. 5130 պատվեր 7, տիրած 3000

Հանձնված և արտադրության 1940 թ. հունվարի 7-ին

Ստորագրված և տպագրության համար 1940 թ. ապրիլի 25-ին

Գետիքատի Գոլֆուաֆ դպրոցի տպարան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0142962

16504